5	23	ուշ.	— Հց. և Հհց. Պահք:	օ	182
6	24	ուշ.	— Հց. Սրբոց Խարիթ- եանց, և սրբոց վկայիցն Արտեմեայ և Քրիստոփորի և երկուց կանանցն Կաղի- նիկեայ և Ակիւլինեայ: — Հհց. Խարիթեանց մարտի- րոսաց, և Արտեմեայ Կու- սին:	Դ	180
7	25	ուր.	— Հց. Պահք: — Հհց. Պահք և օր Խահատակու- թեան Կոմիտասայ վկային:	Վ	182
8	26	ութ.	— Հց. Սրբոց Երկուտասան վարդապետացն Ռէթէոսի, Դիինէսիսի, Սեղբեստրոսի, Աթանասի, Կիւրդի Երու- սաղէմացւոյն, Եփրեմի Խու- րին Ասորւոյ, Բարսղի Կե- սարացւոյն, Գրիգորի Նիւ- սացւոյն, Գրիգորի Աստ- ռածաբանին, Խպիփանու Կիպրացւոյն, Յովհաննու	Ա	1

L	O	73	ՇԱՊԱՆ	S	Գ	
			Ոսկեր Երանին և Կիւրդի Աղեքսանդրացւոյն: — Հց. Դեմետրեայ վկային և Բա- սիկսկոսի քահանային: — Յնի Դեմետրեայ մայիս: — Տճ. Գառը: Գառը Ֆուրեն- նուը:			
			ՑԱ. Բուժ. Ժ. 18, ր. 5:			
			Խառնակ օդ:			
			Հար. — Հց. և Հհց. Է. զինի Խաչի Գիւտ խաչ: Ե. Կիւ- րակէ եօթն շաբաթուց: Հարուանի:	Գ	Հ	
		9	27	Ք Կար. — Հց. և Հհց. Է. զինի Խաչի Գիւտ խաչ: Ե. Կիւ- րակէ եօթն շաբաթուց: Հարուանի:	Գ	Հ
		10	28	Ու. — Հց. և Հհց. Սրբոցն Ա- նաստասայ քահանային, և Վարոսի, և Թէօդօրիտեայ, և որդւոց նորա, և որոց ընդ նոռա կատարեցան:	Վ	Հ
		11	29	Գւ. — Հց. Սրբոց Հիպերիք- եանց, որք ի Սամուսատ կատարեցան, և սրբոցն Սե- ւերիանոսի Սերաստացւոյն. և Բաբելայ ծերոյն, և ութուն և չորից աշակեր- տաց նորին: — Հհց. Հիպե- րիքեանց մարտիրոսաց:	Վ	Հ
		330	Տար. Խննդ. Վիգրօր Եմ- մանուկ Գ. Թագ. Խտալիոյ:			

L	0	74	ՆՈՅԵՄԲԵՐ	S	9
12	30	ԴԵ.	— ՀԵ. և ՀԿՅ. Պահք:	15	0
13	31	ԵՎ.	— ՀԵ. Սրբոցն Յովհաննու Ոսկերերանին. — ՀԿՅ. Սե- ւերիանոսի Սերաստաց- ւոյն, և Թարելոյ ծերոյն, և ութսուն և չըրից աշա- կերտաց նորին:	15	7
					

ՆՈՅԵՄԲԵՐ

ՕՐ 30

ՏՃ. Թղթինի սանի

14	1	ԱԽՐ.	— ՀԵ. և ՀԿՅ. Պահք: —	12	7
			Ցա՛տ կողմայէ և Դադանոսէ:		
15	2	ԵՎ.	— ՀԵ. Ամենայն պրոց հնոց և նորոց, յայտից և անյայտից: — ՀԿՅ. Բարա- զամու Անտիռքացւոյն, և եօթն մանկանցն Եփեսոսի: — ՏՃ. Պերտ ի հետի:	10	8

L	0	75	ՇԱՊԱՆ	S	9
16	3	39 ⁰	Տար. Գահ. Քրիստիան թ- թագաւորին Տանիմարքայի:	17	9
		40 ⁰	ԱԿ ԿԱՐ. — ՀԵ. և ՀԿՅ. Ը. զկնի Խաչի: Զ. Կիւրակէ եօթն շարաթուց: Հ-բ-ն-նէ+:		
		61 ⁰	Տար. Մենդ. Օգոստափառ. ՍՈՒԼԹԱՆ ՀԱՍԻՖ.		
			Կայսեր Թուրքիոյ:		
		62 ⁰	ՑՂ. Լս. Ժ. 2, թ. 54.		
			Խառնակ օդ:		
17	4	63 ⁰	ԳԵ. — ՀԵ. և ՀԿՅ. Սրբոցն Վ- Ստեփանոսի Հռովմայ հայ- րապետին, և քահանայից և սարկաւագաց և ժողո- վրդոց:	18	10
		64 ⁰	ԳԵ. — ՀԵ. և ՀԿՅ. Սրբոցն Ա- կիփսիմեայ եպիսկոպոսին, և Յօվանեսի քահանային: Այիհաթալոյ սարկաւա- գին, և Պղատոնի վկոյին:	19	11
		65 ⁰	ԳԵ. — ՀԵ. և ՀԿՅ. Պահք: Տօմ. Տրէ, օր 30:	20	12
19	6	66 ⁰	ԵՎ. — ՀԵ. և ՀԿՅ. Հայրապե- տոցն Մեդրոսիանոսի, Ա- զերսանդրոսի, և Պղասի խոստովանողին. և պրոց նոտարացն Մարկիանոսի և	20	13

L	0	76	ՆՈՅԵՄԹԵՐ	S	Գ.	
			Սարտիքոնի:			
21	8	ՈՒ. — Հց. և Հհց. Պահք: — Յա՞ Սէւյուէէ հրելուուուերէն, և մասոյն երինոյին ուսբարց: — Լ.ր. Ըսկոյուառ Աբ. Ասուսուշագնի:	11	12		
0	22	9	ՇԲ. — Հց. և Հհց. Արբոց հրեշտակապետացն Գարբիելի և Միքայելի, և ամենայն երկնային զօրաց: Յայսմ. Տրէ, օր 30: — Լ.ր. Զիւլեայ իսունի:	11	10	
4	23	10	Է Ասոր. — Հց. և Հհց. թ.՝ զինի Խաչի, է. Կիւրակէ եօթն շաբաթուց: Հոբունէ:	11	11	
			ՕյԱղդիմաւորն, ժ. 15, ր. 20:			
			ՅԱ. Պուրճի Գավա:			
		110	Տար. Գահ. Վիլնելմինա Թագուհւոյն Հոլանտայի:			
24	11	ՌԵ. — Հց. և Հհց. Մելիտոսի Անտիոքայ Հայրապետին, և Մինասայ Եգիպտացւոյն, և միւս Մելիտոսի եպիսկոպոսին, Բուրայ քահա-	11	11		

L	0	77	ՇԱՊԱՆ	S	Գ.
			նային և Շինու սարկաւագին.		
25	12	ԳԵ. — Հց. Արբոցն Դեմետրեայ վկային, և Բասիլիկոսի քահանուսին: — Հհց. Յավհանուս Ուկեբերանին. — Յն. Յովհաննու զարժանին, ուս է իւրիւնու: — Լ.ր. Աստրէնիւնու:	10	11	
26	13	ԳԵ. — Հց. և Հհց. Պահք: — Յն. Յովհաննու Ուկեբերանին.	11	10	
27	1.	ԵԵ. — Հց. և Հհց. Արբոցն Գուրիփասայ, Սամունասայ, Արիւայ սարկաւագին, Ուսմանոսի միայնակեցին, Մանկան, խոստովանողի, և Հիւսիքոսի զինաւորին: Յն. Փէլոպոսի ուրիշը, Լուսութիւնուն ուրիշուն ուրիշուն: Դահոց Մանդրեան Քրիստոնէ:	11	10	
28	15	ՈՒ. — Հց. և Հհց. Պահք: — Յն. Ալլիբն աստունուրէու: Պահոց Մանդրեան Քրիստոնէ:	11	11	
29	16	ՇԲ. — Հց. Արբոց առաքելոցն Անդրէի և Փիլիպպոսի: — Հհց. Փիլիպպոսի առաքելոցն: Ա. Համիրայ, օր 30: — Յն. Մարտիրոսի ուրիշուն:	11	11	

17 * Կոր. — Հց. և Հհց. Ժ. զկնի
Խաչի, Բարեկենդան Ցիս-
նակաց. — Լ. Անդրէէ ա-
ռաւելոյն և Ա. Կիւր-իւ ք-
ւրտեն, որ է միբն իւ հասոր
պահոց Ծառեւնն Քրի-քոսէ.
● Ծն. Ա. ժ. 11, թ. 45.

Ամպամած և մերք անձրի:

18 ռէ. — Հց. և Հհց. Ա. օր պա-
հոց Ցիսնակաց. — Լ. Դէ. Քէ. բ-
րեմբէր. — Տէ. Բահուն. օր 30
— Հց. Քառուկ. օր 30.

19 գէ. — Հց. և Հհց. Բ. օր պա-
հոց Ցիսնակաց.

560 Տար. Գահ Ֆրանձ Եօզէ. Փ
Ա. Կայսեր Աւտո Հոնգարիոյ:

20 գէ. — Հց. և Հհց. Գ. օր պա-
հոց Ցիսնակաց:

21 ռէ. — Հց† և Հհց† Գ. օր պա-
հոց Ցիսնակաց. Եւ ընծա-
յունն Սբ. Աստուածածնի
ի տաճարն. Եւս Յն†.

22 ռոր. — Հց. և Հհց. Ե. օր պա-
հոց Ցիսնակաց:

23 տռ. — Հց. և Հհց. Սրբոցն
Գրիգորի Աքանչելագործին,
և Միւռոնայ եպիսկոպո-

սին. Ըմբռունոց — Լ. Դ. Նի-
շուղայուշ հայրապետին, պահո-
պահուն Նաւալուցոց. — Տէ.
Եւ քրիստոն ունչէի իւ Քուր-
թունաց:

7 24 * Կոր. — Հց. և Հհց. Ա. Ցիս-
նակաց. Հարաւանիւ. — Լ. Դ.
Սբբոյն Ա. Տբրոսիստ:

8 25 ռէ. — Հց. Սրբոց Կուսանացն
Յուլիանեալ և Վասիլուհ-
ոյ: Եւ Սրբոցն Սրբահա-
մու և Սորենայ, և անար-
ծաթ բժշկացն Կողմայի և
Պամիանոսի, և Աստուա-
ծատոյ վկային. — Հհց.
Սրբոց Կուսանացն Յուլիան-
եայ և Վասիլուհոյ: — Յն.
Ներուստիւայ Խոսկին. — Լ. Դ.
Յու-թիւն Սբ. Աստուածած-
նի, Աննայի:

● Ա. Թ. ժ. 11, թ. 1.

Հողմ և անձրի:

9 26 գէ. — Հց. Սրբոցն Ղունկիա-
նոսի քահանային, և սրբոցն
Տարագոսի, Պրոլոսի, Անդ-
րոնիկոսի, Անեսիմայ, և այ-
լոց աշակերտացն առաքե-
լոյն Պօղոսի. — Հհց. Սրբոց
առաքելոցն Յակոբայ և

L	O	80	ՆՈՅԵՄԲԵՐ	S	Գ
			Շմաւոնի:		
10	27	ԳԵ. — ՀԵ. և ՀԿ. Պահ:		10	22
		37 ⁰ Տար. Գահ. Լեօրօլիթ.			
		Թագ. Պէլճիզայի:			
11	28	ԵԵ. — ՀԵ. և ՀԿ. Սրբոցն կղե- մայ հայրապետին, և Բա- գարատայ Տոռոմենայ ե- պիսկոպոսին.		11	22
12	29	ՈՒԲ. — ՀԵ. և ՀԿ. Պահք:		12	20
13	30	Ճ. — ՀԵ† Սրբոց առաքե- լոցն և առաջին լուսաւոր- չացն Թադէոսի և Բարդու- ղիմէոսի. — ՀԿ. Անդրեի առաքելոյն, և Յն. — Լ.ր. Լուլոյ Խոսքին, պաշտոնին է շահագ աւա:		13	16
					

L	O	S	Գ
			
		ԴԵԿՏԵՄԲԵՐ	
		ՕՐ 31	
		ՏՃ. Քեանունի կվկել	
14	1	Ք ԿԱՐ. — ՀԵ. և ՀԿ. Բ. Յիս- նակաց. Հաբունէի: — ՅՆ Նաւումայ Տոբէրէին:	14 27
15	2	ՊԵ. — ՀԵ. և ՀԿ. Սրբոցն Գե- նարիսոսի եպիսկոպոսին, և Մերկերիսոսի զինաւորին, և սրբոցն Յակովկայ և Իրա- ւափառայ: — ՅՆ. Ա.ք- իւմայ Տոբէրէին:	15 28
		Ց Լր. Խ. Ժ. 13, ր. 30: Ցուրտ և խոնա:	
16	3	ԳԵ. — ՀԵ. Մինասայ, Երմա- գինեայ և Գրաբրոսի, և Կա- մաւոր աղքատացն Յով- հաննու, և Ալեքսիանոսի: — ՀԿ. Սրբոց առաքելոցն	16 29

- Բարթուղիմէսսի և Յու-
դայի, — Յն. Սովորէայ Հոբ-
էւէին:
- 17 4 Դւ. — Հց. և Հհց. Պահք: — 17 չ.
- 18 5 Եւ. — Հց. և Հհց. Սրբոց հարցն 17 չ।
- 19 6 Ուր. — Հց. և Հհց. Պահք: Տօմ. 19 չ:
- Քաղզց, օր 30: — Յնէն նէլու-
զայտ հայրապետէն ուշու-
պանին, Նեղսսի, Արտենի, Ար-
միսնու, Գառնիէլի, Արա-
պիսնի, Մարկարիսսի, Պի-
մենի, և այլոց սրբոց հարց:
— Յն. Հօն Սոբայ:
- Տօն անուան նիջօլա Բ.
Կայսեր Ռուսիոյ:
- 20 7 Եր. — Հց. և Հհց. Նիկողա- 1. 17
- յոսի Զմիւռնացւոյ սքան-
չելագործ Հայրապետին:
- 21 8 ✳ Ուր. — Հց. և Հհց. Գ. Յիս- 1. 17
- նակաց, Բարեկենդան Աբ.
Յակոբայ: — Լ. Թումայ:
- 22 9 Ուր. — Հց. և Հհց. Պահք, Եւ 17 10

- Յղնթիւն, Աբ. Աստուա-
ծածնի, յԱննայէ, Եւս Յնէ:
Յայսմ. Քաղզց, օր 30:
- Ը Վր. Թո. Ժ. 11, ր. 7:
Զիւնարեր հոդմունք:
- 23 10 Գւ. — Հց. Պահք: Սրբոցն 17 չ
- Կուռնելիսսի Հարիւրապե-
տին, և Շմաւոնի ազգակա-
նին Քրիստոսի, և Պողկար-
պոսի Հայրապետին Զմիւռ-
նիոյ, և սրբոց վկայիցն՝ որք
յարեւելս կատարեցան: —
Հհց. Պահք: Մինասայ, Եր-
մոդինեայ, և Գրաբոսի, և
Կամաւոր աղքատացն Յով-
հաննու և Ալեքսիաննո-
սի: — Զմիւռնամուր և որէ-
ուրուց Այժմզիք. Եթէնէ
լուկ եւըւէլ և էնչիք իւր-
ճանուլ: — Տչ. Էկէւէտ ու-
ռիւն. Աէւին +-----+
-----+ մասնացւոյ Խոսին յան-
դուն, որ է էպու էւլ Ափա-
ռեսէդու ֆուրբունուց:
- Ը յԱյծեղիւրմ, Ժ. 13, ր. 56:
ՏԱ. Պուրմի ձեսի:
- 24 11 Դւ. — Հց. և Հհց. Պահք: 17 չ
- 25 12 Եւ. — Հց. և Հհց. Պահք: 17 չ

L	O	84	ԴԵԿՏԵՄԲԵՐ	S	Գ.
			Եւստրատիոսի, Օգոստիսիսի, Եւգինէսի, Ալբրետսեսի և Մարգարիտիսի — ՅՆԴ Սպէքտանէ Եղիշողովնի: — Լ.ր. Մեսունդ Տէտէն Յիսուսի: — Հ.ը. Խուսութիւ, որ է Գուն Ռէլ Պայրացւ:		
26	13	ՈՒՐ. — Հ.ց. և Հ.հ. Պահք: — Հ.ր. և Հ.հ. Սուխումի հայոցին:	17	29	
		57 ⁰ Տար. Մննդ. Խօրկիսո Ա. Թագ. Ցունաստանի:			
27	14	ՏՐ. — Հ.ց. և Հ.հ. Սրբոցն Յա- կոբայ Մծրնայ Հայրապե- տին, Մարուգէի ճգնաւո րին, և Մելիտոսի եպիսկո- պոսին: — Լ.ր. Յահանա- ներանին: — Տ.հ. Գառըւ է էնեւէ:	18	0.	
28	15	Հ ԿՈՐ. — Հ.ց. և Հ.հ. Պ. Յիսու- նակաց: — Լ.ր. Մանիսան: Բիթլինդէր:	18	01	
29	16	ՈՉ. — Հ.ց. Սրբոց Հայրապե- տացն Իգնատիոսի և Աղ- դէի, և Մարութայի եպիս- կոպոսին: — Հ.հ. Իգնատիո- սի Աստուածազգեաց Հայ- րապետին. Ա.Աղամ. օր 30:	19	02	
30	17	Գ.Չ. — Հ.ց. Թէոփոմպայ եպիս- կոպոսին, և Թէոմիսայ վկա-	19	02	

L	O	85	ՇԵՎՎԱԼ	S	Գ.
			Ա. և չորից զինուորացն, Բաստի, Եւսեբի, Եւտիքի, և Բասիլիդեայ. և ՀՀ. ո- րոց և բարեկենդան ծնընդ- եանն Քրիստոսի: — Յ. Դա- նէլէ: և Տոբէ-բէնի: — Տ.հ. Ա- րէնէ:		
			Ց ԾԱ. ԼԱ. Ժ. 6, թ. 45:		
			Խոնաւ և ցուրտ:		
31	18	Դ.Տ. — Հ.ց. Պահք: — Հ.հ. Ա. օր պահոց Մննդեան: — Լ.ր. Սեղբէորուսէ Հումայ, հայրա- ութին: — Տ.հ. Շեւլը, օր 30 և Եւելը Պահուաց, օր 3: — Հ.ը. Թէբէլը, օր 29:	18	02	
	19	Ե.Տ. — Հ.ց. Կուսանացն Խնդո- սի և Կոմնայի, և Գղերիկո- սի քահանային, և Երկուց ըեւրօւցն՝ որք այլեցան յե- կեղեցին Նիկոմիդացւոց: — Հ.հ. Բ. օր պահոց Մննդ: — Լ.ր. Յանաւոր, և բարեմու- թ 1903 բաւանին Քրիստոսէ, և ուս ուսքին Եւելան Տէտէն:	19	00	
	20	ՈՒՐ. — Հ.ց. Պահք: — Հ.հ. Պ. օր պահոց Մննդեան:	20	02	
3	21	Ե.Տ. — Հ.ց. Խախավկայ և ի Քրիստոս Հաւատացեալ	21	07	

L	0	86	ԴԵԿԱՑԵՄԲԵՐ	S	Գ.
			անդրանիկ թագաւորին սրբոյն Սքարուու: — Հհց. Գ. օր պահոց Ծննդեան: Եւ Աղդէի հայրապետին և Սք- գարու թագաւորին:		
4	22	Ք ԿԱՐ. — Հց. Ե. Յիսոնակաց: — Հհց. Ե. օր պահոց Ծննդ:	0	08	
5	23	ԱՇ. — Հց. Սրբոցն Դաւթի մարգարէին, և Յակոբայ պատաքելոյն. ևս Հհց. օրոց և Զ. օր պահոց Ծննդեան.	7	09	
6	24	ԱՇ. — Հց. Սրբոցն Ստեփա- նոսի նախասարկաւագին և առաջին մարտիրոսին: — Հհց. Ճրագալոյց Ծննդեան Քրիստոսի: — Լ.ր. Յայտ- նութեան Տեսան:	7	10	
7	25	ԱՇ. — Հց. Պահք: — Հհց. † Ծնունդ Տեառն Յիսուսի Քրիստոսի ուտիք է ութօր աղլնդ հատ: — Յն† Ծննդեան Տեառն. ուրիշ է նոցա մն- չեալու Յանաւար:	8	11	
		❸ Առ. Քռ. Ժ. 1, ր. 45:			
		Օրտաշունչ հոդմունք:			
8	26	ԱՇ. — Հց. Սրբոց առաքելոցն Պետրոսի և Պօղոսի: — Հհց. Բ. օր Ծննդեան. Եւ	9	12	

L	0	87	ԵՒՎՎԱԼ	S	Գ.
			Ստեփանոսի նախավկային:		
	9	27	ՈՒՐ. — Հց. Պահք: — Հհց. Գ. օր Ծննդեան: — Յն. Գ. օր Ծննդեան: Եւ Սրբաւագնի նախույզն:	10	12
3	10	28	ԵՐ. — Հց. Սրբոց որդւացն որոտման Յակոբայ առա- քելոյն, և Յովհաննու ա- ւետարանչին: — Հհց. Գ. օր Ծննդեան: Եւ գիշաւոր առաքելոցն Պետրոսի և Պօ- ղոսի:	11	13
	11	29	Ք ԿԱՐ. — Հց. Զ. Յիսոնակաց: Բարեկենդան պհց. Ծննդ- եան: — Հհց. Ե. օր Ծննդ:	12	10
	12	30	ԱՇ. — Հց. Ա. օր պահոց Ծննդ: — Հհց. Զ. օր Ծննդեան: Եւ որդւացն որոտման Յակո- բայ առաքելոյն, և Յով- հաննու աւետարանչին:	13	11
	13	31	ԱՇ. — Հց. Բ. օր պհց. Ծննդ: — Հհց. Է. օր Ծննդեան: ⑧ Լր. Ղս. Ժ. 23, ր. 18. Զիւս և անձրեւ.	14	12

Հայոց	Հրովարտ.	ՏԱՐԿԱՅՑ	ԱԶԱՐԴԱՅԻ	ՀՐԷՒԹԻ
Նաւասարդ	30 Յննուար	31 Քեան. սանի	Շամա	30 Թօրի
Հոռի	30 Փետր.	28, 29 Եռոպաք	Աղամ	30 Խէտու. 29, 30
Սահմի	30 Մարտ	31 Մարք	Եբաք	30 Քաստիւ. 29, 30
Տրէ	30 Ապրիլ	30 Նիուան	Նախայ	30 Թէրէք
Քարոց	30 Մայիս	31 Մայիս	Ղամար	30 Մէբար
Արաց	30 Յունիս	30 Հազիրան	Նարար	30 Աղար
Մենեկան	30 Յուլիս	31 Թէմու զ.	Թիրայ	30 Վէ աղար
Արեգ	30 Օգոստոս	31 Աղօստոս	Դամայ	30 Նիսան
Ամիսկան	30 Սեպտեմ.	30 Իուլ.	Համիրայ	30 Խոսու
Մարտի	30 Հոկտեմ.	31 Թօրիմի էվկլէ	Արամ	30 Միկան
Մարգար	30 Նոյեմբեր	30 Թօրիմի սանի	Ուղան	30 Թօմանուզ
Հրութից	30 Դեկտեմբեր	31 Քեան. էվկլէ	Նիրճ.	30 Ար.
Ալեքսազ	5, 6		Աւելաց	5 իլու

Ճ.Ա.ՄԱ.ՆԱ.ԿԱ.ԳՐՈՒԹ.ԻՒՆՔ

ԵՐԵՒԵԼԻ ԱՆՁԻՑ ԻՆՉ ԱՇԽԱԲՀԵ

- ի ստեղծմանէ աշխարհի մինչեւ 7327
 ցայծմ են ամֆ 5065
 ի ջրինդեղէ 3542
 ի զիւտյ ապակոյ 3146
 ի շինութենէ Բիւ զանդիոն բաղի 1902
 ի ծննդենէ Քրիստոսի 1854
 ի նահատակութենէ Թաղէոսի առաքելոցն եւ Սանհիսոյ կուսին 1645
 ի ծննդենէ Ս.Գրիգոր Լուսաւորչի 1599
 ի լուսաւորութենէ Հայոց ի ձեռն Գրիգորի Լուսաւորչի 1558
 ի շինութենէ Ս. Էջմիածնի, ուր հաստեալ կայ Հայրապետութիւն ամենայն Հայոց 1577
 ի տիեզերական ժողովոյն Նիկիոյ 1575
 ի զիւտյ Խաչին Քրիստոսի լեռուսպէմ ի Հեղինեայ բազումնոյ 1573
 ի շինութենէ Կ. Պոլսոյ 1521
 ի տիեզերական ժողովոյն Կ. Պոլսոյ 1466
 ի զիւտյ Հայերէն այրութենից ի ձեռն Մեւրապայ 1471
 ի տիեզերական ժողովոյն Եփեսոսի 1466
 ի բարգմանութենէ Ալսուածաւունց գրոց ի Հայ 1351
 ի շինութենէ տոմարին Հայոց 1249

ի սկզբաւորութենէ հզօր քազա-	
ւորութեանն Օսմանեանց ի Սուլ-	
րան Օսմանայ Առաջնոյ ։	602
ի գիւտոյ կողմնացուցին ։	601
ի գիւտոյ վառօդին ։	574
ի գիւտոյ թնդանօդին ։	523
ի գիւտոյ սպազր. ի գերմանիա ։	463
ի տիրելոյ Օսմանեանց ւ. Պոլսոյ ի	
Սուլթան Մթէնէմէտ Բ. է ։	450
ի գիւտոյ Ամերիկայի ։	411
ի գիւտոյ անուանոր ժամացուցի ։	402
ի գիւտոյ ողբեարձ մեթենայից ։	213
ի գրիտոյ օդապարիկ զնույն ։	121
ի գրիտոյ նշանացի նեռագրին ։	111
ի գրիտոյ ողբենաւին ի Ֆրանսա ։	108
ի գրիտոյ պատուասի մարմնոյ ։	105
ի գրիտոյ վիմագրութեան ։	101
ի հաստատութենէ Ս. Փրկչի Ազգ.	
Հիւանդ. Հայոց որ է յեթիզուլէ	
Պէզնեան Յարութիւն Ամիրայէ ։	73
ի մահուանէ Պէզնեան Յարութիւն	
Ամիրայի ։	
ի հաստատութենէ Բարանքինայի ։	69
ի գիւտոյ լրասնկարի ։	65
ի հաստատութենէ Օսմանեան օրէնս-	
դրութեան ի Կիւլիանէ ։	64
ի գիւտոյ Ելեքսր. նեռագրութեան ։	54
ի բացմանն պարանոցին Սիւէիչ ։	34
ի բացմանն Արեւելեան Արքանոցին	
ի Պրուսա ։	
ի բացմանն պարանոցին Կունքոսի ։	10

ԱՐԴԻՇԱԾՈՒՅԹ

ՑԵՆՏՐԱԿԱՐՈՒՅԹ

ՆԱՐԱԿԱՏԱՐԱ

ՆԱՐԱԿԱՏԱՐԱ

ՕՍՄԱՆԵԱՆ
ԿԱՑՍՐՈՒԹԻՒՆ

ՍՈՒԼ.Թ.Ա.Ն.Վ.

ՕՍՄԱՆԵԱՆ ՀԱՐՍՈՒԹԵԱՆ

Թ.Ա.Ն.Վ. Հ.Հ.Հ.Վ.Վ.
Հ.Հ.Հ.Հ.Վ.Վ.Վ.

- | | | |
|-------------------------------|------|------|
| 1. Սուլթան Օսման Ա. Ղազի | 699 | 1299 |
| 2. Սուլթան Օրխան Ա. Ղազի | 726 | 1327 |
| 3. Սուլթան Մուրաս Ա. Ղազի | 761 | 1360 |
| 4. Սուլթան Պայազիս Ա. Երլարըմ | 791 | 1389 |
| 5. Սուլթան Մէհէմմէտ Ա. Զէլէպի | 816 | 1413 |
| 6. Սուլթան Մուրաս Բ. Ղազի | 824 | 1421 |
| 7. Սուլթան Մէհէմմէտ Բ. Ֆարիհի | 855 | 1415 |
| 8. Սուլթան Պայազիս Բ. Ղազի | 886 | 1481 |
| 9. Սուլթան Սէլիմ Ա. Եավուզ | 918 | 1512 |
| 10. Սուլթան Միւլէյման Ա. - | 926 | 1520 |
| 11. Սուլթան Սէլիմ Բ. Ղազի | 974 | 1566 |
| 12. Սուլթան Մուրաս Գ. Ղազի | 983 | 1574 |
| 13. Սուլթան Մէհէմմէտ Գ. Ղազի | 1003 | 1595 |
| 14. Սուլթան Ահմէտ Ա. Ղազի | 1012 | 1603 |

15. Սուլբան Մուսքածա Ա.	1026	1644
16. Սուլբան Օսման Բ. Կէնճ	1028	1618
17. Սուլբան Մուրատ Դ. Ղազի	1032	1622
18. Սուլբան Խպրանիմ Ա.	1049	1640
19. Սուլբան Մէհմէմետ Դ. Ղազի	1058	1648
20. Սուլբան Միւլեյման Բ.	1099	1687
21. Սուլբան Ահմէտ Բ.	1102	1691
22. Սուլբան Մուսքածա Բ.	1106	1695
23. Սուլբան Ահմէտ Գ. Ղազի	1115	1702
24. Սուլբան Մահմուտ Ա. Ղազի	1143	1730
25. Սուլբան Օսման Գ.	1168	1754
26. Սուլբան Մուսքածա Գ. Ղազի	1171	1757
27. Սուլբան Ապշիւլ Համիտ Ա. Ղազի	1187	1773
28. Սուլբան Սէլիմ Գ. Ղազի	1203	1789
29. Սուլբան Մուսքածա Դ.	1222	1807
30. Սուլբան Մուսքածա Բ. Ասիլ	1223	1808
31. Սուլբան Ապշիւլ Մէնիս Ա. Ղազի	1255	1839
32. Սուլբան Ապշիւլ-Ազիդ Ա.	1277	1761



Ո Ռ Ի Լ Թ Ա Ն
ԱՊՏԻՒԽԱԼ ՀԱՄԻՏ Բ.

Խան Ղազի

ԲԱՐԵԽՆԱՄ ԻՆՔՆԱԿԱԼ

34րդ Կայսր Օսմանեան հարսութեան եւ 28րդ Կայսր յառանեկ Կոստանդնուպոլսոյ, որդի Սուլբան Ապշիւլ Մէնիս Խանի, ծնեալ ի 16 Շապան 1258 (10/22 Սեպտեմբեր 1846), գահակալէ ի 11 Շապան 1293 (19/31 Օգոստոս 1876):

ԱԽԳԱՆԻ ԿԱՅՍԵՐԱԿԱՆ ՊԱԼԱՏԱՆ

ՄԵծ ներքինապես (Տար-իւս-ստատէր իւ ո էկ-
րիմէ աղասը) — **ՀԱՅԻ Ա.Պ.Ա.**

Առաջին սենեկապես (Մէր զուրէնայր նազրէրը
Շենրիեարի) — **ՀԱՅԻ Ա.Լ.Ի. Պ.Է.**

ԵՎԼՈՐԴ ՍԵՆԵԿԱՊԵՏ — **ՆՈՒՐԻ ՓԱՇԱ.**

Առաջին Բարուդար (Մասէյնը Հիւմայուն
պաշ Ռեաթիպի) — **ՀԱՍԱՆ ԹԱԶՄԻՆ Պ.Է.**

ՄԵծ արարողապես եւ կայս. բարգման (Թէ-
րիմաքը ու մումիյէ նազրը վէ Տիվանը Հիւ-
մայուն թէրնիմանը) — **ԻՊՐԱՀԻՄ Պ.Է.**

Առաջին թիկնապահ (Տօմաս վէ Մէր եավէրը
Հազրէրի Շենրիեարի) — **ՄԻՀԱՆ ՓԱՇԱ.**

Բ. Թիկնապահ (Մայէրի Շահանէ էրթեանի
հարավիյէ միւսիրի) — **ՇԱ.ՔԻՐ ՓԱՇԱ.**

Առաջին Աղօրասաց (Խմամր ելիլէլ Հազրէրի
Շենրիեարի) — **ՌԱ.ՇԻՏ Է.ՅԱ.ՆՏԻ.**

Նախարար Կայսերական զանձուն (Խազինէի
Խասսահ Շահանէ նազրը) — **ՍԱ.Գ.Ջ. ՅՈՎ-
ՀԱՆՆԵՍ Է.ՅԱ.ՆՏԻ.**

Մատակարար Կայսերական բնանեաց (Հա-
րէմը Հիւմայուն մէսարիմը նազրը եւ լն.)
— **ՀԱՅԻ Ա.Ք.Ի. Է.ՅԱ.ՆՏԻ.**

Հրամանատար պալատականաց եւ նուազա-
ծուաց պալատան (Խատէմէի խասսա վէ Միւ-
զիայի Հիւմայուն մէրիի) — **ՍԻՒԼ.ԷՄԱՆ
ՓԱՇԱ.**

Բժշկապետ Կայսեր (Մէր բապիպը Հազրէրի
Շենրիեարի) — **ՄԱՎ.Ք.ՅՈՒ.Է. ՓԱՇԱ.**

Ախոռապետ Արքունի (Սրապլը ամիրէ միւտի-
րի) — **ՖԱ.Գ. ՓԱՇԱ.**

ՆԱԽԱՐԱՐ ԲԱՐՁՐԱԳՈՑՆ ԴՐԱՆ

ՄԵծ եպարքոս [Սատրապան] — **ԽՈՎ.Ի. ՌԻ-
Ա.Թ ՓԱՇԱ.**

Կրօնապետ [Շէլս-իւլ-Խոլան] — **Ա.ՄԱՆ.Է-
ՏԻ. Է.ՅԱ.ՆՏԻ.**

Նախարար Արդուրութեանց եւ Կրօնից [Ասլիյէ
վէ Մէզահիպ նազրը] — **Ա.ՊՏԻ.Խ. ԸԱ.ՀՄԱՆ
ՓԱՇԱ.**

Սպարապետ [Մէրասէր] — **Ռ.ՀԱ. ՓԱՇԱ.**

Նախարար Ծովային զործոց [Պահիյէ նազր-
ը] — **ՀԱՍԱՆ ՀԻՒԾՆԻ ՓԱՇԱ.**

Նախազան Պետական Խորհրդոյ [Շուրայի Տեօփ
լէր բէխի] — սԱՅԻ ՓԱԾՈՒ

Նախարար Արտաքին գործոց [Խարիճիկ նազ-
գրը] — ԹԻՎՅԻԳ ՓԱԾՈՒ

Նախարար Ներքին գործոց [Տախիլիկ նազ-
գրը] — ՄԻՄՏՈՒՀ ՓԱԾՈՒ

Վերատեսուչ Թնդանօրաթանի [Թօփիանէ միւ-
շիրի] — ԶԵՐԻ ՓԱԾՈՒ

Նախարար Կրօնապատկան կայուածոց [Էվգա-
ժը Հիւմայուն նազգրը] — ՂԱԼԻԿ ՓԱԾՈՒ

Փոխ-նախարար Հանրային կրութեան [Մէա-
րիմ նազգրը վէֆիլի] — ԶԻՒՀԵՒ ՓԱԾՈՒ

Նախարար Առեւտական և Հանրօգուտ սի-
նութեանց [Թինարէր վէ նամա՛ա նազգրը]
— ԶԻՒՀԵՒ ՓԱԾՈՒ

Նախարար Ենթամական գործոց [Մալիյէ նա-
զգրը] — ԶԻՒՀԵՒ ՓԱԾՈՒ

Խորհրդական Եպարքութեան [Միութեար-
Մատը Ալի] — ԹԻՎՅԻԳ ՓԱԾՈՒ

ՄԵԾ ՊԱՇՏՈՆԱՏԱՐՔ ՄԱՑՐԱՔԱՆԱԳԻՆ

Քաղաքապես Մայրաքաղաքին [Շէնիր Էմինի]

— ԲԸՏՎԱՆ ՓԱԾՈՒ

Նախարար Աստիկանութեան [Զապրիյէ նազ-
գրը] — ՏԻՎՅԻԳ ՓԱԾՈՒ

Վերատեսուչ նաւահանգստի [Լիման բէխի]

— ՍԱՄԻ ՓԱԾՈՒ

Վերատեսուչ մախատանց [Թուսումաք Էմինի]

— ՆԱԶԻՖ ՓԱԾՈՒ

Վերատեսուչ կալուածական տոմարաց [Տէժ-
քէրի Խագանի նազգրը] — ԱԼԻ ՌԻԶՈ
ՓԱԾՈՒ

Վերատեսուչ Թզբատարութեան և Հեռագրու-
թեան [Թօսրա վէ Թէլէրաք նազգրը] —
ՀԻՒՍԼԵՒՆ ՀԱՍԻԿ ՊԼԵ

Վերատեսուչ Անտառաց, Հանքաց և Երկրա-
գործութեան [Օրման վէ մատէն վէ զրաաք
նազգրը] — ՍԻԼԻՄ ՄԻՎՀԱՄԱՌ ՓԱԾՈՒ

Աստիկանապես Պէտիքբաշի [Պէտիքբաս մուհա-
մբզը վէ փօլիս միւտիրի] — ՀԱՅԻ ՀԱՍԱՆ
ՓԱԾՈՒ

Ոսիկանապես Կ. Պոլսոյ [Ստամպօլ փոլիս միւ-
սիրի] — ՄԱԶՀԱՐ ՊԼՅ:

Կառավարիչ Բերայի, [Պէյօղլու միւթէսար-
քրքր] — ՀԱՄՏԻ ՊԼՅ:

Կառավարիչ Խւսկիւտառու [Խւսկիւտար միւ-
թէսարքր] — ՀԱՄՏԻ ՊԼՅ:

Հրամանատար Զրհանկրաց [Իրժայիէ ալայր-
գօմանտանը] — ԶԷՇՆԵՒ ՓԱՇԱ:



ՀՊԱՏԱԿ ՀԱՍԱՐԱԿՈՒԹԵԱՆՑ ՊԵՏՔ
Ի Կ. ՊՈԼԻՍ

8. ԵՌԱՔԻՄ Գ., Պատրիարք Յունոց:
8. ԵՌԱՔԻ ԵՎԼԱՌԱՅ, Եկզարք Պուլարաց:
ՄՈՅԻՉ ԼԵՎԱ Ի.Ֆ., Տեղակալ Ռաբունապետին
Հրէից:



ԹՂԹԱՏԱՐՈՒԹԻՒՆ

Սովորական նամակներ. — Նամակին հաս-
ցէն շատ յատակ եւ մեխանով պէտք է զրել, հա-
կառակ պարագային Թղթատարութիւնը կը վե-
րադարձնէ նամակը, եթէ դրկողին հասցէն պա-
հարանին ճակատը կամ ետին զրուած է:

Թղթատարական միութեան [Իրթէհ-թ, Ա-
նիոն postale] մէջ զանուող երկիրներուն հա-
մար 15 կռամ կամ աւելի պակաս կշռող նամակի
մը վրայ պէտք է զնել 1 դրոշի Թղթադրոշմ. 15
կռամէն աւելի կշռող նամակներուն վրայ, իւ-
րաքանչիւր 15 կռամի քանակութեան համար,
պէտք է աւելցնել 1 դրոշի Թղթադրոշմ. Այսպէս
է Թուրքիոյ ներքին Թղթատարութիւնն ալ: Թա-
ցառիկ են նաւահանգիստները, այս պարագային
20 փարայի Թղթադրոշմ միայն պէտք է փակցնել:

Առանց դրոշմի յանձնուած նամակները Թղ-
թատարութիւնը տեղը կը հասցնէ եւ ընդունողը
կը հարկադրուի կրկինը վճարել. եւ եթէ դրուած

Թղթադրումը պէտք եղածէն պակաս է, պակաս
մասին միայն կրկնը կը վճարէ:

Թղթատարական քարտեր [Cartes postales]. — Պարզ Թղթատարական քարտի մը
զին է 20 փարա, իսկ վճարեալ պատասխանով
Թղթատարական քարտերու զինը 1 դրուշ:

Վաճառքի նմոյշներ [Երբառք բեռնա-
րէ, և նիւթանեւերէ, échantillons des marchan-
dises]. — Վաճառքի նմոյշ են սպանքի մը
փոքրիկ մասերն որոնք չեն կրնար ինքնին
առուտուրի առարկայ ըլլալ իրենց փոքր բանա-
կութեան պատճառաւ, Հեղուկներն ալ, ինչպէս
իւղերը, եւայլն, կրնան դրկուիլ իրը նմոյշ, ի
բաց առեալ Ռուսիա, Պարսկաստան, Ամերիկա,
Մեծն Բրիտանիա:

Թղթատարական Միութեան համար 1 կուա-
մէն մինչեւ 100 կուամ ծանրութիւն ունեցող գա-
նառքի նմոյշներէն կ'առնուի 20 փարա, եւ 100
կուամէն վեր իւրաքանչիւր 50 կուամի համար
10 փարա, եթէ նմոյշին ծանրութիւնը 350 կուա-
մէ, կամ 30 սանդիմէդր երկայնութենէ, 20 սան-
դիմէդր լայնքէ եւ 10 սանդիմէդր Թանձրութենէ
աւելի ըլլայ, կը մերժուի: Թուրքիոյ մէջ վա-

հառքի նմոյշներուն համար նոյն բանն է, սա
տարրերութեամբ որ մինչեւ 2000 կուամ կ'ըն-
դունուին, Ծովեզերեայ քաղաքներուն համար
անձնիւր 75 կուամի համար 10 փարա աւելի
կ'առնուի, փոխանակ 50 կուամի: Եթէ նմոյշին
ծանրութիւնը 250 կուամը անցնի, անձնիւր 50
կուամի համար 20 փարա կ'առնուի մինչեւ 2
բիլոկրամ:

Տպագիրներ [Երբառք բեռնա-
րէ, imprimés]

— Ինչպէս լուսպիրներ եւ պարբերականներ,
կազմուած կամ անկազմ զիրքեր, տետրակներ,
երածշտական հատուածներ, այցաքարտեր,
տպագրուկան փորձեր [ձեռագրով կամ առանց
ձեռագրի], վիմագրութիւններ, լուսանկարներ,
պատկերներ, գծագրութիւններ, յատակագիծեր,
աշխարհագրական բարտէսներ, ցուցակներ, զա-
նագան ազդեց, եւ ընդհանուր բոլոր ինչ որ
տպագրուած է:

Թղթատարական Միութեան մէջ գտնուող
երկիրներուն համար 50 կուամ կամ աւելի պա-
կաս կշռող տպագիրներուն կը վճարուի 10 փա-
րա, իսկ 50 կուամէ աւելի կշռող տպագիրներուն
իւրաքանչիւր 50 կուամի համար 10 ական փարա
աւելի: Նոյնպէս Թուրքիոյ ներքին Թղթատա-

բաւմեան համար իւրաքանչիւր 50 կոտամը ենթակայ է 10 փարա Թղթադրոշմի, Երբ ծրարը 30 կոտամէ պակաս կը կշռէ, 5 փարա միայն կը վճարուի, Ծովեզերեայ քաղաքներու համար անձնիւր 75 կոտամի 10 փարա կ'առնուի:

2000 կոտամէ աւելի կշռող, 45 սանդիմէդրէ աւելի երկայնութիւն, յայնութիւն կամ Խանձրութիւն ունեցող ծրարներ չեն ընդունուիր. 10 սանդիմէդր տրամագիծ եւ 75 սանդիմէդր երկայնութիւն ունեցող պլորուած տպագիրներ կ'ընդունուին:

Տպագիրներու ծրար մը պէտք չէ պարունակէ նամակ կամ ձեռագիր նօթագրութիւններ, հակառակ պարագային ետ կը դրկուի:

Գործի թուղթեր [Եւր-էւ Հուուլէն, papiers d'affaires]. — Անմիջական Թղթակցութեան մը նկարագիրը չունեցող ու եւ է Թուղթ գործի թուղը կը կոչուի, ինչպէս դատավարութեան Թուղթեր, վկայագիրներ, կալուածագիրներ, փոխանակագիրներ, բեռնագիրներ [+աւելէ Գնանօ], հաշուեցակիններ [Քանուրտ], եւայլն:

Թղթատարսկան Միութեան մէջ զտնուող երկիրներուն համար 1 կոտամէ մինչեւ 200 կոտամ կշռող ծրարներէ կը ստացուի 1 դրւչ. իսկ 200

կոտամէ աւելի կշռող ծրարները ենթակայ են տասնական փարա յաւելումի՝ ամէն 50 կոտամի յաւելման առ առաւելին 2000 կոտամ կշռող ծրարներ միայն կ'ընդունուին: Թուղթիոյ ներքին Թղթատարութեան համար եւս նոյն բանն է:

Ծրարները նամակ կամ նօթագրութիւն պէտք չէ պարունակէ. Նոյնպէս ծրարներու ծանրութեան եւ ընդարձակութեան պայմանները տպագիրներու յար եւ նման են:

Սովորական նամակներու, վաճառքի նմոյշ-ներու, տպագրական եւ գործի Թուղթի ծրարներու վրայ եթէ Թղթագրոշմ դրուած չէ, չեն դըրկուիր. իսկ եթէ պակաս դրուած, կը դրկուին եւ պակասին կրկինը կ'առնուի ընդունողէն:

Թանկագին նիւթեր. — Արգիլուած է Թղթատարի յանձնել մաքու չվճարուած Թանկագին նիւթեր, եւայլն:

Դրամի և արժեքաւոր նիւթերու փոխադրութիւն. — Թղթատարական միութեան մէջ զտնուած երկիրներուն համար օտանեան Թղթատարութիւնը չընդունիր աւանդ [Եմանեն], ոչ ալ մոնտա-րոսդ:

Թուղթիոյ ներքին Թղթատարութեան մէջ ընդունուած է զրամի եւ արժեքաւոր նիւթերու

փոխաղբաւթիւնը աւանդի ձեւին տակ։ Այս պարագային Թղթատարական վարչութիւնը կը ստանայ Թանկացին նիւթերու համար արժէքին համաձայն սակագին մը, իսկ հասարակ նիւթերու համար ծանրութեան չափով սակագին մը։ Այս սակագինը հինգ աստիճան է, հեռաւորութեան հինգ շրջանակներու համաձայն՝ որոնք հետեւեալներն են։

Ա. Շրջանակ. — Կ. Պոլիս եւ շրջակաները. կը վճարուի արժէքաւոր նիւթերու համար, 1էն 1000 դրուշի՝ $2\frac{1}{2}$. 1000էն 2000՝ 5 դրուշ, եւ ամէն հազար դրուշի՝ $2\frac{1}{2}$, դրուշ։ Ծանրութիւն ունեցող նիւթերու համար 1էն 500 կրամի՝ $2\frac{1}{2}$, եւ 501էն 1000կրամի 5, եւ ամէն 500 կրամի $2\frac{1}{2}$ դրուշ։

Բ. Շրջանակ. — Պրուսա, Գասթէմունի, Այտլն, Ատանա, Ճէպէլի-Լիպնան, Հալէպ, Գօնիս, Շքոտրա, Կարմիր Ծովի եզերքներ, Պէնկազի, Պիղա, Արշիպեղազոսի կղզիներ։ Այս պայրերը կը փոխադրուին արժէքաւոր նիւթեր։ 1էն 250 դրուշ՝ $2\frac{1}{2}$, 251էն 500՝ 3, 501էն 1000՝ 7 զշի. ասկէ վեր հազարներու համար իւրաքանչիւրին վրայ կ'աւելնայ $3\frac{1}{2}$ դրուշ։ Ծանրութիւն ունեցող նիւթեր. 1է 100 կրամ՝ $2\frac{1}{2}$, 101էն 250 կրամ՝ 3, 251էն 500՝ 4, եւ 501էն 1000 կրամ։

7 դրուշի եւ իւրաքանչիւր 500 կրամի՝ $3\frac{1}{2}$, 72-ի յաւելում։

Գ. Շրջանակ. — Դամասկոս, Էրզրում, Հինգապարէ, Սըլվազ, Գոսովա, Մանասթըր, Եէմէն, Տիարպէքիր, Խարբերդ, Արժէք. 1էն 250 դրուշ՝ 3, 251էն 500՝ 4, 501էն 1000՝ 6 դրուշի եւ իւրաքանչիւր 1000ի վրայ 5 դրուշի յաւելում։ Ծանրութիւն. 1էն 100 կրամ՝ 3, 101էն 250 կրամ՝ 4, 251էն 500՝ 6, 501էն 1000՝ 10 դրուշի, եւ իւրաքանչիւր 500ի վրայ 5 դրուշի յաւելում։

Դ. Շրջանակ. — Վան, Պիթլիս, Մուսուլ։ Արժէք. 1էն 250 դրուշ՝ $3\frac{1}{2}$, 250էն 500՝ 5, 501էն 1000՝ 8 դրուշի եւ իւրաքանչիւր 1000ի վրայ $6\frac{1}{2}$ դրուշի յաւելում։ Ծանրութիւն. 1էն 100 կրամ՝ 3, 101էն 250՝ 5, 251էն 500՝ 8, 501էն 1000՝ 13 դրուշի, եւ իւրաքանչիւր 500 կրամի վրայ $6\frac{1}{2}$, դրուշ յաւելում։

Ե. Շրջանակ. — Պաղտատ, Պասրա, Արժէք. 1էն 250 կրամ՝ 4, 251էն 500՝ 6, 501էն 1000՝ 10 դրուշի, եւ իւրաքանչիւր 1000ի վրայ 8 դրուշի յաւելում։ Ծանրութիւն. 1էն 100 կրամ 4, 101էն 250՝ 6, 251էն 500՝ 10, 501էն 1000՝ 16 դրուշի, եւ իւրաքանչիւր 500ի վրայ 8 դրուշի յաւելում։ Ծովեզերեայ քաղաքները 1000ին 2

կ'առնուի, իսկ երկաթուղի բանած քաղաքները
4000ին 3 դրուշ։ Ասոնց մէջ երբէք ծանրու-
թիւնը նկատողութեան չառնուիր։

Ընդունելութեան գեկուցագիր [Բարե էլ-
լու-խոպերէ, avis de réception]. — Ընդունե-
լութեան զեկուցագիրներու, թէ Թղթատարական
Միութեան շրջանակին եւ թէ Թուրքիոյ համար,
պէտք է վճարել միօրինակ կերպով 1 դրուշ,
յանձնարարման համար վճարուած 1 դրշ էն զատ։

Յանձնարարութիւն [Թագէ-դ, recommanda-
tion]. — Յանձնարարեալ առարկաներու հա-
մար պէտք է վճարել ինչ որ պիտի վճարուէր՝
եթէ յանձնարարեալ չըլլային. յետոյ միօրինակ
կերպով պէտք է վճարել 1 դրուշ իրը յանձնա-
րարման զին։

Երբ յանձնարարեալ նամակ մը կորսուի,
երէ կը վերաբերի Թղթատարական Միութեան,
50 ֆրանք փոխարինութիւն կը վճարուի, իսկ
եթէ կը վերաբերի Թուրքիոյ ներքին Թղթատա-
րութեան՝ 200 դրուշ։

Մանտա-բոսդ. — Մանտա-բոսդի դրութիւնը
ի գործ կը դրուի Թուրքիոյ ծովեղերեայ քաղաք-

ներու, և երկաթուղոյ զիծերու վրայի քաղաք-
ներու նամակատուններուն մէջ, Ղրկողին տըր-
ուելիք ստացագրին վրայ 10 փարանոց դրոշմա-
թուղթ կը փակցուի. իսկ մանտա-բոսդերը եւ ա-
նոնց յարակից Թուղթերը զերծ են դրոշմաթուղ-
թէ, երկու հազար դրուշէն աւելի գումարի
համար մանտա-բոսդ չի տրուիր։ Մինչև 100
դրուշի համար 20 փարա վարձք կ'առնուի։ Իւ-
րաքանչիւր 100 դրուշէն 20 փարայի հաշուող՝
500 դրուշէն 100 փարա կ'առնուի. իսկ 500էն
մինչև 1900 դրուշ, իւրաքանչիւր 200ին բանա-
կան փարա կ'աւելցուի, որով 1900էն մինչև
2000 դրուշ՝ վարձքը կ'ըլլայ վեցուկէս դրուշ։

Արժեքը յայտարարուած պարունակու-
թեամբ նամակներ [Գւահէ-թէ Խո-դա-րութէրէէ Ք-է-թ-է-թէ-պ]. — Ծովեղերեայ և երկաթուղոյ զի-
ծերուն վրայ գտնուող քաղաքներու նամակա-
տուններուն համար իւրաքանչիւր նամակի պա-
րունակութիւնը 50000 դրուշէն աւելի չըլլալու
պայմանաւ [օսմ. ոսկին 100 դրուշի հաշուող],
պանքնօթներ, արժէ, Թուղթեր, և այս կարգի ար-
ժէքաւոր Թուղթեր պարունակող նամակներ կ'ըն-
դունուին, որոնց արժէքը պահարանին վրայ
Թուանշանով նշանակուած և դրկողին անձնական

կնիքովը կամ մասնաւոր նշանով մը առնուազն
հինգ տեղերէ կնքուած պէտք է ըլլան։ Այս նա-
մակներուն ծանրութեանը համեմատ Թղթադրոշմ
փակցնելէ զատ, կը վճարուի 1 դրուշ ապահովա-
գին և յայտաբարուած արժէքին իւրաքանչիւր
1000 դրուշին ու կոտորակին համար 1 դրուշ։
Երբ կորսուի, վասարուի կամ գողցուի, արժէքին
փոխարէնը Թղթատարութիւնը կը վճարէ, ի բաց
առեալ անխուսափելի սպարագաները [բեք ու է-
լուէնէ զայրէ ժապէլ էնպաղը ժուճոչէ], cas de
force majeure։ Այս մասին ըլլալիք յայտաբա-
րութիւնները առ նուազն մէկ տարուան մէջ
պէտք է տեղի ունենան, որովհետև անկէ ետքը
նկատողութեան չեն առնուիր։

ՀԵՌԱԳԻՐԸ

ԿԱՆՈՆՆԵՐ

ՃԵՌԱԳՐԻՆ ԺԱՄԸ. — Թուրքիոյ քաղաք-
ներուն միջն բուրք տառերով փոխանակուած
հեռագիրներուն համար, բրձական ժամը կը
գործածուի Թուրքիոյ հեռագրատուններուն
մէջ։ Խոկ միջազգային հեռագիրներուն և լա-
տին տառերով զարնուած ներքին հեռագիր-
ներուն համար՝ Կ Պոլսոյ Միջօրեկանին
ժամը կը գործածուի, որ 1 ժամ, 47 վայր-
կեան, 32 երկվայրկեան առաջ և Բարիզի Մի-
ջօրեկանին ժամէն։

ՃԵՌԱԳՐԻՆ ԱՄՍԱԹԻՒԾ. — Թուրքերէն
տառերով քաշուած հեռագիրներուն համար,
Թուրքիոյ հեռագրատունները նին տոմարը կը
գործածեն, և լատին տառերով քաշուած
հեռագիրներուն համար նոր տոմարը։

ՃԵՌԱԳՐԻՆ ԼԵԶՈՒՆ. — Միջազգային և

ներքին հեռազիրներուն համար բուրքերէնն և ֆրանսերէնն զատ կարելի է նաև հեռազրել լատին տառերով և արաբերէն, պարսկերէն, հայերէն, յունարէն, սերպերէն, ռումաներէն, պուլկարերէն, ռուսերէն, անգլիերէն, գերմաներէն, խոալերէն, սպաներէն, լատիներէն, և ուրիշ ծանօթ լեզուներու վերաբերեալ բառերով:

ՍՏՈՐԱԳՐՈՒԹԻՒՆ. — Հեռազրատուններուն յանձնուած հեռազիրները, թէ ներքին և թէ միջազգային, պէտք է սոորազրուած ըլլան. Ներքին հեռազիրները իրենց սոորաբեամբ կը գարնուին, իսկ միջազգայինները կրնան առանց սոորազրութեան զարնուիլ եթէ դրկողը այնպէս ուզէ:

ԿԱՐ ԿԱՄ ՊԱՅՄԱՆԱԴՐԱԿԱՆ ՀԱՍՑԻ. — Այն անձերը որոնք շատ հեռազիր կը ստանան կրնան դիմել իրենց գտնուած քաղաքին հեռազրատան և անոր հետ համաձայնութեամբ որոշել կամ պայմանադրսկան^{*)}

^{*)} Օրինակի համար՝ Առաքել Մարգարեանի տեղ՝ Առաքել Մարգարեանի տեղ՝ Յակմար, և այլն.

հասցէ մը ասոր համար պետք է վճարել 100 ֆրանք տարեկան, 50 ֆրանք վեցամսեայ կամ 25 ֆրանք եռամսեայ,

ՍՏՈՐԱԳՐԻՔ. — Եթէ դրկողը ուզէ, հեռազրատան կողմէն՝ հեռազրին յանձնուած ըլլալը հաստատող ստացագիր կը տրուի. Այս ստացագրին համար 1 դրշ. կ'առնուի՝ եթէ ներքին հեռազիր է, և 25 սանրիմ՝ եթէ միջազգային հեռազիր է: Այս ստացագիրը ենթակայ է 10 փարայի սովորական դրոշմատուրքի:

ՃԵՌԱԳՐԻՆ ՅԱՆՉԵՆՈՒՄԸ. — Հեռազրատան ցրուիչները ստիպուած չեն հեռազիրը յանձնել բուն իսկ այն անձին ՃԵՌԱԳՐ, որուն ուղղուած է հեռազիրը. կրնան յանձնել զայն իրեն կամ իր տունը, ազգականներուն, ծառաներու, և այլն, ստացագիր առնելով:

ՍՏԻՓՈՂԱԿԱՆ [ԱՐԳԵՆ] **ՃԵՌԱԳՐ.** — Կարելի է ստիպողական հեռազիր մը զարնել թէ միջազգային և թէ ներքին, եռապատիկ գին վճարելու: Ասոր համար հեռազրին վրայ հասցեկն առաջ պէտք է զրել Գ-Ռ-Շ-Լ ու կամ urgent բառերը.

ՊԱՏՄՈՒԱՆԸԸ ՎՃԱՐՈՒԱՆ ՀԵՌԱԳԻՐ [réponse payée]. — Հեռագիր զարնող մը կըրենայ հեռագրատան յանձնել իր սպասած պատասխանին զինը մինչև 30 քառ., և այսպէս վճարուած պատասխանով հեռագիր ստացողը կը կրնայ պատասխանել առանց ու և գումար մը վճարելու.

ՍՏԱՑՄԱՆ ԶԵԿՈՒՅՑԱԳԻՐ [ՀՀ-ՀՀ-Հ-Դ-Դ-Դ-Ե-Ե-Ե-Ե, accusé de réception]. — Երբ հեռագիր մը զարնողը ուզէ հասկնալ թէ իր զարկած հեռագիրը Երբ յանձնուած է անոր որուն ուղղուած է, կրնայ այս տեղեկութիւնը առնել հեռագրատուենեն, վճարելով 10 քառ.ի զին և հասցեն առաջ զբելով ՀՀ-ՀՀ-Հ-Դ-Դ-Ե-Ե-Ե-Ե-Ե կամ accusé de réception.

ՀԵՌԱԳԻՐ ՄԸ ԶԱՆԱԶԱՆ ՕՐԻՆԱԿՆԵՐԸ. — Երէ ուզուի մի և նոյն հեռագիրը քանի մը օրինակ ընել տալ և զանազան անձերու հադորել մէկ քաղաքի մէջ, պէտք է վճարել ներքին հեռագիրներու համար իւրաքանչիւր օրինակին (ի բաց առեալ ընագիրը), 20 քառ.ի $2\frac{1}{2}$ դրուշ, և 5 դրուշ երբ ստիպողական են.

ՀԵՌԱԳՐԱՏՈՒՆ ԶԵՂԱԾ ՏԵՂՆԲՐ. — Կարելի է հեռագիր դրկել այնպիսի տեղ մը ուր հեռագրատուն չկայ, տեղույն մերձաւորագոյն հեռագրատան ուղղելով. հոնկէ թղթատարութեան կը յանձնուի հեռագիրը և առանց ու և ծախքի կը դրկուի հասցեին. Սակայն երէ հեռագիր զարնողը պահանջէ, կարելի է մասնաւոր թղթատարի մը միջոցու հեռագիրը դրկել տալ իր հասցեին. Թուրքիոյ հեռագրատունները ստիպուած են ընդունիլ այս կարգի ներքին հեռագիրները, գանձելով հեռագիրը դրկողէն 7 դրուշ իւրաքանչիւր ծամ հեռաւորութեան համար՝ հեռագրատուենեն մինչև հեռագրին դրկուած տեղը. Այս հեռագիրներուն մէջ պէտք է նշանակուի, հասցեն առաջ, իրը մասնաւոր թղթատարի ծախք վընարուած գումարին քանակութիւնը.

ՍԱԿԱԳԻՆՆԵՐ

ՍԱԿԱԳԻՐ՝ Կ. ՊՈԼՍՈԹ ՀԱՄԱՐ. — Կոստանդնուպոլսոյ հեռագրատանց միջև փոխանակուած իւրաքանչիւր հեռագրի համար կ'առնուի 100 փարա, երբ 20 քառ.ը չ'անց-

նիր. 20 բառեն վեր իւրաքանչիւր 10 բառի
համար կ'առնուի 50 փարա.

ՆԵՐՔԻՆ ՍԱԿԱԳԻՆ. — Մինենոյն նահանգին նեռագրական կայարաններուն միջև քաշուած նեռագրի մը իւրաքանչիւր բառին համար պէտք է վճարել 20 փարա 100 փարա յաւելուածական տուրքով:

Տարբեր նահանգներու նեռագրական կայաններուն միջև քաշուած նեռագրի մը իւրաքանչիւր բառին համար պէտք է վճարել 40 փարա, 5 դրուշ յաւելուածական տուրքով.

Այս սակագինը այն նեռագիրներուն համար է, որոնք չեն անցնիր Խաղրան ընկերութեան ներքին բնդովկեայ պարաններէն զալով անոնց որոնք այդ պ սրաններէն կ'անցնին. միեւնոյն նահանգին նեռագրական կայաններու միջև՝ բառը 40 փարա է, 5 դրուշ յաւելուածական տուրքով. և տարբեր նահանգներու նեռագրական կայաններուն միջև՝ 70 փարա, $7\frac{1}{2}$ դրուշ յաւելուածական տուրքով.

Եւրոպական Թուրքիայէն և Ասիական Թուրքիայէն Արևելեան Ռումելի քաշուած նեռագիրներուն, Մուսքաֆա փաշայի ճամ-

րով. կը վճարուի 60 փարա, առանց յաւելուածան տուրքի:

Կիսլըսի հետ փոխանակուած հեռագիրներին սակագինն ենթակայ են երրորդուին Լարաքիոյ ճամրով.

Հիմազի, Ղարա Թարապլուսի և Եկմէնի նահանգներուն միջև, և այդ նահանգներուն իւրաքանչիւրին ու Թուրքիոյ միւս նահանգներուն միջև փոխանակուած նեռագիրները ենթարկուած են միջազգային սակագինն:

ՏԻԶԱԶԳԱՅԵՒՆ ՍԱԿԱԳԻՆ. — Եւրոպական և Ասիական Թուրքիոյ քաղաքներէն միջազգային զանազան երկիրներ զարնուելիք նեռագիրները ունին մասնաւոր սակագին մը. Խոկ Ամերիկայի զանազան կողմերը դրկուած նեռագիրներու սակագինները գտնելու համար հարկ է ունենալ բազմաթիւ ցուցակներ. Եւրոպական Թուրքիայէ Նիւ-Եօրք քաշուած նեռագրին գինն է, 1 Փրանք 85 սանրիմ իւրաքանչիւր բառը.

ՀՈԳԵՒՈՐ ԻՇԽԱՆԻՒԹԻՒՆՔ

ՀԱՅՐԱՊԵՏՈՒԹԻՒՆ ՀԱՅՈՑ

Տ. Տ. ՄԿՐՏԻՉ Ա.

ԽՐԻՄԵԱՆ

ԾԱՅՐԱԳՈՅՆ ՊԱՏՐԻԱՐք

ԵՒ

ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

ՊԱՏՐԻԱՐՔՈՒԹԻՒՆ Ս ԵՐՈՒՍԱՂԵՄԻ

Տ. Տ. ՅԱՐՈՒԹԻՒՆ

ՄՐԲԱՋԱՆ

ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ՎԵՀԱՊԵՏԵԱՆ

ՊԱՏՐԻԱՐք

ՊԱՏՐԻԱՐՔՈՒԹԻՒՆ ԿՈՍՏԱԴԻԱՆՈՂՈՂՈՑ

Տ. ՄԱՂԱՔԻԱ

Ս. ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ՕՐՄԱՆԵԱՆ

ՊԱՏՐԻԱՐք

ԵՒ

ՆԱԽԱԴԱՀ ԱԶԳ. ԿԵՐՊ. ՎԱՐՁՈՒԹԵԱՆ

ԱԶԳԱՅԻՆ ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆ

ԿՐՈՆԱԿԱՆ ԺՈՂՈՎ.

Գրիգորիս Արմեպ.	Յովհաննէսեան Ա. Առնաց.
Մելիքսեղեկ »	Մուրատեանց
Վահրամ Եպիսկ.	Մանկունի Բ. Առենապէս
Գաբրիէլ »	Ճէվահիրնեան
Գէորգ »	Խրիւնեան
Եղիշէ »	Դուրեան Ա. Առենադպիր
Յովսէփ »	Այլազեան Բ. Առենադպիր
Գաբրիէլ Ա. Քննյ.	Խանճեան

Խաչառուր Ա.	Քհնի.	Տէր-Գաբրիէլեան (ՀԵՏԸ)
Կարապէս	»	Սերեան
Կարապէս	»	Սանտանիեան
Ցովիաննէս	»	Շահպազեան

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԺՈՂՈՎ.

Յարութիւն Փաւա		Տատեան Ա. Ատեմապէս
Ստեփան	»	Ալյանեան Բ. Ատեմապէս
Գաբրիէլ Էժենիքի		Նորառունկեան
Գրիգոր	»	Խըրսրեան
Էլիսա	»	Զայեան Ա. Ատեմադպիշ
Տիգրան	»	Եռւաստմեսոն
Զարեհի	»	Տիլակը
Գրիգոր	»	Գարակէօնեան
Սենեներիմ	»	Մանուկեան
Միհրան	»	Սերեան Բ. Ատեմադպիշ
Կարապէս	»	Գալիամանեան
Միշտիչ	»	Ասասեան
Սեպուհ	»	Տէմիրնիպատեան
Տիգրան	»	Տէր-Ներսէսեան

ՀՈ-ՈՎՄԵԱԿԱՆ ՀԱՅ ՀԱՍԱՐԱԿՈՒԹԻՒՆ

S. ՊՕՂՈՍ ՊԵՏՐՈՍ ՃԱ.

ԷՄՄԱՆՈՒԵԼԵԱՆ

ԿԱԹՈՆԻԿՈՍ ՊԱՏՐԻԱՐք

ՏԱՆԵ ԿԻԼԻԿԻՈՆ

ԿՐՈՆԱԿԱՆ ԺՈՂՈՎ.

Կ. ՊԱՏՐԻԱՐք, Դահկերց

Ա Ն Դ Ա Մ Գ

Սահակ	ԵՎ.ր.	Ճիզմէնեան
Պօղոս	Գեր.	Գաղրիկեան
Հ. Գրիգորիս	ԵՎ.ր.	Մերնաննեան
Ցովուէփ	»	Ռոբոսեան
Ստեփան	»	Արիկեան
Արսէն	»	Եռւաստմեան
Հ. Եղիսա	Վ.րդ.	Քիմեան
Ցովուէփ	»	Արիկեան
Բառնաբաս	»	Սամաննեան
Կոմիտաս	»	Խոկէնտէրեան Առնդա.

ՎԱՐՉԱԿԱՆ ԺՈՂՈՎ.

Կ. ՊԱՏՐԻԱՐՔ, Գահերէց

ԱՆԴԱՄՔ

Պօղոս	Գեր.	Գաղրիկեան
Նիկողոս	Վ. Ռդ.	Պահմեան
Անտոն	Էմենսի	Ազնաւոր
Գրիգոր	»	Ոսկեան
Կոմիտաս	»	Բէմեզեան
Մանուէլ	»	Շաշեան
Միհրան	»	Երազեան
Ցովհաննէս	»	Գարտաշեան
Սահակ	»	Զիյրօչեան
Վ. իշեն	»	Գառապեան
Օհան	»	Փիլիպպոսեան
Կոմիտաս	Վ. Ռդ.	Խսկենտէրեան Աթենայ.

ԹՈՂՈՔԱԿԱՆ ԺՈՂՈՎՈՒՐԴ ԹՈՒՐՖԻՈՑ

Վ. Ս. ՅԱԿՈԲ Էֆ. ՊՈՅԱԶԵԱՆ

ԱԶԳԱՊԵՏ ԸՆԴՀ. ԲՈՂՈՔԱԿԱՆԱՑ ԹՈՒՐՖԻՈՑ

Կարապետ Էֆ. Սենեքերիմեան
Քարտուղար բղրակցուրեանց
Գաբրիէլ Էֆ. Միհասեան
Քարտուղար արձանագրուրեանց
Առաքել Էֆ. Կէօփիպէօյիւթեան
Գործակատար

ԱՌ-ԺԱՄԱՆԱԿԵԱՑ ՎԱՐՉԱԿԱՆ ԺՈՂՈՎ

Պատ.	Աւետիս	Ասատուրեան
Բժօժ.	Յակոբոս	Ճէնիզեան
Պատ.	Ստեփան	Զորիկեան
Արքակ	Էֆ.	Շմատոննէան
Ցովհաննէս	»	Միհասեան
Կարապետ	»	Սենեքերիմեան

ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ՀՈԳԵՒԹՈՐ ԺՈՂՈՎՆԵՐ

ՆԱՀԱՆԳԱՑԻՆ ԺՈՂՈՎ ԲԻՒԹԱՆԻՈՅ

Վեր. Ա. Կ. ԱսաՏՈՒՐԵԱՆ, Նախագահ
» Պետիկեան, Քարտուղար

ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ՄԻՈՒԹԻՒՆ

Վեր. Ք. ԵԱՋՈՒՊԵԱՆ, Նախագահ
» Ս. Պալպասինեան, Քարտուղար

ԽԱՐԹԵՐԴԻ ՄԻՈՒԹԻՒՆ

Վեր. Ա. Ս. Անդրէասեան, Նախագահ
» Ա. Թօփալեան, Քարտուղար

ԿԻԼԻԿԻՈՅ ՄԻՈՒԹԻՒՆ

Վեր. Ա. Թէրզիկեան, Նախագահ

Պրն. Հ. Աւճրեան, Քարտուղար



Մանօրութիւնք և վիճակագրական տեղեկութիւնք փակուած են՝ 1 Օգոստոս 1901.

ՅԱՌԵԼՈՒԱԾ

ՀԱՄԱՁԳԱՅԻՆ ՕՐԱՑՈՅՑԻ

ՀԱՆՐԱԴԻՑԱԿԱՆ

1902

Դ. ՊԱՂՏԱՍԱՐԵԱՆ



Անգլիացի Լօրտ մը իրլանտայէն Անգլիա պիտի երթար . նաւէն վեր ելած ատեն , սանգուխը կոտրեցաւ իւ ինք նաւակն իյնալով սրունք կոտրեցաւ : Լաւ եղաւ , ըսաւ նա . ամէն բան իմ օգտիս համար է : Բարեկամներն հարցուցին թէ ի՞նչպէս կրնայ այնպէս խորհիլ , քանի որ ոչ թէ սրունք ջախջախեցաւ , հապանաեւ կարեւոր ճանապարհորդութենէ մը ետ մնալ պարտաւորեցաւ : Նախախնամութիւն մեզմէ լաւ զիտէ , ըսաւ Լօրտը . ստոյգ եմ որ իմ բարոյս համար եղաւ այս : Լօրտը տուն տարուեցաւ . նաւը ճամբայ ելաւ . բայց ալեկոծութեան մը բռնուելով ընկղմեցաւ . միայն մէկ նաւասարի ազատեցաւ :

Ճանապարհորդ մը անտառէն անցնելու վրայ էր, երբ յանկարծ հիւանդացաւ եւ պարտաւորեցաւ մերձակայ խրճիթը մանել եւ հոն կենալ: Թէ եւ ցաւ զգաց որ գործը ետ մնաց, սակայն չէր տարակուսեր որ Աստուածի մասունքն նպատակ մ'ունէր այս յանկարծական հիւանդութիւն խրկելով:

Երեկոյ եղաւ, արեւը մար մանելու վրայ էր, երբ ծերուկ մուրացիկ մը խրճիթին դուռը զարնելով ողորմութիւն մը կը խնդրէր հիւանդէն: Երբ դրամը ստացաւ ծերուկն, ըստւ Ո՞հ, ի՞նչ բախտաւոր էք դուք, որ հիւանդանալով անտառէն անցնելէ արդիուցաք: Խումբ մը զինեալ աւազակներ պիտի սպաննէին եւ յետոյ կողոպտէին ձեզ:

Առանց մեր Հօր հրամանին ճնճղուկ մը ծառէն եւ մազ մը մեր գլխէն ջիյնար:

Մարիա Թէրէզա կայսրուհին իրեն շիրիմը պատրաստած էր եւ շատ անգամ հոն կ'առանձնահար: Հնա՞ր

է հպարտանալ, կ'ըսէր նա իր զաւակաց, միշտ աչաց առջին բռնելով այս վայր, որ պիտի ըլլայ կայսրերուն վերջին բնակարան: Այս', միշտ աչացդ առջին թող մնայ գերեզմանդ:

Գաղղիացի զինւոր մը իր ընկերին հետ հրաման ստացաւ հրետանիին պէտք եղած գունաերը տանիլ: Գունաը ձողի մ'անցուցած ուսերնուն վրայ տարած միջոցին թշնամիին բերդէն արձակուած գունա մը զինւորին աջ բազուկը ջախչախնեց: որ մսանէ մը կախուած մնաց: Փոխանակ շուտը բերու եւ ինքզինք կորսնցունելու, զինւորը վար դրաւ գունաը, եւ ընկերէն դանակ մ'ուզելով կարեց բաժնեց ջախչախնել թեւը մարմինէն եւ ապա նորէն ձողը ուսին գնելով իր պարտականութիւն կատարեց: եւ անկէ յերոյ զարմանել տուաւ թեւը: — Կենաց փոթորիկներուն մէջ երանի անոր որ չշուարիր:

Կին մը կատաղի շունէ մը խած-

ուեցաւ . փոխանակ բժիշկին դիմելու
գնաց կօշկակարի մը . սա անոր նոտա-
խա մը տուաւ պատուիրելով որ կա-
րագ հացով ուտէ : Անցաւ 18 ամիս-
ներ , առանց կատաղութեան նշան
երեւնալու . թոյնը սակայն ումանց
վրայ շուտ իսկ այլոց վրայ ուշ կազ-
դէ : Օր մ'ալ յանկարծ կինը կատա-
ղութեան նշաններ ցոյց տուաւ , եւ
մեռաւ ահռելի ցաւերով :

Հայր մը միակ որդի մ'ունէր , որ
գեռ նոր սկսած էր թոքախափ նշան-
ներ ցոյց տալ . կրնար բուժութիւն եթէ
ճարտար բժիշկի մը դիմում ըլլար .
Հայրը սակայն դիմեց խաբերայի մը .
շարութանի մը , որ տուաւ սասափիկ
լուծող եւ փսխեցնող գեղ մը . Որդին
կերաւ այս գեղ , եւ փսխեցուցիչն
այնպէս սաստիկ ներգործեց որ ար-
դէն տկարացած թոքեր պատուելով
բոլոր արիւն դուրս ժայթքեցուցին .
քանի մը ժամէն տղան մեռաւ :

Մի գիւղացի կին երկար ատեն

հիւանդ էր . ոչ մի գեղ օգուտ ըրաւ
իրեն : Նողար է առած , աչքի է ե-
կած ըսին , եւ դիմեցին վհուկին : Սա
եկաւ եւ հիւանդին հետ այրը , փե-
սան եւ աղջկանց մին սենեակ մը
մտցուց : Նախ գոցեց դուռ եւ ապա
բոլոր ծակերն , որպէս զի սասանան
ներս գալով գործողութիւն չխան-
գարէ . Ապա կրակարանին մէջ ածուխ
դրաւ ու վրան նզի մը սիրտ որ նոր
գամերով ծակուած էր : Սենեակին
գուռն այլ եւս չբացուելով մարզիկ
կասկածի ենթարկուեցան , քանի մը
օրէն դարբին մը բացաւ դուռ , բայց
ի՞նչ տեսարան , գարշելի հոտ մը դուրս
խուժեց սենեակէն . եւ ի՞նչ սարսափ ,
երբ տեսան որ սենեակը գտնուող հինգ
անձինք գարշելի հոտէն եւ ածուխին
կազէն հեղձաշունչ եղած գետինը
փառուած էին :

— Ժամ է արդ հեռանալ ամէն տե-
սակ մնապաշտ մոլորութիւններէ , մա-
նաւանդ ջանալ գեղջուկ եւ դիւրա-
հաւան տարրն ի բարին , ի լոյս ա-
ռաջնորդել , վարժարանաց մէջ լուրջ

դաստիարակութեամբ եւ եկեղեցւոյ
բէմէն ազգու քարոզութեամբ , հար-
ռուածելով մնապաշտութիւն բոլոր իր
տեսակներով :

Թոքախտաւոր մի կին այսպիսի
վհուկի մը զոհ գնաց , սա հիւանդին
բոլոր մազերը կտրել տալով այրեց եւ
մոխիրը կաթի մէջ դնելով խմցուց
կնոջ , կինը խենդեցաւ եւ հիւան-
դանոց բերուեցաւ , ուր մեռաւ 8 շա-
բաթէն :

Այս անխիղճ վհուկ զրամ շորթե-
լու համար իր յաճախորդներուն կը
պատմէր թէ անոնք որ իրեն զրամ
չեն վճարած շատ ուրիշ հիւանդու-
թիւններ ունեցած են . ի վերջոյ սա-
կայն կառավարութիւն բանտարկեց
զնա , որով պարզուկ ժողովուրդ ա-
զատեցաւ անոր կեղեքումներէն :

Ալեկոծեալ Միջերկրականին վրայ
նաւ մը աստ անդ կը տատանէր . նա-
ւաստիին մին յանկարծ ծովն ինկաւ :
Յովանին ձուկը բացաւ իր բերան եւ

կուլ տուաւ նաւաստին : Նաւակներ
իջեցուցին ազատելու համար անյա-
տացած նաւաստին . բայց ի զուր
նաւապետ հրամայեց թնթանօթ մը
արձակել զազանին վրայ . հրաման
ի գործ զրուեցաւ , ձուկը բերնէն
դուրս նետեց նաւաստին , որ նա-
ւակն առնուեցաւ քիչ մը վնաս-
ուած :

ՊՃՆԱՍԷՐՆ՝ կ'ըսէ , ոսկին ցոյց տա-
լու եմ , ագահը՝ ոսկին պէտք է պա-
հեմ , շոյլը՝ ոսկին պէտք է մսիսեմ ,
վաշխառուն՝ ոսկին պէտք է շահու
տամ , խաղացողն՝ ոսկին պէտք է
կորսնցնեմ , իմաստունը սակայն կ'ըսէ ,
ոսկին պէտք է օգտակար կերպով
զործածեմ , եւ էն օգտակար , շահա-
ւոր եւ տոկոսաբեր կերպն է ոսկին
բարեգործութեան համար գործածել :

Հարուստ իշխան մը խեղկատակ
մ'ունէր զոր անխելք , յիմար կը կո-
չէր . ասոր տուած էր զարդարուն մի
գաւազան , պայմանաւ որ պահէ զայն ,

մինչ գտնուի իրմէ աւելի մի ուրիշ
անխելք , յիմար :

Անցաւ մի երկու տարի եւ իշ-
խանը հիւանդացաւ : Խեղկատակը իր
տերոջ անկողնոյն քով փութաց եւ
սկսաւ արտասուել :

Տէրը ըսաւ . բարեկամո , ահա ես
ուրիշ մի աշխարհ կերթամ :

Ե՞րբ պիտի վերադառնաս , ամի-
սէ՞ մը , հարցուց մեր անխելք , յի-
մար կոչուած մարդուկը :

Ո՛չ , ըսաւ մահամերձը :

Մէ՞կ տարիէն , շարունակեց հար-
ցաքննել խեղկատակը :

Ո՛չ , պատասխանեց իշխանը :

Ե՞ ուրեմն քանի՞ տարիէն պիտի
վերադառնայ իմ տէրս , ըսաւ մար-
դուկը յուզմամբ :

Ո՞հ , այլ եւս բնաւ վերադառնա-
լիք չունիմ , պատասխանեց իշխանը ,
խեղուկ մի ձայնով :

Բնա՞ւ , բնա՞ւ , կրկնեց յիմար
մարդուկը , այլ եւս չի՞ պիտի վերա-
դառնայ իմ տէրս այն աշխարհէն .
Ե՞ն , ի՞նչ նախապատրաստութիւն ը-

րած ես ուրեմն :

Ոչինչ , ոչինչ , գոչեց իշխանը :
Ոչի՞նչ : ոչի՞նչ , կրկնեց յիմարը .
ուրիշ աշխարհ մը կերթաս , հոն յա-
ւիսեան կենալու համար , այլ եւս
չվերադառնալու պայմանաւ , եւ բնաւ
նախապատրաստութիւն չես ըրա՞ծ .
ա՛ռ , չո՞ւս , ա՛ռ այս գաւազան , եւ
պահէ զայն , քանզի դու ինձմէ շատ
աւելի մեծ յիմար մը , անխելք մ'ես
եղեր : Զայս ըսելով յանձնեց ծաղկ-
եայ գաւազանը իշխանին :

Ա. Կասիանօս երկնից գոնէն ներս
կը մանէ :

Ի՞նչ տեսար երկրի վրայ կը հար-
ցնէ ասոր Յիսուս :

Տեսայ մի գիւղացի , կ'ըսէ Սուրբը ,
որ կառքովն միասին ճահճճին մէջ
զլորեցաւ :

Ե՞ , ի՞նչ ըրիր , օգնեցի՞ր անոր կը
հարցնէ Յիսուս :

Ո՞չ , կ'ըսէ սուրբը :
Ի՞նչո՞ւ , կը հարցնէ Տէրը :
Որովհեաեւ առ Քեզ գալու հա-

մար ճամբայ էի ելած , եւ վախցայ որ ճերմակ հանդերձներս չաղատահմ :

Պահ մը յետոյ Ս. Նիկողոս ներս կը մանէ , ոտքէն ցզուիս ցեխոտ ու աղմոտ :

Առ ի՞նչ է Նիկողոս , կը հարցնէ Յիսուս , հանդերձներդ ինչու ատանի աղտոտած են :

Տէր , կ'ըսէ Նիկողոս , ճամբուն վրայ զիւղացի մը աեսայ , որ սայլով ի միամին տիգմին մէջ էր ընկըզմած , մտայ ցեխին մէջ եւ աղատեցի մարդն ու սայլը :

Ապրի՞ս , բարի եւ հաւատարիմ ծառայ կը գոչէ Յիսուս , ժպառուն դէմքով , գու աւելի լաւ հասկցար քու կոչում ու պարտաւորութիւն , քան կասիանոս , ուսափ մտիր քու Տէրոջ ուրախութեան մէջ :

Օր մը Կորսւսի — «աիէմ րէռտիտի» , լատիներէն — կը գոչէր Վէստասիանոս կայսրը Հռովմայ , երբ երեկոյին անցուցած օրուան վրայ քըննական ակնարկ մ'ըրած ատեն , աես-

ներ որ այն օր անցուցած էր , առանց բարիք մ'ըրած ըլլալու :

Նիտարայի ջրվէժին մօտ կը գըտնուի ճերմակ զլուխ արծիւր , ասոնցմէ մին սառին վրայ վայրի բաթեր կերած ատեն ա'յնքան մուցաւ իր անձ , որ իր թաթեր սառոյցին վրայ սառելով սառոյցին փական եւ ո'րքան որ իր ահազին թեւերը զարկաւ որ ազատի եւ վեր ելլէ , անկարելի եղաւ , մնաց հոն գամուած ու կորաւ : Ղուկ . իԱ. 34 համարի լաւ բացատրութիւն մ'է այս :

Փոքրիկ աղայ մը երկու մօրաքոյր ունէր , մին Մարթա եւ միւսն Եսթեր կոչուած : Երբ հարցուեցաւ թէ անոնց զո՞րն աւելի կը սիրէ . աղան ըստ թէ Մարթա մօրաքոյրը միւսէն աւելի կը սիրէ . որովհետեւ , շարունակեց փոքրիկը . Եսթեր մօրաքոյրը կարկանգակներն ու անուշեղէններն բարձր դարակներու վրայ կը գնէ , որոնց ինք չէ կարող հասնի :

մինչ Մարթա զանոնք ցած ու իրեն
դիւրամատչելի տեղեր կը դնէ .

Ուսուցիչք եւ քարոզիչք իրենց
աւանդած մտաւոր եւ հոգեւոր որ-
նունդ հանրութեան դիւրամատչելի ,
հասկնալի , ըմբռնելի ընելով անոնց
սէրը կը շահին :

Երկար տարիներ ապարդիւն պաշ .
տօնավարութենէ մը յուսահատ քա-
րոզիչ մը ժայռի մը շուքին տակ նըս-
տող ծերունիի մը հանդիպելով , մարդ-
կանց սրափ կարծրութեան վրայ գան-
դատիլ սկսաւ :

Տե՛ս այս ժայռ . ըսաւ ծերունին ,
տե՛ս այս ամենակարծր ժայռ , ծակ ,
ծակ է եղած . չէ՞ որ վերէն թափւող
անձրեւի կակուղ կաթիլներ շարունակ
ասոր վրայ իյնալով այս ծակեր յա-
ռաջ են բերած : Ապա ձեռքը յուսա-
հատեալ քարոզչին ուսին վրայ դնե-
լով ըսաւ , շարունակէ կինաց բանին
քարոզութեան եւ հաւատա՛ որ միեւ-
նոյն արդիւնք պիտի անմնես ապա-
ռածի նման սրաերու վրայ :

Մինչ օրիորդին անշնչացեալ մար-
մին գերեզման իջեցնելով հողով կը
ծածկէին , նորա վարժուհին արտաս-
ուաց հեղեղներ կը թափէր : Քարո-
զիչը պատճառն հասկնալ ուզեց այս
տարօրինակ յուզման : Ա՛խ , ըսաւ
վարժուհին , ո՛քան մտադրած էի
հանգուցեալին հետ խօսիլ իր հոգույն
նկատմամբ , բայց միշտ յետաձգեցի ,
եւ այժմ կորաւ ամէն պատեհութիւն :
Գուցէ գուշ կատարեցիք այս կենսա-
կան պարտաւորութիւն , հարցուց
վարժուհին քահանային , եկեղեցա-
կանը խոնարհեցուց զլուխը եւ խոս-
ովանեցաւ թէ ինք եւս մտադրած
էր այնպէս ընել բայց չէր կատարած :
Ուստի իրեն համար ալ ամէն պատե-
հութիւն կորած էր : Ծնողաց երթանք
ըսին երկու անմիտիթար պարտազանց-
ներ , գուցէ անոնք այս ծանրակշիռ
պարտականութիւն կատարած ըլլան :
Գացին : Լալազին խոստովանեցան
ծնողք թէ իրենց զստեր վերջին
ծննդեան օրն մտադրած էին անոր
հոգույն նկատմամբ խօսիլ իր հետ

բայց յետաձգեցին եւ նա մեռաւ եւ
Ասուուծոյ առջեւ կ'ամրաստանէ իր
ծնողք , հովիւ եւ ուսուցիչ :

Կեանք չունեցող եկեղեցին նման
է այն նաւուն , որ սառուցեալ ծովուն
մէջ հեռուանց նշարուելով քանի մը
անդում նշան տրուեցաւ , սակայն
առանց ո՛ եւ է շարժում տեսնուելու
Նաւակներ իջեցնելով դացին նաւուն
վրայ , ձայն չկար . իջան վար , մտան
սենեակներ , եւ ահա նաւապետ գտան
որ բաց գրքի մ'առջեւ նստած էր ,
արմուկը սեղանին վրայ եւ զլուխը
ձեռքին յենած — սառած . մօսեցան ,
շարժեցին , սակայն նա անշարժ կը
պահէր իր դիրք : Ննջարանները դա-
ցին ուր նաւասփաք պառկած էին ,
բոլորն ալ սառած , սառած իրենց
բնական դիրքին մէջ , եւ անհնար ե-
ղաւ զանոնք սթափեցնել :

Գերմանիոյ հասարակաց կրթու-
թեան նախարարը օր-մը գեղի զըպ-
րոցն այցելեց եւ յետ քննութեան

երկրագործի մը տղուն հարցուց թէ
աղօթք կրնա՞յ ընել : Այս՝ ըսաւ
տղան . քաջութեամբ . էյ . աղօթք
մ'ըրէ որ լսեմ , հրամայեց նախա-
րարը :

Շատ լաւ , սա գլխարկս բռնէ ,
ըսաւ տղան , եւ գլխարկը նախարա-
րին տալով երկիւղածութեամբ ծալ-
լեց ձեռքերն եւ սրտառուչ աղօթք
մ'ըրաւ , որոյ ամբողջ տեւողութեան
նախարարը ձեռքը պահեց աղուն գըլ-
խարկը :

Ֆրանգօ-Գերման պատերազմին
ատեն , 1871ին գերման զինւորք
բնաւ չէին ըսեր «պիտի յաղթենք»
այլ «պարտքերնիս պիտի կատարենք»
կըսէին . պարտուց եւ ոչ թէ փառաց
զգացում էր որ կը զօրացնէր զիրենք
եւ զիւցազնական քաջութեան կա-
ռաջնորդէր զանոնք . Քրիստոնեան
ասանկ պէտք է խորհի : Ասիկա ըրաւ
զոր ինչ կրնար , ըսաւ Յիսուս զինք
իւղով օծող մեղաւոր կնոջ համար :

Հինգ տեսակ նուէր կայ բարեգործական , թիթեղ է երբ առանց նպատակին վրայ խորհելու կը տըրուի , պղինձ է երբ շուրջը կը նայի թէ զինք դիտող կա՞յ , երկաթ է երբ կուտանք , քանզի ուրիշներ եւս կուտան , արծաթ է . երբ զթութեամբ կուտանք , ոսկի է ձգուած նուէր , եթէ տասը բարա խակ ըլլայ , երբ նա կուտանք ի սէր Յիսուսի :

Պրահմին մը ըսաւ միսիօնարի մը , եթէ դուք ձեր գրքին նման բարի եղած ըլլայիք . Հնդկաստան հինգ տարուան մէջ քրիստոնեայ եղած կ'ըլլար :

Մեծն Աղէքսանդրի ներկայութեան զո՞ն մատուցուած պահուն , զինւորի մը ձեռաց վրայ կրակ ինկաւ . սա , առանց շարժելու , ճիչ կամ աղաղակ արձակելու , թողուց որ կրակն իր ձեռք այրէ , երբ պատճառն հարցուցին ըսաւ , ի՞նչպէս հնար է Աղէքսանդրի ներկայութեան ձայն հանել

եւ շփոթութիւն յարուցանել :

Եկեղեցին մէջ , մանաւանդ կանայք , ո՛րքան շփոթութիւն կը յարուցանեն , Աստուծոյ ներկայութեան առջին :

Այլ օրինակ վերոյիշեալին . երբ Հռովմայիցիք երուսաղէմ առնելէ յետոյ աաճարը մտան , քահանայք սովորական գոներ կը մատուցանէին . սակայն անշարժ կեցան իրենց պաշտօնին զլուխ եւ զինուորք անոնց արիւն խառնեցին իրենց մատուցած զո՞ներուն արեան հետ : — Երկիւղածութեամբ Տէրոջ մօտենալ եւ դողալ Անոր ծառայել :

Անկրօն մը Աւետարանի սա խօսք կը ծաղրէր . «Դու իմ մէջ եւ ես քու մէջ» Յովհ . 17 . 21 . առուն կը մտնեմ , կ'ըսէր , բայց առուն իմ մէջ չմտնէր . ձեռքս գրապանս կը զնեմ , բայց գըրպան ձեռքիս մէջ չմտնէր :

Իրա՞ւ , ըսաւ խափչիկ քրիստոնեայ մը , անկրօնն ընդմիջելով , բեր

երկաթ մը , զիր կրակին մէջ եւ տես
թէ ի՞նչպէս երկաթ հուրին մէջ կը
մտնէ եւ հուր երկաթին մէջ :

Աղքատ մի կին կը տառապէր յե-
տին չքաւորութեան մէջ . բարի մի
անձ կերթայ օդնել անոր , գուռ կը
զարնէ կրկին եւ կրկին , բայց կինը
չբանար : Օր մը բարերար անձը կը
պատահի սոյն ինոջ , եւ կը հարցունէ
թէ ինչո՞ւ գուռը չբացաւ : Կարծեցի
թէ տանտէրս է եկած , կ'ըսէ կինը ,
ու կը պահանջէ պարագիս վճարում :

Ասոււած ալ մեր սրտին զրան
կրկին ու կրկին կը զարնէ միայն մեզ
օրհնելու համար . չենք բանար , խոր-
հելով թէ գաաստան պիտի անանէ
մեր հետ եւ կը զրկուինք օրհնու-
թենէ :

Զէքիյէ վէ ագիլէ պիր գատըն
քէնտինին պէքրի զէքինին իսլահ ը
անվալընը մուճիպ օլան եէնի վէ միւ-
էսսիր պիր իլած պուլմուշ արրու Մէր-
գումէ վէ չօճուզլարը սէրխօշ օլազը

զէման անըն կիրտիյի մէքրուն հէյէ-
թէ փէք ալա վազըն իտիլէր : Գարը
քէնտի զօնասընըն օլ հալտէ իքէն
սիմասընըն նէ գատար ֆէնա կէօ .
ըիւնտիյիւնէ տաիր փէք նազիս պիր
թէսավվուրը պուլունտըզը զաննընա
զահիպ օլազընտան , անս քէնտի-
նին օլ հէյէթինի կէօսթէրմէյէ գա-
րար վէրափի . Մէրգում եինէ սէրխօշ
հալտէ էվէ կէլիպ տէ ույգոյա տալ-
տըզընտան գարըսը պիր Փօթօղրաֆձը
չազըրթար . վէ զօնասը սանտալեէ-
նին իւզէրինաէ օթուրըր իքէն անըն
Փօթօղրաֆընը չէքափիրափի . Փօթօ-
ղրաֆձը քէնտի իշինի ալա սուրէթ-
տէ իճրա էտիպ չէքափիյի Փօթօղրաֆը
իքմալ էյէտիքտէն սօնրա պլազըպ
խանէսինէ կիթտի . Սապահլայըն զէվ-
էսսի իշպու չէքիլմիշ օլան Փօթօ-
ղրաֆը անըն գանձէ ալթը Փինճանը-
նըն իւզէրինէ զօտու : Մէրգումըն օ
վազթ ագլը պաշընտա օլազընտան ,
մէզքիւր Փօթօղրաֆ անտէ պօր հիսս
ինէքրէթ հասըլ էյէտի . Սնա պիի
կէօնէ իզահաթտա պուլունմազա հա-

Ճէթ օլմատըղը կիպի , անը ճէրհ ու
թէքզիպ էթմէյէ պիր ֆիւրսաթ տա-
խի եօդ իտի . Ռէսմ թըպգը թըպգը-
սընա քէնտիսինի կէսոթէրիյօր իտի .
տէլիլ իրատընա պիր մահալ եօդ ի-
տի . էտիլէճէք անձադ պիր շէյ վար
իտի . վէ օ իշրէթտէն պիւս պիւթիւն
վազ կէչմէք իտի . Մէրգում իշրէթ-
տէն վազ կէչմէյէ գարար վէսիպ ,
իշպու գարարընը մէվզը ի իճրայա
տախի վազ էյլէտի :

ԸՆՏԱՆԵԿԱՆ

ԾՆՈՂԱՑ ԲԱԺԻՆ

1. Կուզե՞ս որ զաւակդ առողջ
ըլլայ - ամէն տեսակ դեղ հեռացուր
անկէ ըստ կարելւոյն եւ ո՛րքան որ
հնար է : Դեղ արուելու չէ ըսել չենք

ուզեր , այլ ամէն թեթեւ ցաւի հա-
մար իսկոյն դեղ տալ գէշ եւ վնա-
սակար սովորութիւն է :

2. Փոքրիկ տղայոց կազմու-
թիւն փափուկ ըլլալով անոնք դե-
ղերէ շուտ կը վնասուին . մանաւանդ
որ ծնողք դեղին ազդեցութիւն եւ
հիւանդութեան բնութիւն լաւ չգիտ-
նալով չափազանց կերպով կը գոր-
ծածեն դեղերը :

3. Զափահասի մը օգտակար ե-
ղող դեղ եթէ նոյն քանակութեամբ
տղայոց արուի , թերեւս մեռցնէ տը-
ղան . 50 քաշ կշող մարդու մը եւ
հազիւ 3 քաշ եղող տղու մէջտեղ
լեռան չափ տարբերութիւն կայ :

4. Երբ տղատ հիւանդ է , բժիշկ
կանչելու ես . ոմանք ծախքէ վախ-
նալով այս մասին անհոգ զանցառու-
թիւն կընեն , եւ կը թողուն որ զա-
ւակը մեռնի , կամ հիւանդոտ , ախ-
տաւոր եւ ցաւագար ըլլան . այս
մեղք , ոճիր է :

5. Տգիտութիւնը չատ յիմարու-
թիւններ գործել կուտայ . ոմանք

սովոր են տարին անգամ մը իբր քաշ
մը արիւն հանել տալ երակներէն իբ-
րեւ թէ ապականեալ արիւն դուրս
ելլելով, հիւանդ չեն ըլլար, ասով
սակայն մարմին կը տկարանայ եւ օ.
գուտի տեղ մեծ վնաս կրլայ:

6. Ոմանք ալ առողջութիւն
պահելու համար սովոր են ատեն ա-
տեն մաքրողական դեղեր առնել.
աս ալ սխալ եւ վնասակար է. ան
որ չէ հիւանդ բնաւ դեղ առնելու
չէ:

7. Այս կը նմանի մեր հին վար-
ժապետներուն ըրածին, որոնք շա-
բաթն մի անգամ աշակերտաց բոյո-
րին գէշին եւ աղէկին, արժանիին
եւ անարժանին լա՛ւ ծեծ մը կը քա-
շէին, որպէս զի չարութիւն չընեն:

8. Այս սովորութիւնք յիմարա-
կան, անտեղի եւ վնասակար են,
եւ շատ դժուար է ընդհանրութեան
վրայ այնպէս ազդեցութիւն ընել որ
հեռանան անոնցմէ:

9. Ասոնցմէ մէկն ալ մանկիկը
որբանին մէջ կապել կաշկանդելն է.

այնպէս որ ոչ ոտք եւ ոչ թեւեր
կարենայ շարժել, պարզ եղիպատ-
կան մօմեայ մը ձեւանալով. Այս
բոլորովին հակառակ է ընութեան,
որ մեր գաստիարակուհին է:

10. Դիտէ որ տղան, մանկիկը
երբ ազատ է միշտ կը շարժէ թեւեր
եւ ոտքեր, որով շարժումով նա
կածի, կը զօրանայ եւ առօջ կըլլայ:

11. Դիտէ գառնուկներն, ուլե-
րըն, հորթերն ո՛րչափ կը խաղան,
կը ցաթկեն, կը խայտան. Տեսած
էք որ նորածին գառն, ուլն կամ
հորթ սնտուկի մը մէջ փակեն, մի-
այն բերան ազատ թողլով որ դիէ—
կաթ ուտէ. Է՞ն, մարդս ալ կեն-
դանի մ'է, միայն թէ ասուն—իօ-
սող. ուստի ինչո՞ւ զայն ուրիշ օրի-
նաց ենթարկենք մեծնալու համար :

12. Դիտէ՝ որ երախան ընտ
չախորժիր այդ կապանքներէն, կը
բողոքէ ուժգին, լալով եւ պօպալով
եւ խեղճ մայր ժամերով պէտք է
շարժէ օրբան եւ երգէ իր լալագին
«օլօր» որ երախան մոռնայ իր վիշ-

տեր, թմրի ; զինովիայ ու քնանայ :

13. Ասկէ զատ երախան շարունակ միեւնոյն զիրքով —կրնակի վրայ —պառկեցնելով գլխուն ձեւ կը փոխուի, գլխուն ետին տափակ կըլլայ . նա այնպէս չէր, ծնած ատեն, դուն փօխեցիր գլխոյ բարեձեւութիւն . Արարջին տուած ձեւին չհաւնեցա՞ր որ այդպէս կընես :

14. Ոմանք ճակտին վրայէն աղ կապ մը կանցունեն . ա՛ռ քեզի երկու չարչարանք . ուզեղին մէկ մաս մէկ կողմ եւ մնձագոյն մաս միւս կողմ կը քաշէ այսպէս լնելով, քանզի աղուն զլուխ խիստ կակուղ է եւ տրուած ձեւը կառնէ :

15. Այս չարչարանք կը տրուի երախային քանզի մօր դիւրութիւն է եւ աղան կապած ըլլալով ինք ազատ կըլլայ իր գործին հնտեւիլ :

16. Երախան աղատ ձգելով օրրանին մէջ, յայտնի է որ մայր աւելի լաթ լուալու պիտի սափուի, սակայն աղուն մաքրութիւն, գեղեցկութիւն եւ առողջութիւն կը

վարձատրէ բոլոր աշխատանք :

17. Երախային զլխուն բարձը շատ կակուղ փետուրէ ըլլայ, եւ ամէն օր լաւ մը շարժէ, թոթուէ որ կակուղ մնայ . զգուշացիր կարծր բարձ գործածելէ :

18. Գլուխը մի կապեր, թող ազատորէն աստ եւ անդ շարժի, ըստ կամաց եւ հաճոյից, նաեւ թեւերն ազատ թող, թող մը փաթթելով միայն :

19. Կաթ տուած ատենդ հանէ երախան օրրանէն, միշտ մէկ կողմէն մի տար կաթ, այլ հաւասարապէս երկու կողմէն ալ . ստինքներն ալ փոփոխակի գործածէ :

20. Եթէ երախան ստքի վրայ շատ կայնեցնես ուկորներն պիտի ծպին, կոր ըլլան : Շալվար հագնողին վրայ այս կորութիւն չնշմարուիր, բայց որովհետեւ բանեալնը հիմա ասպարէզէն վանելու վրայ է շշլվար, այդ տձեւութիւն յայտ յանդիման պիտի աեսնուի :

21. Ուստի մ'արտորաք որ աը-

ղայք շուտ քալելու վարժուին , ոտքի գրայ մի կանգնեցնէք . թողէք բնութեան . նա լաւ զիտէ ժամանակ եւ երբ այդ վիճակին հասնի , աղան ինքնին ոտք կելէ :

22. Նոյնը նաեւ կըսենք կռնակի ոսկորներուն շարքին — ողնայարի սիւնին — նկատմամբ , մի քանի շարթուան երախան մի նստեցնէք , մեծ է վտանգ որ ծանրութիւն ծռէ , կորացնէ կռնակին ոսկորներ եւ աղան ըլլայ կորազամակ :

23. Առողջ մանուկ քիչ նեղութիւն կուտայ , ուստի քու շաներդ իսկ պէտք է համոզեն քեզ ջանք չխնայել երախային առողջութիւն պահպանելու համար :

24. Տղայք դաժան — Անիշ — կրլան , այս անոնց չարութիւնը չէ մարմնաւոր ցաւի , տկարութեան նըշան է այս . ուստի մի քանի հրահանգ՝ երախային ընդհանուր առողջութեան համար :

25. Անկանոն կերպով մի սնուցանէր երախան . լացածին պէս կաթ

տալ չըլլար , անոր մարսողութիւն կը խանգարուի ասով : «Մայրիկին Առաջնորդը» լի ու լի կերպով կը խօսի այս նիւթիս վրայ . զնէ՝ մի հատ եւ ուսումնասիրէ զայն . Գիշերըն ալ ծոցն առնելով եւ ստինք րերանը զնելով մեծ վնաս կը արուի երախային :

26. Երախան պէտք եղածին պէս մաքուր պահէ . մէկ կամ երկու շաբաթ մի անգամ բաղնիք տանելով չլմննար այս . ամէն օր պէտք է լըւալ երախան . սենեակդ բարեխառն առաքութիւն թող ունենայ . ջուրն ալ քաղջ , քիչ մը օճառ , եթէ վէրք չունի մարմինը . զիր զէնջակն — Խոչըն — պատրաստ , լուա երախան ամանի մը մէջ եւ զէնջակին մէջ փաթթէ . տասն բոպէի գործ է :

27. Լոյս եւ մաքուր օդ այնքան կարեւոր են երախային ինչպէս սընունդ եւ լուացում , մութ տեղ բուսած բոյսը զիտե՞ր ես , ահա այնպէս տժգոյն , բարակ , նիհար պիտի ըլլայ մութ տեղ մեծցած երախայ .

բացօղեայ տեղ մեծցած բոյս կանաչ եւ
ուժեղ կրլայ . անանկ ալ մանուկ :

28. Անձամբ տեսանք Զուիցե-
րիի խոր ու մթին ձորերու բնակչաց
մի մեծ մաս որ ապուշ եւ տիմար
է , քանզի արեւին ճառագայթները
հոն մոռագ չեն գտներ աղամարէն .
հանքերու մէջ գետնի տակմացող-
ներուն տղայք հոն ծնած լըլալով եւ
առանց արեւի լոյսին մեծնալով ա-
նասնական կերպարանք մը կը ստա-
նան . նաեւ քաղաքներու տուներուն
վարի յարկի մասերն բնակողներուն
եւ խաներու մէջ մեծցողներուն դէմք
անասնական եւ առողջական վիճակ-
ին խիստ գէշ կրլայ . լոյս քիչ , ոգ
ապականեալ պատճառ են տարսփո-
խիկ հիւանդութեանց :

29. Թող որ տղան բացօղեայ
տեղեր շրջի եւ խաղայ . հոտաւէտ
ծաղիկներով զաշար աւելի լաւ եւ
առողջարար է քան քաղաքին փոշուտ
եւ գարշահոտ փողոցներն . Առ ար-
դայքդ եւ ժուռ եկ անոնց հետ , առ-
վորութիւն ըրէ այս :

30. Զմունանք ըսել որ մօր
վարմունք եւ մտային հոգեկան վի-
ճակ մեծ ազգեցութիւն ունի ման-
կան առողջութեան վրայ . մայրը կը
բարկանայ , կը յուզուի , կիրք կելէ
եւ երախային կաթ կուտայ : Ասոր
արդիւնք սա կրլայ որ այդ կաթ ե-
րախային խիթ — փորի ցաւ — կը
պատճառէ . կաթին վրայ կազդեն
մօր զգացմունք , ստամոքս կաւրուի
այսպիսի կաթ ուտելով :

31. Ուստի կը հետեւի թէ մօր
սիրտ զուարթ , ուրախ պէտք է ըլ-
լայ եթէ կաթը կատարեալ եւ ա-
ռողջարար անունդ պիտի ըլլայ :

32. Քեզի է խօսքս , ո՛վ այր .
քանի որ զիտցար որ մօր զգացմունք
կաթին վրայ այսքան մեծ ազգեցու-
թիւն ունին . զգոյշ պէտք է ըլլաս
որ ափկինդ չգրգռես , կիրքի չնանես,
չբարկացնես , չվշտացնես : Համբե-
րէ , զոհողութիւն ըրէ . գոնէ ի սէր
զաւակիդ . Եթէ կինդ վրատ խսկ յար-
ձակի , հեզ եղիր , մեղմութեամբ
հասկցուր անոր բարկութեան հետե-

ւանք, ըսէ որ աղայք մեռած իսկ
են այս պատճառաւ :

33. Դարձեալ ջանա որ կինդ
շատ հոգերով չի ծանրաբեռնի, միշտ
քաղցր խօսէ հետը երբ կաթնկեր
մանուկ ունի. սիրտը ուրախացուր,
հնար եղածին չափ աշխատութիւնը
թեթեցուր : Այս ընելով աղադ ա-
ռողջ ու մայրը երջանիկ պիտի ըլ-
լայ :

34. Փու համբերութիւն, ջանք
եւ անձնուիրութիւն պիտի հատու-
ցանեն քեզ հանդերձ տոկոսով, եր-
ջանկութիւնդ պիտի աւելնայ, տես-
նելով մանկիկին օր քան զօր առոյգ,
կայտառ կերպարանք մը ստանալն :
Նաեւ հանգիստ պիտի ըլլաս գիշերը
եւ խաղաղ քնանաս, քանզի երա-
խան լալով եւ պոռալով քունդ չի
պիտի խանգարէ :

35. Իսկ այս այր որ այս ամէնը
լսելէ ետեւ նորէն իր իրաւանց եւ
զիրքին վրայ կը պնդէ, եւ կը դառ-
նացնէ կինը եւ կը ծանրացնէ անոր
քեռ, մարդ կոչուելու չէ արժան,

անզգայ է, անգութ, եւ անարժան
կին ունենալու եւ ընտանիք կազմե-
լու :

ՄԱՅՐԵՐՈՒ ԲԱԺԻՆ

1. Զկայ բան մը որ աւելի ու-
շաղրութիւն ձգէ իրեն քան մանկանց
դաստիարակութիւնը : Տղան ծնելուն
պէս սա' հարց կը ծաղի . «Արդեօք
այս աղան ի՞նչ պիտի ըլլայ»:

2. Նորա ի՞նչ ըլլալը միծագոյն
մասամբ մօրմէն է կախեալ. մանուկն
նորա ձեռաց է յանձնուած ինչպէս
կաւ բրուտին ձեռք, որ կարող է
տալ անոր ի՞նչ ձեւ որ ուզէ :

3. Ուստի ո՛րքան միծ է մայրե-
րու պատասխանատուութիւն, զի ա-
պագայ սերնդեան հեղինակն իրենք
են, եւ ո՛րքան կարօտ են անոնք
լաւագոյն դաստիարակութեան :

4. Դպրոցներուն մէջ դաստիա-
րակութիւն իմացական, մաքի մշա-
կութիւն է, սակայն այս չէ բոլորը
եւ ասով շմնար :

5. Դաստիարակութիւնն բարքի կրթութիւնն ունի իրեն նպատակ եւ ունի երեք ճիւղ՝ իմացականէն զատ — ֆիզիքական, բարոյական եւ կրթօնական — եւ այս երեք միշտ անտես են առնուած :

6. Այս երեք ճիւղերուն կրթութիւնը, մշակութիւնը, տղայոց դըպրոց խրկուելու յարմար ըլլալէն առաջ կսկսի, հիմն է ապագայ չէնքին, մինչ մտային կրթութիւն չէնքին թեթեւ ատաղձն է :

7. Ոմանք մտաւոր կրթութիւն չունենալով մաքուր բարոյականի տէր են, ընդհակառակն այլք մտաւոր բարձր դաստիարակութիւն վայելած են, բայց ապականեալ բարքի տէր են, եւ այս երկուքին ազդեցութիւն ո՛րքան տարբեր է ընկերական կնաց մէջ :

8. Ուստի մայրն ըլլալով տղուն առաջին դաստիարակ, անոնց բարքին եւ որդեգրելի ընթացքին վրայ մեծ ազդեցութիւն ունին. անոնց ձուլիչներն են :

9. Տղան մօր նայւացքին նշանակութիւն չատ դիւրաւ կը սորպի. ձայնին փափոխութիւնը, դիմաց երեւոյթին տարբերութիւնը, ժպտուն կամ խոժոռ դէմքը, տղան շուտ կը սրոշէ. եւ ահա հոս է բարոյական դաստիարակութեան սկիզբն :

10. Եւ տղուն ֆիզիքական կրթիչն ալ մայրը չէ^o. անոր առօրեայ պիտոյք, ուտելիք, քուն, մաքրութիւն, զմօսանք, զբաղում մօր գործ չէ^o, որոնք մեծ ազդեցութիւն ունին տղուն մարմնայն վրայ :

11. Կրթէ մանուկը, կըսէ իմաստունը մայրերուն, իր ճամբան սկսած ատեն, որ իր ծերութեան ատեն ալ անկէ չխոտորի : Այսու հանդերձ ո՛րքան անհոգ են մայրեր այս վեհ պարտականութեան եւ ո՛րքան անկարող եւ աղէտ են :

12. Առօրեայ հոգեր, ինչ պիտի ուտենք, ինչ պիտի հագնինք, տունէ տուն այցելութիւնք, արդուզարդ, զուարձութիւնք, ուրիշ բան խորհելու ժամանակ չեն ձգեր . չեն խորհիր

թէ տղայք իրենց կրթիչ ձեռաց կարութ են :

13. Տես սա տունկեր. կը պաշտպանենք զանոնք ցուրտէն, կոռուգենք ստէպ, արեւին տակ կը դնեմք. ծիլեր կարձակեն, կը զօրանան, տերեւ կուտան, տկար, բարակ տունկը այսպէս կուժովնայ, պտուղ, ծաղիկ կուտայ եւ կուրախացնէ եւ կը վարձատրէ մեզ :

14. Եթէ սակայն անհոգ ըլլանք եւ անտեսենք մեր պարտականութիւն, հազիւ շաբաթն մի անդամ ջրենք, սառոյցէ չպահպանենք, շուտ կը չորնայ ու կոչնչանայ :

15. Մեր բոլորտիքը դանուող գուարթ տղայք, մատաղ, փափուկ տունկեր են, միշտ հսկողութեան կարօտ, եթէ թողունք զանոնք, չի խնամենք, չոսդանք, չկրթենք, չի դաստիարակենք, այս զանցառութեանց հետեւանք պիտի տեսնենք, պիտի ողբանք, սակայն գուցէ ուշ ըլլայ դարմանում եւ անհնարին իսկ :

16. Գուցէ այս տողերէն ընթեր-

ցող մայր մը յուսահատի իր անկարողութիւն տեսնելով, սակայն կը-սենք, մայրերու համար Սուրբ Գրոց նման գիրք չկայ, ուր տղայք կը-թելու լաւագոյն կերպ կրնան սոր-վիլ, եթէ ուրիշ զրքերէ զրկուած են. մի յուսահատիր, այլ հաւատար-մութեամբ եւ յարատեւութեամբ հե-աեւէ անդ տրուած հրահանգներուն, եւ տղայքդ մեծնալով օրհնութիւն պիտի ըլլան քեզ :

17. Փոքրիկ մանուկ մը կրնա՞յ կրթուիլ պիտի առարկէ մայր մը. այս՝ միայն թէ հանդարտ ու լոիկ ազգեցութեամբ նման ցօղիոր կիջնէ խոտին վրայ : Տղայք ի բնէ չարին հակամետ են, ասոր ապացոյց պէտք չէ, այս հակամտութեան դէմ պէտք է գործենք, բարի սերմեր ցանելով անոնց սրտերուն մէջ լոիկ, հանդարտ եւ անխռով :

18. Եթէ հնձել կուզենք պէտք է հողը պատրաստել եւ բարի սերմ ցանել հոն, մեր այգիներ կը դարմա-նենք որ խաղող ակնկալենք . վայրի

ծառն կը պատուաստենք . նոյնպէս
ալ եթէ մեր զաւակներէն բարի պը-
տուղներ քաղել կուգենք, պարտինք
պատրաստել , ցանել , դարմանել ,
պատուաստել . առանց ասոնց մի ըս-
պասէր պառւղ բարի :

19. *Sens* ծաղիկները , ո՞րքան
հոգ եւ խնամ կը տանինք , որ մեր
տուներուն զարդ ըլլան եւ վայելյու-
թիւն պարգեւեն , կրնաօն մեր տղայք
մեր տան զարդ ըլլալ իրենց վիճա-
կին թողուելով :

20. Արդ մեր զաւակներ կրթե-
լու առաջին միջոց անձնական աղ-
գեցութիւնն է : Որոյ հետ որ կե-
նակցինք , անկէ կազդուինք . ըսէ ,
ո՞վ են ընկերներդ , ըսաւ իմտասու-
նը , եւ ես պիտի ըսեմ թէ զու ի՞նչ
տեսակ մարդ մ'ես :

21. Այս աղղեցութիւն հզօր է
երբ ծնողաց կողմէն կուգայ . հաւա-
տանք թէ ոչ , ամէն օր աղէկ կամ
գէշ կրթութիւն կուտանք մեր զա-
ւակաց , մեր նայուածքներով . խօս-
քերով եւ գործքերով . այս' , մեր

սրտին խորհուրդներ խակ աղղեցու-
թիւն ունին մեր զաւակաց վրայ :

22. Տղայոց սրտեր լուսանկարին
զգայուն ապակիին նման են , հոն կը
զրօշմուին . այն փոքր սրտերուն վը-
րայ լսածնին եւ տեսածնին եւ յետոյ
ի յայտ կուգան , ուրիշներէն կը տես-
նուին :

23. Արդ անաչառ ըլլանք եւ
հարցնենք մեզի . մեր վարք ի՞նչ
ապաւորութիւն կընէ մեր զաւակաց
սրտին վրայ . անոնք մեզմէ կը սոր-
վին ծշմարտութիւն , աշխատասիրու-
թիւն , համեստութիւն , հեղութիւն ,
առատաձեռնութիւն , կամ թէ ստա-
խօսութիւն , ագահութիւն , յամա-
ռութիւն , անձնասիրութիւն եւայն :

24. Եթէ գործ չունիս , անոնք
մեծնալէն ետեւ խօսէ անոնց ծշմար-
տախօսութեան վրայ . ի զուր է այս ,
եթէ իրենց մատաղ հասակէն չեն
տեսած որ մենք ծշմարտութիւն չենք
յարգեր , այլ սուտ կը խօսինք . նոյն-
պէս բոլոր միւս առաքինութիւններն
ի զուր սորվեցնել ջանանք , երբ ա-

նոնք դիտած են որ մենք ճիշտ ա-
նոնց ներհակն ենք ըրած իրենց ար-
ջին :

25. Անձնական ազգեցութենէն ե-
տեւ կուգայ տղայոց զաստիարակու-
թիւն , գոնէ կարդալու վարժեցնել
զանոնք : Մայրը՝ տղան քովն , դիրկը
առած թող կարդայ Սուրբ Գիրքէն
եւ ուրիշ օգտակար գրքերէ , ասով
գուռն կը բանայ մայր կրթարանին ,
ուսումնարանին , համալսարանին :

26. Ոչ հարստութիւն եւ ոչ եր-
կայն ժամանակ պէտք է ասոր . շատ
աղքատիկ մայրեր՝ , որ չէին ուսեալ ,
իրենց զաւակներ այսպէս առաջնոր-
դեցին առաջինութեան ճամբան :

27. Անկեղծ եղիր զաւակացդ ,
ուշադրութիւն ըրէ անոնց տկարու-
թեան մի խարեր զանոնք , տուած
խոստումդ մի զրեէր , կարեկից եղիր
զաւակացդ , կատարէ փափագնին ,
եթէ անվաս են :

28. Անգութ կը համարուի այն
մայր որ իր զաւկին մարմական պի-
տոյք չհոգար , առկայն նոյնչափ ան-

գութ կոչուելու չէ մայր մը , որ կը
զլանայ մանկանց մտաւոր սնունդը ,
եւ չկրթէր եւ զարգացնէր անոնց ի-
մացական եւ բարոյական կարողու-
թիւնները :

29. Պատրաստ եղիր մաֆիկ ընել
փոքրիկներուն հարցումներն եւ պա-
տասխանէ զանոնք , բնական մեզ
համար աննշան առարկաներ , որ ար-
դայք կը տեսնեն , թռչնոց երգ , մի-
ջատներու ձայն կը շարժեն անոնց
հետաքրքրութիւն : Ահա միջոցներ
մօր մը համար նոր խորհուրդներ
արթնցնելու անոնց մտաց մէջ : Սիրտ
եւ միտք կրնանք կրթել անոնց մով :

30. Այս կերպով մայր եւ որդի
կունենան . քաղցր կենակցութիւն ,
վստահութիւն առ միմեանս , որ ար-
դուն կատարելութեան համակղուն
մեծ միմիթարութիւն կըլլայ ծերաց-
եալ մօր մը :

31. Ի վերջոյ սորվեցուր զաւկիդ
յարգել կիրակի օրն եւ զանազանել
զայն ուրիշ օրերէ . մի թողուր որ
փողոցներն թափառի , կամ լուր օր-

ուան բաներով զբաղի . ինչպէս կիրակի օր հանդերձ կը փոխէ , առաջնորդէ որ այն օր ընթացք եւ զբաղում փոխէ : Գնա՞ եկեղեցի , ձեռքէն բռնած հետդ տար . սովորութիւն ըրէ պաշտամունքէ ետ չմնալ , ինչպէս որ րլլայ եղանակ :

32. Մեր նոր սերունդ սորվելու է կիրակին պահել , ինչպէս կը վայելէ քրիստոնէի մը , քանզի կիրակին ոչ թէ միայն կրօնական զգացմանց վրայ մեծ ազգեցութիւն ունի , այլ նաեւ կը նպաստէ բարոյական , իմացական եւ նիւթական յառաջդիմութեան . եւ ե՞րբ պիտի սկսին սորվիլ մեր զաւակներ եւ ո՞վ պիտի ըլլայ անոնց առաջնորդ եւ ուսուցիչ , հարկաւ մայրը եւ ան ալ մանուկին կանուխ հասակէն :

33. Ուստի կիրակիին վրայ նայելու ենք իր պարզեւ Աստուածային , պարզեւ՝ մարդոց եւ անասնոց համար , պարզեւ՝ գործաւոր մարդոց , կանանց եւ տղայոց , պարզեւ՝ որոյ նպատակ է երկարել կեանք , մար-

մին առողջ եւ երջանիկ , տոկուն եւ զիմացկուն ընելու , պարզեւ՝ մտաց կարողութիւններն պահպաննելու . վեց օրուան մէջ սպառած մարմնային եւ մտային գօրութեան պակասն լցնելու , հանգստաեամբ կազզութուելու եւ զբագմանց փոփոխութիւնով մտային կարողութեանց պահ մը ուրիշ ուղղութիւն տալու :

34. Կիրակին նաեւ ընտանեաց օրն է , գանձ մ'է հօր եւ մօր համար , որք կրնան անարզել միանալ ամբողջ մի օր իրենց սիրասուն զաւակաց հետ , եւ անոնց շրջանին մէջ անցընել զայն : Կիրակին կուտայ հայրն ու մայր իրենց զաւակաց . յիրաւի օրհնեալ օր , եթէ զիտանանք զայն շահագործել ու անկէ օգուտ քաղել :

ՀԱԳԻԳԻ ԱՒԼԵ

Եէն վէ կիւլեր եիւզիւ պիր զէվճէ խոշ պիր խանէ թէշքիլ էաէր : էկէր պիր քիւմսէ չէն , միւ ֆէրդիհ , սայ-

Պար վէ րիսյէթքեար իսէ , զէվճէսի
էկ իշէրինի կէօրիւր իքէն գալպինտէ
թէրէննիւմ էտէր , վէ գօնասր տգ-
շամիլյըն կէլիալ տէ հայրէթ վէ իս-
թիհուանր իլէ քէնտիսինին կէնդլիյինի
թազէլէյէճէյի վէ մանագատար սատաթ-
լարը սայար : Պէլքի սիլ պու կիպի
պիր մուամէլէյի զափ եախօտ չօ-
ճուգճասընա պիր մուամէլէ սայար
իսէնիզ տէ , նախի հիւրմէթ օլան
զէվճէ տիր քի քէլիմաթ ը թէմափ-
հիյէ իշիտիր վէ թահունէ տէլալէթ
էտէն թէպէսսիւմէյր կէօրիւր : Պէօլէ
պիր զէվճէ է նիյէթլի , իհթիյաթլը վէ
իշկիւզար օլուր : Պէն գօրգագ , մահ-
ճուզ , հալիմ , քէնտի նէֆսինէ կիւ-
վէնէմէյէն ու Փաճըգ պիր գատընըն
քէնտիսինին րէյինէ Փէվգ էլ ատէ
իթիմատը օլուրղինը , վէ էֆքեարընա
րիայէթ էթտիյինի կէօսթէրմէք իշիւն
խասսէթէն վէսիլէյր արայան զէվ-
ճինին գուվզէթպախ վէ սամիմի րէ-
Փագաթը սայէսինտէ ատէթա պիր
չիչէք կիպի աչըլալընը կէօրմիւշիւմ
տիր : Սիլէ էօմրիւնտէ հիչ պիր նիւ-

Փագ ու շիգագ , եէր թութմագ ի-
շիւն հիչ պիր ձէհտ ու չապա , հիչ
պիր հուգուգ ու իմթիյազ տավասը ,
եախօտ , պէնիմ տիր , սէնին տիր ,
կիպի լովագար աղա օլմամալր տըր :

Զէվճ ու գէվճէ եէքտիկէրէրինին
միւթէ մմիւմի տիրէր : Սապըրլը օլմագ
զէվճէնին իւզէրինէ նէ գատար Փարզը
այն իսէ , չէն վէ միւֆէրրիհ օլմագ
տախօտ զէվճ իւզէրինէ այնի տէրէճէ-
տէ Փարզ ը այն աըր , Խանէյէ սէ-
վինն վէ մէսէրրէթ կէթիրմէք զէվ-
ճին վազիփէսի օլուրղի կիպի , էվին
նիզամ ու ինթիլալընա պագմագ
տախօտ զէվճէնին վազիփէ ի միւքէլ
էֆէսի իգիյիզասընտան տըր : Օլ
աիլէ քի անըն րէսսիսինին հէր
կիւնքի մէտէքի հայաթ ը ատէթա
պիր իյտ ի մէսէրրէթէ թահպիլ էտէր ,
ու րէխոէ կէօյա սէմավի նիմէթ ու
պէրէքէթ տիր :

ՓրօՓէսօր Փալմէր կէնճ գրզլար-
տան իպարէթ օլան պիր սընրփ շա-
կիրտանա իսիթապէն պիր տէֆա ի-

ըատ ը քէլամ էթայիշինտէ անլէրէ
տէտի քի , «Թէէմին ի իսթիգպալ
էթմէք իշխւն գափտէ ի եէկեանէ՝ եա-
լընըզ պագմագ օլմայրալ . տիգգամթլէ
պագմագ , վէ էթրաֆլյլէ պագմագ-
տան իսպարէթ տիր : Տիգգամթ էտի-
նիզ , կէօղլէրինիզի աչըպ հէր չէյէ
էյիճէ տիգգամթ էտինիզ : Ալէմտէ
ազլ ու ֆիքրինիզի իմալ ու իսթիմալ
էտէրէք իմրար ը հայաթ էտինիզ : »



ԱՌՈՂՋԱՊԱԱՀԿԱՆ

ԱՌՈՂՋԱՊԱԱՀԿԱՆ ՔԵՐԱԿԱՆ

1. Մեր բնակարաններ պարտին
պաշտպաննել զմեղ արտաքին ամէն
մթնոլորտական վեասակար ազդեցու-
թիւններէ , կիզիչ տաքութենէ , զի-
շերուան խաւարէն , փոթորիկէ , օղի-

փոփոխութիւններէ եւ ցուրտէ :
2. Մեր բնակարանններուն միջո-
ցով է որ մասսամբ մը մասնաւոր կի-
մայ մը կը պատրաստենք մեզ հա-
մար , որ արտաքին կլիմայէն կը տար-
բերի իր մեղմութեամբ եւ միօրինա-
կութեամբ :

3. Եւ որովհետեւ օրուան մեծա-
գոյն մասը մեր բնակարաններուն մէջ
կ'անցնենք , ուստի մեր բնակարան-
ներ մեր կենաց մեծագոյն մասին մէջ
մեծ ազդեցութիւն ունին մեր վրայ :

4. Բնակարան եթէ առողջարար
է եւ ըստ պահանջի կարգագրուած ,
յայնժամ վեասէ կ'ապահովէզ զմեղ ,
ընդհակառակն եղած ատեն , նա , բուն
մեր բնակատեղին , տունը . մեր կենաց
ու առողջութեան աւերման ու քայ-
քայման կը նպաստէ : Տեսնենք ու-
րեմն թէ ո՞ր բնակարան առողջարար
եւ ո՞րն ապառողջ է :

5. Առողջարար է քաղաքին արեւ-
մըտեան կողմ բնակիլ . քանզի խոնաւ
արեւմտեան հովեր գետինը աւկելով
արեւելեան կողմ կը քշն աղատեղու-

թեան միքրոպներ . արեւելեան հով
բարձրէն անցնելով զայս գործ չկըր-
նար կատարել :

6. Առողջարար է բնակութեան ,
աշխատութեան եւ մանկանց յատ-
կացեալ սենեակներ բնակարանին
արեւմտեան կողմ ունենալ , որով
ամառն բոլոր կէս օրէ առաջ եղած
ժամանակ զով կ'ըլլայ , քանզի արե-
գակ տան այս մաս կէս օրէն ետեւ
կը շօչափէ :

7. Առողջարար է սանդուխ , խո-
հատուն , սեղանատուն , ճեմիշ եւն .
տան հիւսիւսային կողմ զետեղել ,
որպէսզի անոնք շարունակ զով օդի
հոսանքի ազդեցութեան տակ ըլլան :

8. Առողջարար է աշխատութեան
ու քնանալու համար է՞ն մեծ սեն-
եակներն յատկացնել , քանզի հոն օր-
ուան մեծագոյն մաս կ'անցնենք :

9. Առողջարար է սենեակներուն
պատերն մշտագալարներով զարդա-
րել , նաեւ պատուհաններուն առջեւ
ամառը ծաղիկներու թաղարներ զե-
տեղել . բոյսերը աճելով օդին մէջի

ածխածինը կը ծծեն ու թթուածին ,
ամոնեաք եւլն . կ'արտաղրենա :

10. Առողջարար է գիշեր ու ցե-
րեկ բոլոր տուն թարմ օդով ողողել
առանց օդի հոսանք պատճառելու :

11. Առողջարար է ձմեռը քանի
մը սենեակ ի միասին տաքցնել եւ
սենեակներ միացնող դռներ բաց թո-
ղուլ որ հաւասար ջերմութիւն ըլլայ
ամէն կողմ :

12. Առողջարար է ձմեռը սեն-
եակին ջերմութիւն բէօմիւրի 15 աս-
տիճանէ վեր չանել :

13. Առողջարար է սենեակներուն
տախտակամած խսիրով , գորգով եւլն ,
ծածկել , ասոնք ջերմութիւն կը պահ-
պանեն . գորգերն թանձր ըլլալու են .
եթէ օգուտ պիտի ընեն :

14. Առողջարար է հնար եղածին
չափ երկայն ու լայն անկողինի մէջ
պառկիլ :

15. Առողջարար է անկողինի ըս-
պասներ յաճախ օդին եւ արեւին մէջ
դնել , մաքրել եւ լուալ , խոնաւու-
թիւն ու գարշահոտութիւն պէտք է

միշտ ջնջել :

16. Առողջարար է անկողինի այն-պիսի դիրք տալ որ ոտքեր պատին ուղղուին եւ գլուխ ազատ ըլլայ , որպէսզի գնացողին ջնչառութեան գործարանք ազատ եւ անարգել գործեն :

17. Առողջարար է այնպէս ծածկուիլ որ ոտքեր խիստ տաք , կուրծք եւ որովայք չափաւոր տաք եւ գլուխ գաղջ ըլլայ . ուստի փետուր բարձեր պէտք չէ գործածել . ոտքերուն գործածէ փետուրներ :

18. Առողջարար է անկողինին քով տախտակամածին վրայ $1\frac{1}{2}$ կանգուն երկայն ու կէս կանգուն լայն գորգ մը տարածել :

19. Առողջարար է անկողինէն ել-ելուն պէս գուլպաներն եւ մուշտակէ մուճակ հագնիլ , որք ամէն երեկոյ անկողինին քով պատրաստ ըլլալու են :

20. Առողջարար է անկողինին սենեակ յարկին տակ փոքր պատուհան մը գնել որ վերէն վար կը բացուի ,

չուանէ լարով մը . ասով միշտ մաքուր օդ կրնայ ստացուիլ . երբ պէտք ըլլայ :

21. Ապառողջ է սակայն նոր շինուած տան մէջ բնակիլ դեռ լաւ մը չջորցած , նոյնպէս նոր պատանա եղած սենեակներ բնակիլն :

22. Ապառողջ է սենեակներուն պատերն կանանչ ներկել , նաեւ կանանչ թսւղթով պատերն գրուագել , կանանչ վարագոյներ ալ վեսակար են :

23. Ապառողջ է սենեակներուն տախտակամած կակուղ տախտակներով շինել , որով խոնաւութիւն եւ տեսակ տեսակ միջատներ յառաջ կուգան :

24. Ապառողջ է խիտ ի միասին բնակիլ մէկ տան մէջ . օդը կապականի եւ յաճախակի հիւանդութիւններ կը պատահին : Նաեւ մութ տեղեր բնակիլն վեսակար է , ասով մարգ մելամաղձոտ , թոյլ եւ ախտաւոր կըլլայ : Խաներուն անկիւններն բնակողներն օրինակ են :

25. Ապառողջ է բնակարանին մօտ աղբանոց ունենալ քանզի դուրսէն ներս եկած օդ ապականեալ կը լւայ : Արտաքնոցներն ալ հնար եղածին չափ պէտք է բնակարանէն հեռի եւ մաքուր պահել , փոխանցիկ հիւանդութիւնք անկէ յառաջ կուգան :

26. Ապառողջ է չափէն աւելի — 15 ասաթճան բէօմիւր — տաքցնել սենեակ , գլխու ցաւ , հարրութիւն եւ կուրծքի իջուածք ասկէ յառաջ կուգան :

27. Ապառողջ է «աժան» բայց գէշ լոյս տուող ճրագներ գործածել . նաեւ մարած կազի լամպան անկողինի սենեակ պահել , ասկէ յառաջ կուգայ գլխու ցաւ եւ պառյա , սրտի խառնութիւնը :

28. Ապառողջ է լամպան առանց հովանիի գործածել . գեղին լոյսը որ լամպայէն կը ցոլանայ աչաց վնասակար է :

29. Ապառողջ է յարդէ անկողինի վրայ պառկիլ , քանզի յարդ խո-

նաւութիւն կը ծծէ , փոսիոր—քիւֆ — կը պահէ , եւ փոխանցիկ թոյն կը ծածկէ :

30. Ապառողջ է խոհանոցին պատուհաններն վարագոյրով ծածկել , քանզի վարագոյրներն փոշի եւ գոլորոշի կը հաւաքեն եւ կը պահեն : Խոհանոցին մէջ կօշիկ , հանդերձ մաքրել յոյժ վնասակար է , ազտեղութիւն կը հաւաքուի ասով , սենեակին մէջ կերակուր եփել շատ վնասակար է , կահ կարասիք ամէն հոտ կը ծծեն , եւ չար արկածներ կը պատճառեն :

Չափաւոր կերակուր կերկարէ կեանի

Մեր կերակուրները պատրաստողները յիրաւի մեծ պատասխանատութեան ներքեւ կը գտնուին : Անոնք զիւրամարս նիւթերը անմարսելի կամ գտուարամարսելի ուտեստի կը փոխեն , եւ մենք կ'ուտենք զանոնք եւ կը տառապինք , Բայց խոհարարները

չեն միայն որ մեղաղբուկելու են : Մարդիկ ալ չափեն աւելի կ'ուտեն , կ'ուտեն ինչ որ իրենց քիմքին հանձելի կուգայ . զիտնալով հանդերձ թէ իրենց ստամոքսներուն չյարմարիր : Զափազանց ուտելու կամ շատակերութեան ունակութիւնը , հասարակօրէն մանկական հասակին մէջ ծագում կ'առնէ : Տղին այն ուտեսատք միայն տրուելու է որուն պէտք ունի բնապէս , եւ պէտք չէ թոյլ տալ որ որկրամոլ ըլլայ : Երբ մարմնին աճումը իր կատարելութեան կը հասնի , այն ատեն մարմննը կը սկսի գործածուելու քանակութենէն աւելի ճարպ մթերել եւ մկանները անոնց կարողութենէն աւելի կ'աշխատցնէ : Կամ , եթէ շատակերութեան արդիւնքը գրութիւն չըլլայ , գյոււարամարսութիւն , տենդեր , յօդացաւութիւններ , մաղձախտ եւ ուրիշ հիւանդութիւններ կ'ըլլան : Ժուժկալութիւնն ու կերակուրի չափաւորութիւնը պիտի վտարեն հասարակ հիւանդութիւնները այն անձերուն մէջէն որոնք պէտք

է կեանքին բնական տեւողութեան չափ ապրին :

Առաջ կարագ կերկ

Լրագիր մը կ'ըսէ թէ ոչ մէկ ուտեստային բարեփոխում մանուկներու առողջութեան աւելի նպաստաւոր է եւ մանաւորապէս գնտախտէ պահպանող՝ քան կարագին աւելի շատ սպառումը : Մեր մանուկներուն կը սորվեցնենք որ կարագը խնայութիւնով գործածեն , եւ կ'ըսենք անոնց թէ պէտք չէ որ շատ ուտեն անկէ վասն զի որկրամուլութիւն եւ շուայլութիւն է : Կարագը աւելորդ համազամ մը կը նկատուի , հացին համեղութիւն տալու համար գործածուած մանաւանդ՝ քան ինքնին իբրեւ ամենակարեւոր ուտեստ . Մինչեւ իսկ աւելի հարուստ զասակարգի պատկանող առանձին ընտանեաց մէջ այս կանոնները կը տիրեն աեղանին վրայ : Եւ դպրոցներու եւ հանրային հաս-

տատութիւններու մէջ ալ նոյն կա-
նոնները կը նկատուին խնայութեան
նպատակով։ Քչիկ մը կարագ կը տըր-
ուի այնպիսիններու որոնք ուրախու-
թեամբ պիտի սպառէին հնգպատիկը։
Ուր որ տան մը մէջ խնայութիւն կը
համարուի կարագին սակաւ կիրառու-
թիւնը, ճիշդը խօսելով՝ յաճախ մե-
ծածախ խնայութիւն է։ Վատառողջ
անձ մը այդ խնայութեամբ աւելի
ծանր ծախք կ'ընէ քան զոր պիտի
ընէթ աւելի առատաձեռն նախաճաշ
մը վայելելով։

Մանուկին համար կարագին սպա-
ռումը, փոխանակ կրծագելու, աւել-
ցուցէք։ Թող անոր կիրառութեան
սահմանը որոշէ մանկան մարսողական
կարողութիւնը եւ որովայնի պնդու-
թեան միտումը։ Շատ մանուկներու
կրնայ թողուիլ որ իրենց միտումնե-
րուն հետեւին, եւ անոնք իրենց օգ-
տակար եղածէն աւելի պիտի չուտեն,
կարագը պէտք է որ ընտիր տեսակէ
ըլլայ եւ պաղ ուտուի։ Հացի, կար-
մրցուած հացի, պիսքիւի, փաթա-

թէսի եւ բրինձի հետ ուտել աղէկ է։
Կարագ ուտող մանուկներէ ուրիշներէ
քիչ կը մսին եւ աւելի քիչ ենթակայ
կ'ըլլան ինֆլուէնցայի։ Դիւրաւ հար-
բուխ չեն ըլլար։ Մանուկներու հա-
մար խօսելու ատեն երբեք միտքո այն
չէր որ միւս հասակներու պատգա-
նողները դուրս ձգեմ, մասնաւրա-
պէս նորատի չափահամները, Եւ սա-
կայն չափահաս սնձինք կենդանական
իւղեր աւելի առատօրէն կը գործա-
ծեն քան մանուկներէն շատը։ Բաց
աստի, արտօնեալ են աւելի աղատօ-
րէն ընտրութիւն ընել անոնց յատկու-
թեան եւ քանակութեան մասին։

Հանգսեան օգուտները

Ինչ են այն գործնական արդիւնք-
ները, որ կը ծաղին աղէկ կանոնա-
ւորեալ հանգիստէն։ Աղէկ հանգստա-
ցած ըլլալը պարզապէս կը նշանակէ
լիովին պատրաստ ըլլալ մեր առջեւ
գտնուող գործը կատարելու՝ զիւրու-

թեամբ եւ հանգստութեամբ : Իրօք լաւագոյն գործը զրեթէ միշտ այն է որ զիւրութեամբ կը կատարուի : Հանձարեղ գործուորը , ուրախանալով իր ոյժին վրայ , օրական գործերը կը կատարէ զիւրութեամբ եւ հանգստութեամբ : Եւ զանոնք իրեն նեղութիւն չնամարիր : Ատենաբանը իր ունկընզիրներուն կ'իշխէ իր մատային զօրութիւնով , եւ ոչ թէ ջղաձգական ոյժով : Մատոր աշխատութիւն ունեցող անձինք , որոնց ուղեղը լաւ կը պահպանուի հանգիստով եւ անունով , իրենց աշխատութիւնները զիւրութեամբ եւ ճշդիւ կրնան կատարել : Դպրոցական աղայ մը որ ժամանակ ունի բուժուելու իր երէկուան յոգնութիւնէն յառաջ եկած զիսացաւէն , կրնայ այսօր իր գասին երթալ առանց գմուարութեան : Զին որ բաւական հանգչած է՝ կրնայ վաղել թէ՛ ինք հաճոյք զգալով եւ թէ՛ զինք կառավարողներուն հաճոյք տալով : Մինչեւ անդամ շուն մը , երբ լաւ ճաշ մը ըրած է եւ մրափած է կրակին առ-

ջեւ զրուած փսիաթին վրայ , կրնայ աւելի կորովով եւ գոհունակութեամբ հաջել : Կեանքին բոլոր ասպարէզներուն մէջ կը տեսնէք թէ աղէկ յաջողողները այնպիսիններն են որ կը գործեն մեծագոյն զիւրութեամբ եւ զուարթութեամբ : Ասոնք անոնք են որ ժամանակ կ'առնեն իրենց կատարելու պարտականութիւններուն պատրաստուելու համար : Կը յիշեմ թէ . երբ աղայ էի . կը կարծէի թէ մեծ մարզիկ ամէնն ալ նիհար , հոգերով մաշած : յոգնած երեւոյթով անձինք են : Բայց նշանաւոր մարդոց մեծագոյն մասը զոր աեսած եմ , քաջառողջ եւ կորովի անձինք են , եւ այնպէս կը թուի թէ երբեք իրենց անհաճոյ զործ մը ըրած չեն : Ամէնքս ալ լսած ենք ուսանողներու վրայ , որոնք ստիպուած էին մինչեւ կէս զիշեր աշխատիլ ճրագի լուսով իրենց առջեւ գտնուած դասին ափրանուու համար : Բայց զիտած եմ քսան տարիներ գոլէճի աղոց մէջ բնակելու միջոցիս թէ լաւագոյն եւ յաջողագոյն

ուսանողները երբեք մէկ վայրկենի
քուն չեն կորսնցներ յանուն պարտա-
կանութեան , Երբեմն երբեմն անկիրթ
մէկը որ գիշերուան մը քունը կը
կորսնցնէ անմտաբար՝ յաջորդ գիշեր
իր դասերը սերտելու համար պէտք
կ'ունենայ արթուն մնալու . եւ ահա
այն ժամանակ ընդհանրապէս անկա-
տար կերպով կը սորվի դասերը : Հա-
մառօտիւ , պաշշաճ ժամանակին եւ
զգուշութեամբ վայելուած հանգիստը
կը պարգեւէ ոյժ , սփոփանք , յաջո-
ղոթիւն եւ երջանկութիւն :

Ք ու ն

«Բնութեան անոյշ վերանորոգիչը ,
բալասային քուն , » «թէ որ կը քնա-
նայ , կ'ապրի ! » Բազմաթիւ այսպիսի
խօսքեր կարելի է յառաջ բերել թէ
ներշնչեալ թէ՝ աններշնչեալ գրու-
թիւններէ աղէկ եւ առողջ քունի կա-
րեւորութեան վրայ : Ամէն գիշեր ունի
ժամ առողջ քուն հարկաւոր է ամէն

հասարակ մահկանացուներու : Կրնան
թէպէտ յառաջ բերուիլ քանի մը բա-
ցառիկ օրինակներ , ինչպէս Ալէք-
սանտը Յոն Հումպոլտը , ցուցնելու
համար թէ այն անհամաները չորս ժամ
միայն կը քնանային . եւ մինչեւ ին-
նուսուն տարի ապրեցան : Հումպոլ-
տի նման մեծ եւ օգտակար հարիւ-
րաւոր օրինակներ հնար է յիշել . ո-
րոնք փորձեցին Բնութիւնը խարել
եւ պակսեցնել անոր հանգստեան ժա-
մերը , փոքրագոյն չափին իջեցնելով
քունին տեւողութիւնը . եւ այդ կեր-
պով իրենց կեանքերը շատ մը տարի-
ներ կարծեցուցին : Ասոնց մէջ ամե-
նէն նշանաւորն է Նափոլէոն , որ հինգ
ժամ կը քնանար : Մեռաւ 55 տարե-
կան , թունը լաւագոյն գեղն է եւ
առողջութեան ապահովագոյն վերա-
նորոգիչը : Բոլոր ուրիշ առանին եւ
մասնաւոր գեղերէ աւելի կ'արժէ ,
նաեւ այլաբուժութենէ եւ նմանա-
բուժութենէ աւելի : Կանուխ ելլելը
անշուշտ վեասակար է առողջութեան
եթէ մարդ իրիկունը կանուխ անկո-

դին չմաներ : Անկողին մտիր կէս զիշերէն Յ ժամ առաջ եւ ելիր Յ ժամ ետքը , կամ՝ կէս զիշերէն Յ ժամ առաջ եւ ելիր Յ ժամ ետքը : Այսպէս Բնութեան կուտաս բաւ ական հանգստանալու ժամանակ , պայմանաւոր կէս ժամէն աւելի չանցնի մինչեւ որ քունդ տանի : Եթէ ոչ՝ կէս ժամ աւելի ուշ պէտք է ելլել : Արթննալէդ անմիջապէս ետքը մի ելլեր : Կազմութեան համար սաստիկ ճգտում ըսել է այդպէս ընելը : Տղան մի զրգուր կամ անկողինէն դուրս քաշեր արթննալէն անմիջապէս ետքը : Մի երբեք արթնցներ զանիկա խորունկ քունէն . կրնայ անոր զդային դրութիւնը խանգարուի : Տղան երբեք բանի անկողին մի դներ անոր քունը գալէն առաջ : Այսպիսի բան մը թէ՛ անգթութիւն է թէ՛ վնասակար առողջութեան : Պառկել երթալէ տռաջ միշտ ջիզերդ հանդարտեցուր հաճելի ընթերցումով կամ խօսակցութեամբ , որպէս զի պա՛ռկածիդ պէս քունդ տանի : Վրադ ծանր վերմակ չկենայ

քնացած միջոցիդ : Արգելք կ'ըլլայ արիւնիդ յրջանին եւ անհաճոյ երազներ տեսնալու պատճառ : Պէտք է միայն ասուեակէ (ֆանէլա) վերմակ առնել : Եթէ բաւական չտաքցնէ , հատ մըն ալ աւելցուր : Ննջարանիդ մէջ միշտ առատ թարմ օդ պէտք է կենայ : Մինչեւ իսկ ամենէն ցուրտ եղանակներուն , պատռեանին վերի ապակեփեղկը պէտք է քանի մը մատնաչափ վար իջեցնել որպէս զի մաքուր օդ ներս մանէ : Ննջասենեակին բարեխսառնութիւնը պէտք չէ որ 18 աստիճանէն վեր ըլլայ : Մանաւանդ նայէ որ աղան երբեք մտքի տաքնապ չունենայ անկողին մտնելու ատենը : Քունին նախորդ քանի մը վայրկեանները պէտք է որ խաղաղ եւ հանգարտ ըլլան :

Զօնուզրաւ իշխան մեյվէ վէ բարպար

Վագթլը վագթորդ , եանի՛ եէմէք վագթընտան պիլ միւտէթ էվկէլ եա

աօնրա , հէր նէ օլսա , վէ նէ գատար զարարսըզ տա պուլունսա , պիր չէյ եէմէք փէք զարարլը տըր : Հաթթա չօճուղըն աղլատըզը վագրթ օնսա վագրթը վագրթսըզ մէմէ վէրմէք պիլէ էյի տէյիլ տիր :

Մէմէ էմէն չօճուղլարըն չօղու միտէ ֆէսատընա օղրարլար իսէ , պունալ՝ մուզիրը ատէթլէրաէն նէշէթ էտէր : Պունընլէ տէմէք իսթէմէյօրըմ քի , սինն ի պիւլուզէ էրմիշ օլանլար նէ վագրթ եէմէք եէրլէր իսէ , չօճուղլարա տա այնի վագրթլարտա եէմէք վէրիլմէլի տիր : Քիւչիւք չօճուղլար էքսէրիյա կիւնտէ պիր գաչ տէֆա եէմէք իսթէրլէր : Լաքին պունընլէ պէրապէր , չօճուղլարա եէմէք տախիմ մուայեէն վագթլարտա վէ մուայեէն մըգաարլարտա վէրիլմէլի տիր : վէ հիչ պիր քիմսէնին պունա միւտախէլէ էթմէսինէ միւսաատէ էտիլմէմէլի տիր :

Հաթթա թագէ վէ էյիճէ եէթիշմիշ օլան մէյվէլէր , խուսուսի պիր միգաարտա վէ մուայեէն վագթլար-

տա փէք չօդ քիմսէլէր իշիւն ֆախտէլի իսէլէր տէ , հէր տաէմ իշիւն ֆախտէլի աէյիլ ափրլէր : Պիւլուղէ էրմիշ նիշէ քիմսէլէր պիր նէվ միտէ ֆէսատընա օղրամագարըն պէօյլէ մէյվէլէր եէյէմէզլէր : Հէր նէ զէման չօճուղլարա մէյվէ վէրիլէճէք իսէ , եէմէք իշիւն սօֆրայա օթուրաթզարը զէման վէրիլմէլի տիր . մէսէլա (տախմա եալընըզ թազէ վէ էյիճէ տէյմիշ օլան մէյվէլէր իշիւն տէմէք իսթէրիզ) , գուշըզ թատմընա մէյվէ իլէ պաշլանմալը , վէ էօյլէն թատմլարընա տախի մէյվէ իլէ խիթամ վէրիլմէլի տիր :

Եկէր չօճուղլար եէմէքլէ պէրապէր սիւտ իշմէքաէլէր իսէ , վէ էկէր մէյվէ ալէլ ումում սիւտ իլէ եագըշմայաճաղը զանն օլունան պիր նէվտէն իսէ , օ զէ:նան անլէրէ մէյվէ վէրմէք իշիւն էօյլէնտէն էվլէլ մուայեէն պիր սաաթ թային օլունմալը տըր : Պուն սուրէթին անլէր իշիւն տահամիւնասիպ օլաճաղը չէօյլէ տուրսըն , պունընլէ ղըտա եալընըզ մուայեէն

վագթլուրտա ալընմալը արը իսուսուսնտաքի փէք մուհիմմ օլան տէրսի էօյրէնմիշ օլուրլար :

Նէքէր հատա ը զաթինտէ եէնէտէք օլսա , վէ եախօտ եէմէք իշէրիսինէ չօդ գարըշաըրլմըշ եախօտ եէմէք իւզէրինէ չօդ էքիլմիշ պուլուսսա , հիչ մագպուլ աէյիլ տիր . վէ էքսէրիա ֆիիլէն զարարլը արը : Նէքէրլէմէլէր իսէ պու զարարը տահազիյատէ արթըրըրլար , չիւնքի շէքէրէ ալէլ ուսմում տահա ազ մագպուլ պիր շէյ իլավէ օլունմըշ օլուր : Ինսանըն ասըլ զըտասընը թէշքիլ էտէն եէյէտէքլէրտէ զաթէն պիր միգտար շէքէր մէգնուտ արը : Եալընըղ մէյվէլէրտէ աէյիլ , պազը սէպէլէրտէ տախի , էզճիւմլէ փանճարտա . շէքէր վար արը . քէղալիք մըսըր պուզտայընըն պազը նէվլէրի տախի շէքէրի հավի տիրլէր :

Վիւճուտըն հագիգի իհթիյաճընա կէօրէ եէյէճէքլէրէ փէք ազ շէքէր իլավէ էթմէգ կէրէք տիր . շու շարթլէ քի եէմէքլէր միւխթէլիք շէշտ-

լէրտէն իպարէթ օլսուն . Լաքին տիկէր թարաֆտան իհթիմալ քի , փէք չօդ քիմսէլէրձէ , թաթլը եէմէքլէրտէն պիր միգտար եէմէք ճաիզ օլսուն : Հալ պու քի միգտարընըն թամմնէ գատար օլմասը մէսէլէսի՝ միւխթէլիք վիւճուտլար վէ տէրէճէի հազմւար իշիւն թէխալլիք էտէր . Թէտպիրսիզճէսինէ թաթլը եէմէքլիյին չօճուղլարըն տիշլէրինէ վէ ֆիիլի հազմէրինէ մուճնիս օլարզը մազարրաթէ էնիյէթլի տիշճի վէ հէքիմլէրին էֆքեարընճա , փէք պէօյիւք տիրլէր — տահա ուզագ թէհիլքէլէրինի հիսապա տախիլ էթմէյէլիմ : Էպէվէյնին քէնտի էվլատոլարընըն իսթէտիքլէրինի զարարըզ շէյլէրի իծրա էթմէքլիյէ միւմքին վէ ճաիզ իսէ մուվաֆագաթէ կէօսթէրմէլէրի թապիի տիր :

Զօճուղլար էքսէրիյա թաթլըլարը սէվէրլէր . հալ պու քի պու կիպի եէմէքլէր եէմէք իշիւն չօդ աէֆա չօճուղլարտա կէօրիւլէն՝ աշուրի պիր իսթէք օլուպ , թիւթիւն եա թէնպէքի իշիւն կէօսթէրիլէն իսթէք՝ կիպի

անճագ ալըշըգիըգ նէթիճէսի տիր .
թապիի պիր իհթիյան տէլիլ տիր :
Զաննըմրզնա , պու կիպի զըաալարըն
զարար վէրմէսինի իսթէր իսէք , գու-
րասլիյէ , գայմազլը տօնառուրմա . շէ-
քէր եախօս շէքէրլէմէ կիպի թաթիը
դբաղար թաամ խիթամընտա վէրիլ-
մէլի , վէ նէր պիր չօճուզըն հիսսէսի
էվլէճէ թաեին էտիլմէլի տիր թաամ-
տան էվլէլ թաթիը եէմէքիիք իշթի-
հանըն գափաննասընը մուճիպ օլուր ,
էկէր մէյվէյի հազմ էտէ պիլիրլէր ի-
սէ , կիւնոտէ թաամ իլէ պիրլիքտէ
օլարագ պիր գաչ տէֆա մէյվէ եէտի-
րիէ պիլիր :

Սայզըրզ վէ միւլահազասըգ ագ-
րապա վէ թաըիւգաթա գարշը տաի-
մա իհթիյաթիր տավրաննմագ միւմքին
տէյիլ տիր : Լաքին խըսմ վէ ազրի
պամըզ խարիճինտէ օլան պիրի չօ-
ճուզլարըմրզա պէջոյէ շէլէր կէթիր-
մէքիիք ատէթինոտէ իսէ . պիզ քէն-
տիմիզ օնա պու ատէթաէն վազ կէշ-
մէսինի իխթար էթմէլի իզ :

ԵՐԿՐԱԳՈՐԾԱԿԱՆ

Արեգական ճառագայթից ազդեցու-
րիւնը՝ երկրագործութեան վրայ

Լոյսը կենդանեաց եւ բուսոց
կեանքին խիստ պիտանի ու կարեւոր
է . բուսոց գոյնզգոյն ըլլալը լոյսի շը-
նորհիւ է : Պէտք եղած քանակու-
թեամբ լոյս չ'եղած ժամանակ բոյ-
սերը տկար ու նիհար կ'ըլլան , եւ
այս տեսակ բուսոց պտուզները ան-
համ կ'ըլլան . իսկ ճառագայթից ազ-
դեցութեան տակ եղաղ բոյսերը թէ՛
զօրաւոր եւ թէ պտուզներն ալ հա-
մեզաճաշակ կ'ըլլան . Նոյնպէս եւ
ջերմութիւնը թէ՛ բուսոց եւ թէ
կենդանեաց հոգին է , եթէ վայր-
կեան մը ջերմութիւնը աշխարհէս
բոլորովին վերնայ յայնժամ ամէն ինչ

սառուցեալ վիճակի կ'ենթարկուի .
ջերմութեան նուազութեան պատճա-
ռաւ բեւեռի կողմերն ու Սիսերիայի
հիւսիւսային կողմերը բոյս չեն զբա-
նուիր : Սրեգակը բուսոց վրայ ըրած
ազգեցութեան չափ ալ կենդանեաց
վրայ կը ներգործէ : Սովորաբար զիւ-
շացի տղոց կարմրերես , կայտառ ու
զօրաւոր ըլլալուն պատճառը արեգա-
կան ջերմ ճառագոյթից ներքեւ օրն
ի բուն աշխատելնին է :

ԿՂԻՄԱՅ

Ի՞նչ սերմ կուզէ թող ըլլայ , զայն
ցանելէն առաջ կղիմային անոր վրայ
ունենալիք ազգեցութիւնը զիտնալ
հարկ է . զի իւրաքանչիւր բոյս իրեն
յատուկ լոյսի , ջերմութեան եւ խո-
նաւութեան դէմ զատ զատ կարիք
ունի : Զի կան բոյսեր որք զէրօյէն
նուազ 20° ցրտութեան տոկալով ձը-
մեռը չեն ոչնչանար . կան բոյսեր ալ
որք ցուրտի չկարենալ տոկալով ջեր-

մութեան աստիճանը զէրօյի իջածին
պէս կ'ոչնչանան զօր . կորեկ եւ ճա-
կընդեղ (բանճար) . կղիմային տեղեակ
ըլլալու համար զիտարանները շատ
մեծ օգուտներ կ'ընձեռեն :

Եւրոպայի մէն մի անկիւնը զի-
տարաններ կան , որք ամէն օր մը-
շակին հարկ եղած տեղեկութիւննե-
րը կուտան :

Երկրի մը բոյսը նոյն տեղւոյ կը-
լիմային մասին քիչ մը տեղեկութիւն
կրնայ տալ . բլրային տեղեր գանուած
բոյսք դաշտերու ցած տեղերու , խո-
նաւ արտերու բոյսերէն աւելի ցուր-
տի բուքի կը զիմանան , բոյս մը որ
կանուխ ցանուի արդիւնքը այնքան
աւելի առասա կ'ըլլայ այսու ամենայ-
նիւ գարունը ցանուած կարգ մը բոյ-
սեր կան որք եղեամէ պահպանուելու
համար ուշկեկ ցանել հարկ է . զօրօ-
րինակ կորեկ , բամբակ , եւայլն :

ՀԱԽՈՑԻ ՇՈՒՐՋԸ

Հաւազգիք նախնի ժամանակներէ
ի վեր Հնդկասամնէ եւ Ովկիանիայէ
աշխարհիս հեռաւոր կողմերը փոխա-
զբուած ըլլալ կը կարծուի . որոյ
մննդարար հաւկիթէն , համեղ միսէն
ու փետուրներէն եւ ծիրտէն — որ
խիստ բերրի ազր մ'է — մարդս չատ
օգուաներ կը քաղէ : Հաւազգեաց
յատուկ երեք հիւանդութիւն կայ ,
որոց դարմանը 'ի ստորեւ կը դնեմք :

Պաղլեղի (լոռ) հիւանդութիւնը

Սոյն հիւանդութիւնը սագերու .
բաղերու փոխանցուելով երբեմն բա-
զում նախճիրներ կ'ունենայ , ասոր
դարմանն է՝ քացախի մէջ կէօզբաշի
եւ պաղլեղ (լոռ) հալեցնելով վրձի-
նով մը ոտքերնին ու թաթերնին քը-
սիլ :

Քոլերա (Խանդրախոր)

Այս հիւանդութիւնը ամենէն ա-
ւելի նախճիր ունենալով երբեմն
հաւնոցի ամբողջ հաւերը կ'ոչնչացնէ .
այս հիւանդութեան ենթակայ եղող
հաւու փետուրները վեր կը տնկուի .
կատարը կախ եւ մոռ ըլլալով գար-
շաբոյր փորհարութեամբ կենդանին
կը մեռնի :

Որոյ 'ի գարման հարկ է վարակ-
եալները անջատել , մեռեալներուն
դիակը թաղել , հաւնոցը ծխանելի-
քով (Ախ-Եսէ) մաքրել . մնացեալնե-
րուն մարդ (Այէք օ՛ն) կերցնել , եւ
ալիւրի ու թեփի ջուրին քիչ մը
սիւլֆաթ տը սուս եւ կամ ասիս փե-
նիի աւելցնելով կենդանեաց խմցնել :

Կոկորդի (Պօղու) հիւանդութիւն

Այս հիւանդութենէն գլխաւորա-
բար հաւերը վարակուելով լեզուին

վրայ, բերնին մէջ կարգ մը ամուռ
խաւեր (Դաք) գոյանալով կը բազմա-
նան ու կենդանին շնչահեղձ կ'ընեն.
Այս խաւերը բարակ եւ սուր զմելի-
ով կտրելու հանելու եւ 100 կրամ
ջուրի մէջ մէկ կրամ դժոխաքար (Ֆը-
հէնէմ Ռաշէ) եւ կամ (5) կրամ շապ
ու (10) կրամ լիմոնի ջուր աւելցնե-
լով վրձինով խաւերուն վրայ, եւ
բերնի ամէն կողմը քսելու ու հաւ-
նոցը խիստ մաքուր պահելու է :

Հաւերու հաւկիթ ածելլը

Առ հասարակ հաւերը Փետրվար
ամսոյ մէջ աւելի՛ հաւկիթ ածելու
հակամէտ են, ուստի այս ժամանակ
հաւերը պարարտեցնող կուտ տալու
չ'է, որպէսզի հաւկիթէ չի կտրին :

Եթէ կը փափաքուի առանց եւ-
րոպայէն ընտիր ցեղի հաւկիթ բերե-
լու՝ հաւերու տեսակն ազնուացնել
ու խոշոր հաւկիթներ ստանալ՝ պէտք
է եթէ աքաղաղը Եւրոպական է 8

հաւ կառավարէ իսկ եթէ Ասիական է՝
և հաւ Հաւերը ածան ընելու համար
ամառը եղիճի (Ըսլըկան օնու) կանաչ
տերեւներ մանրելով կուտին հետ
խառն կերցնել . իսկ ձմեռն ալ եղիճի
չոր տերեւներ կերցնելու է :

ՊԱՆՐԱԾԻՆՈՒԹԻՒՆ

Այժի եւ ոչխարի կաթէն պանիր
շինելու համար կաթը կթուելէն 15
վայրկեան վերջը ուլի կամ նապաս-
տակի փորոտիքէն պատրաստուած
մայովի խմորելու եւ մինչեւ մածունի
վիճակ ստանալը կարտելով պարզուա-
(Կէ-ղէ) կոչուած ծրարաձեւ հաստ ու
ցանցառ ծակոտկէն լաթերու մէջ
դրուելով ջուրը քամուելու համար
յարմար տեղէ մը կախելու է . այս-
պէսով պատրաստուած նոր պանիրը
հաստ շերտերու վերածելով կարգ մը
պանիր կարգ մը ալ ըլլալու պայմա-
նով տակառներու մէջ զետեղելու եւ
վրան ալ մաքուր ծանր քար մը դը-
նելու է :

Թէպէտեւ պանիրի քանակը կաթի որպիսութենէն կախում ունի եւ սակայն սովորաբար 20 քաշ ոչխարի կաթէն 6 եւ կամ 8 քաշ պանիր . իսկ նոյնչափ այծի կաթէն 5 եւ կամ 6 քաշ պանիր կ'ելլէ : այսու ամենայնիւ այծի պանիրը կարծր ըլլալուն համար պանիրն ալ զիմացկուն է եւ ոչխարի պանիրէն նախընարելի ըլլալուն պատճառն ալ այս է :

Քաշար պանիր

կուգայ թրլանտացի մը՝ իր երկրին վա-
ղեմի զգեստով եւ բիր մը կը ծօնէ ,
այնուհետեւ Գանատացի նաւա-
վար մը՝ իր թիերով , եւ ի վեր-

ջոյ Հնգիկ մը իր փաթթոցով եւ
մէջքի լաթով : Երբ այս արձանները
բեմէն կանցնին , կաններեւութանան
ուրիշ գունէ մը որ ինքնիրէն կը փակ-
ուի վերջին արձանին զուրս ելլէցն
ետքը : Այն ատեն վերը գանուող ա-
քաղաղը իր թեւերը կը բազիսէ , զլու-
խը . կը բարձրացնէ եւ երեք անգամ
կը խօսի հուժկու ձայնով : Արձաննե-
րը արոյրէ շինուած են , իսկ ժամա-
ցոյցին միւս մասերը՝ թնդանօթի մե-
տաղէ :

Փրոֆ. Մարքոնի գործիք մը հնա-
րած է մասախուզի ժամանակ նաւի
մը զիրքը ոտուգելու համար : Երբ
նաւը հեռագրական կայաններու մօտ
կը գանուի : Գործիքն է հեռագրի ըն-
դունարան մը որ կրնայ թաւալիլ , եւ
երբ հեռագրական կայանին կուղաւի ,
ելեկտրական զանգակ մը կը հնչեցնէ ,
եւ այսպէս կը հասկցուի զիրքը այն-
պէս ճշգութեամբ ինչպէս կողմնա-
ցոյցով կը հասկցուի : Գործիքը պի-
տի փորձուի թրիտանական ջրանցին

մէջ երթեւեկող չոգենաւներուն վրայ՝

Կենթազրուի թէ կատուները կըր-
նան տեսնել մութի մէջ : Զափաւոր
լոյսի մէջ կոտուին աչքին բիբը պըզ-
տիկ եւ ձուածեւ կըլլայ , եւ կէսօր-
ուան արեգակին պայցառ լոյսին մէջ
կը նեղնայ , բայց մութին մէջ բոլո-
րակ կըլլայ եւ լիցուն , եւ այնքան
կը տարածուի որ գրեթէ ամբողջ աչ-
քին մակերեսը կը լիցնէ . Զինացիք
եւ Ափրիկէի սեւամորթ ցեղերէն ո-
մանք շատ անգամ կը զննեն իրենց
կատուներուն աչքերը օրուան ժամը
ստուգելու համար . Արեւելեան Հընդ-
կաստանի բնիկներէն ումանք կրնան
ըսել ձեզի օրուան գրեթէ ճիշդ ժամը
այս հետաքրքրաշարժ միջոցով :

Փախթա , Փերուի մէկ տեղը ,
երկրագնդիս ամենէն չոր տեղն ըլլա-
լու համբոււն ունի : Միջին հաշուով՝
միայն երկու տարին անգամ մը ան-
դրեւ կիջնէ Փախթայի վըրայ .
Բայց անձրեւներուն միջոցը յա-

ճախ շատ մը աւելի երկար կըլլայ :
Անցեալ Փետրուարին , տարուան մէջ
եկած առաջին անձրեւը թրջեց ծար-
ւած ծասքած գետինը : Կէս օրէն 10
ժամ ետքն սկսեց անձրեւը եւ տեւեց
մինչեւ յաջորդ օրուան կէսօրը : Եւ
սակայն այդ տօթակէզ կլիմային մէջ
եօիջը տեսակ երկարատեւ բոյսեր կը
մշակուին , եւ բնիկները իրենց ապ-
րուստը ձեռք կը բերեն տեսակ մը
բամբակ մշակելով որուն երկայն ար-
մատները կերթան կը գտնեն խոնա-
ւութիւն ցամքած գետի մը յատակին
մէջ : Այս բամպակը դիւրաւ կը ծախ-
ուի :

Եռթայի Մեծ Աղի Լիճը (Ամերի-
կա) անցեալ տարուան մէջ մղոն մը
քաշուած է , եւ ոմանք կը կարծեն
թէ առաջիկայ դարուն մէջ ջուրի
զարմանալի այս կուտակութիւնը բո-
լորովին պիտի ցամքի չորնայ : Զու-
րին քիչնալուն պատճառ կը համար-
ուի ոսոգման խրամներուն եւ առու-
ներուն արագ աւելնալը , որոնք ի-

րենց ջուրը կընդունին լճին մէջ վազող գետերէն : Հիմա «աղի անապատ» մը կայ լճէն ոչ հեռու , որ ժամանակաւ ջրով լիցուն էր : Կը կարծուի թէ նոյն խոկ լճին յատակը նըստած աղի խաւին թանձրութիւնը մեծ է :

Ամենէն ընտիր կինամոնը Սէլլանէ կուգայ որ լեցուն է արմաւենիներով , պտերներով (էրէլմի) , երենոսիներով (ասկանօզ) , ճանդաններով (սանտալ աղածը) , քափուրենիներով (քեաֆիրի աղածը) եւ հզօր բռւսականներով , զորոնք կարմիր հողը կարտադրէ անդադար տաք օդին մէջ : Գնուած կինամոնը շատ անդամ կասիա է , կինամոնի ծառին շատ նմանող ծառի մը կեղեւը , Բայց այդ ծառին կեղեւը աւելի թանձր է , համը աւելի բարկ եւ հոտը աւելի զօրաւոր : Կծուութիւնը եւ համեմային բոյրը կինամոնէն շատ աւելի նուազ փափուկ են : Շատ ժամանակ առաջ , երբ կինամոնը առաջին անդամ մուտ գտաւ

Եւրոպա , ժողովուրդը գոհ կըլլար այս աւելի կոշտ եւ աւելի աժան խնկեղնով որ Զինական կինամոն կոչուեցաւ , գլխաւորապէս Զինաստանի եւ Ճափոնի մէջ գանուելուն համար :

Ելեկտրականութիւնը մեծ գործ կը տեսնէ Սինսիննաթիի կենդանաբանական Պարտէզին մէջ : Այդ տեղերը աւրշտկող առնէտներուն ըրած չարիքները մեծ նեղութիւն են , վասն զի առնէտները յաճախ իրենցմէ փոքր կենդանիներու եւ թռչուններու վրայ կը յարձակին եւ կը սպաննեն զանոնք : Առնէտները հեռու պահելու համար փասիաններու (սիւլիւն) ընտիր երամէ մը , թեև ցանկը բաւական ուժեղ ելեկտրական հոսանքի կենթարկուի առնէտը սպաննելու համար : Այս կերպը յաջողած է :

Հարաւային Ամերիկա իր բազմաթիւ տարօրինակութիւններուն կարգը ունի «փըլընդցնող փայտ» կոչուած ծառը , որ այդ անունը կը ստանայ

սա պատճառով որ ոչ ոք կրնայ զա-
նիկա սղոցով կարել առանց փոքրնդ-
ալու , վասն զի անոր նուրբ փոշին
ճիշդ քթախոտի ազգեցութիւնը կ'ընէ .
Յիշեալ փայտը մինչեւ անգամ քերի-
չով (ըսէնաէ) յզկուած ատեն երրենն
կը փոքրնքտացնէ : Անոր չեն զպչիր
ոչ միջատներ , ոչ ճճիներ կա . սստ-
րէի տեսակէ կենդանիներ , Շատ
լեզի է :

Հաշուուած է թէ ապրող ծանօթ եւ
նկարագրուած կենդանիներու տեսակ-
ներուն միւը 400.000է աւելի է . ա-
սոնց մէջ 280.000է աւելի կը հաշ-
ուուին միջատները : Թաշունները որ
բոլոր տեսակ կենդանիներուն մէկ
երեսներորդն են , 13.000 տեսակ կը
համրուին , ձուկերը՝ 12.000 , սողուն-
ները՝ 8.300 , որոնց մէջ օձերը 1.640
են (իբր 300ը թունաւոր) : Մնացած
կենդանիներուն մէջ կան 1.300 տե-
սակ երկակենցաղ , 20.000 սարդի
տեսակներ , 50.000 կակլամիս , 8.000
ճճի , 3.000 փշամորթ , եւն . : Պեր-

լինի բնապատմական թանգարանը
200.000 տեսակ կենդանիներ ունի ,
որ կը ներկայացուին 1.800.000 նմոյշ-
ներով :

Ալել ումում զանն օլունուր քի
պիր ատէմին եիւրէյի տագիգատա 40
տէֆատան աշազը աթմաղա պաշլա-
արդը հալտէ , մուայէնէ վէ միւտա-
վաթ իծրա օլունմազսա , մէվթի վու-
գու պուլուր : Բիվայէթէ նազարէն ,
պու կիւնլէրտէ խասթախանէլէրտէն
պիրինտէ պուլունան պիր ատէմին
անվալ ը սըհհիյէսի եէրինտէ օլարզը
թագտիրտէ , եիւրէյի տագիգատա 18
տէֆա աթմագտա օլարզընտան տօ-
լայը խայլի պէօյիւք պիր մէրագ վէ
հայրէթ հէքիմէրի սարմըլ աըր :

1853 սէնէսինտէ թանզիմ օլուն-
մըլ օլան ըսթաթիսթիգ ճէտվէլէրին-
տէն անլաշըլմըլ աըր քի , պիւթին
մրանսատա 20տէն 80 եաշ արասըն-
տա օլան եաշլարընտա օլուպտա էվ-
լէնմէմիշ պուլունանլար միյանընտա

էվլէնմիշ օլանլարտան զիյատէ վէֆի-
յաթ զուհուր էթմէքտէ տիր : Մէսէ-
լա , 20տէն 30 եաշլար արասընտա օ-
լուպ տա էվլէնմիշ օլան 1,000 քիշի-
տէն սէնէտէ 11.3 միգտարը թէլէֆ
օլույօրլար իքէն , քէզա մէզքիւր
եաշլարընտա պուլունան 1,000 քի-
շտէն անճագ 6.5ի վէֆաթ էտիյօր-
լար : 1863 վէ 1864 սէնէլէրինտէ
իսգօչիատա պու եօլաա ըսթաթիս
թիգ ճէավէլէլէրի թանզիմ օլունարագ ,
կէօրիւմիւշ տիր քի 20 վէ 30 եաշ-
լար արասընտաքի եաշլարընտա օլուպ
տա էվլէնմէմիշ օլան հէր պին քիշի-
տէն սէնէտէ 14.97 քիշի թէլէֆ օլու-
յօրլար . հալ պու քի էվլէնմիշ օլան-
լարտաքի նիսպէթ ի վէֆիյաթ պինտէ
7.24 բատտէսինտէ պուլունըյօր : Տր.
Սթարքըն մուսիրրանէ պէյանընա կէօ-
րէ , էրկէնլիք՝ մուզիրր ի ունէթ պիր
սէնտաթտան , եախօտ հըֆզը սըհնէ-
թէ մուզիրր օլան իգամէթկեանլար-
տան , վէ եա գավախտ ի հրֆզը սըհ-
նէթ իգթիզասընճա իթթիխազը թէտ-
պիր օլունմամըշ օլան շէհր վէ գարի-

յէլէրտէն դայէթ զիյատէ , էօմր ի ին-
անինին զէվալփէզիր օլմասընա պաիս
օլան պիր հալ տըր : Քէզա մրանսա-
տա վէ Խոգչիատա միւշանէտէ օլուն-
մըշ տըր քի , տուլ գարրլար վէ գա-
րրլարը էօլմիւշ օլան էրքէքլէր արա-
սընտա զուհուրա կէլէն վէֆիյա-
թըն միգտարը էվլէնմիշէրէ գըյատէն
տահա զիյատէ տիր :

Էսքի մէթէօրօօժիսթլէրին «քիւր-
րէ երլարրըմը» թապիր էթտիքէրի՝
երլարրըմլար միյանընտա էն միւհիք
վէ էն մուխրիպի տիր : Լաքին պէ-
րէքէթ վէրսին քի պու գապիլ երլ-
արրըմ զայէթլէ նտտիրէն վուգուա
կէլիր , Պէօյէ պիր երլարրըմ պու
քէրրէ Պէլճիգատա Տր. Լանտուա նա-
մընտա մէշնուր պիր ճէրրահա իսա-
պէթ էտէրէք միւմախլէյն էօլիւմտէն
տար գուրթուլմըշ տըր : Լուվլէն շէհ-
րի տար իւլ Փիւնունը մոււալիմէրին-
տէն պուլունան միւմախլէյն տօքթօր ,
պիր խասթայը զիյարէթ էթմէք ի-
շիւն , շէհրի մէզքիւրտէն կինտէն

գարլիչսինէ կիթմիշ իտի : Էսնափի ավտէթինտէ թրէնտէն էներէք իտանէ-սինէ տօդրու եաեան կիտէր իքէն , միւտհիշ կէօք կիւրիւ լմիւսիւ վէ եաղ նոր իլէ պէրապէր օլարագ պիր ֆուրթունա զունուրա կէլիր : Եարը կիճէ իմիշ կիպի զիֆիրի պիր գարան . լըդ օրթալըզը իոթիլա էտէր . պիր հալտէ քի ատէ մծըզազ եօլունուն իւս-թիւնտէքի թէլէկրաֆ տիրէքլէրինի պիլէ կէօրէմէզ պիր հալէ կէլիր : Քէնտի թարիֆի իւզրէ պիր գաչ տա-գիգա սօնրա , աթէշին պիր քիւրէ քէնտինէ չիտաէթլէ չարփարագ քէն-տիսինի ֆըրլաթըզ եօլըն քէնարըն-տաքի խէնտէյին էօթէսինտէքի թար-լանըն իշինէ աթար : Միւմափիշինէն էլինտէ պու սըրատա պիր պէօյիւք շէմսիյէ պուլունրյօր իտի քի . անըն աղաճտան սափընը իքի էլիլէ թութ-մըշ իտի : Պու միւսատէմէտէն սօնրա ազըլ պաշընա կէլիննէ . շէմսիյէնին պէզինին քեամիլէն եանմըշ օլարզընը վէ չէլիքտէն օլան թէլէրինին ատիսի տիւրլիւ տիւրլիւ շէքլ ու պիչիմլէրտէ

գաթլանմըշ օլտըզլարընը միւշանէտէ էթափ : Շիւպհէ եօգ արը քի , շէմ . սիյէնին աղաճ սափը իտի քի քէնտի-սինի գուրթմարմըշ իտի — պու էկէր մատէնտէն օլմուշ օչսա իտի , քէնտի տէրհալ հէլաք օլաճագ իտի : Պու միւսատէմէնին նէթիճէսինտէն օլա-րագ ույուշմուշ օլան գոլարը վէ պա-ճագլարընը գուլլանա պիլիննէյէ գա-տար թամմ օն տազիգա կէչտի : Սօն-րա էլինէ կիթափ :

ՀԱՐՑԱՐԱՆ

Հարբուխի պարզ դարման մը կա՞յ :
— Այո՛ , նեղ բացուած քով նոզէ ամանի մը մէջ եռացա՞ծ ջուր լից եւ մէջը նետէ փոքրիկ դգալ մը քեա-ֆիրիի փոշի . ելած շոգին քիթիդ մէջ քաշէ , բերանդ զոց պահելով .

Յօդացաւի գեղ մը կը խնդրեմ :
 — Գնա բազնիք , լաւ մը քրտնէ
 եւ ապա հետեւեալ բաղադրութիւն
 քսէ ցաւած տեղեր : — Արիթօ . քեա-
 ֆիրի եւ հինա , միմեանց խառնուած
 եւ շիշի մը մէջ լեցուած :

Մանկանց դաստիարակութիւնը
 ե՞րբ կ'սկսի :

— Ֆրէօպըլ կուզէ որ մանկանց
 դաստիարակութիւնն զրեթէ ծնած օ-
 րէն սկսի , եւ դաստիարակն ըլլայ
 մայրը . առ պէտք է զիտնայ աղայ
 մեծ ցնելու արհեստը , զիտնայ նաեւ
 ոչ թէ միայն մարմին զարգացնել , այլ
 նաեւ իւսացական կարողութիւններ .
 մինչեւ Յատրեկան հասակ աղան պէտք
 է պատրաստ ըլլայ մարմնով եւ մըտ-
 քով աշխատիլ որ մանկապարտէզ
 մտնէ :

— Նա որ . կ'ըսէ նուֆէլանտ ,
 տղուն գինի չի տար , ապագային հա-
 մար անոր երջանկութիւնն ապահո-

ված կ'ըլլայ :

Ի՞նչպէս կըլլանք երկայնակեաց :
 — Ամբողջ առողջաբանութեան
 ստուար զիրք մը այս հարցում կրնայ
 լի ու լի պատասխանել . սակայն քեզ
 եւ մեզ համար բաւ է զիտնալ մարմ-
 նոյ ամէն գործարան , ներքին եւ ար-
 ատաքին պարտինք ա'յնպէս խոհեմ
 կերպով գործածել որ երկար կատա-
 րեն իրենց պաշտոն , չափազանց գոր-
 ծածութիւն կը յոգնեցնէ եւ կը թուլ-
 ցնէ ամէն գործարան . Փափուկ գոր-
 ծարաններ զիմացկուն ընելու համար
 խստակեցութեան վարժեցուր , ճրա-
 գին պատրոյգ փոքր ինչ վար դար-
 ձնելով աւելի երկար լոյս կուտայ .
 ուստի մի վատնէր , մի շուայլէր կենսա-
 կան զօրութիւն մանկական օրերէն
 սկսելով : — Ահա երկար կեանք ու-
 նենալու հիմնական պայման :

Բժիշկը ե՞րբէ պէտք է կանչել :
 — Ո՛րքան հնար է բժիշկէ ու
 բժշկական օգնութենէ անկախ ապրիլ

վարժուէ , եթէ ամէն անհանգստութեան համար բժիշկի եւ գեղի զիմելու ըլլաս , գիտցիր որ առողջութիւնդ միշտ ուրիշի օգնութենէն կախեալ պիտի ըլլայ . Զգոյշ եղիր չափազանցութենէ , ապրէ չափաւոր բարեխառնութեամբ : Դեղին ստակը՝ կերակուրին , եւ բժիշկին տալիք վարձքդ՝ խոհարարին տուր . գինիի , օղիի շիշերուն՝ զեղի շիշեր կը յաջորդեն . բաց պատուհաններդ մաքուր օդին , եւ դաներդ կը գոցուին բժիշկին այցելութեան . Անա ասանկ պարզ կանոններու հետեւելով՝ չես կարօտիր բժիշկի մշտատեւ այցելութեան :

Թոքերս ի՞նչպէս առողջ պահեմ ,
— Զով ու մաքուր օդ չնչելով
միայն . գիտե՞ս , այս ի՞նչպէս կըլլայ .
մաքուր օդի մէջ պառյա ընելով , երգելով ու խօսելով :

Ստամոքսս ի՞նչպէս հիւանդութենէ ապահովեմ .
— Միշտ եւ միմիայն առողջարար ,

աննդարար ու դիւրամարս ուտեստ առնելով . կերակուր չափազանց համեմեալ եւ գրգռիչ պէտք չէ ըլլան : Անօթութիւնդ յագեցնելու չափ կեր միայն եւ ոչ աւելի . ծարաւդ յագեցնելու համար խմէ միայն , բայց ջուր եւ օգտակար ոչ-գրգռիչ ըմպելիներ միայն . Փորձէ եւ պիտի համոզուիս ըստւածին :

Մորթի հիւանդութիւնք ի՞նչպէս կարգիլուին :

Մորթը առողջ պահելու համար միշտ մաքրութիւն պէտք է . յաճախ լուացում , բաղնիք , միշտ մաքուր օդի մէջ բնակիլ . շատ տաք եւ շատ ցուրտ կը վնասէ մորթին առողջութեան . Սիրտ ու երակներ ալ այս միջոցներով առողջ կը մնան ու կը զարգանան :

Դիպակ (Ճանֆէս) ի՞նչպէս կը շինեն :

— Դիուրար չէ . դու ալ կրնաս շինել . առ 30 կրամ ձկան սոսինձ եւ դիր 60 կրամ քացախի մէջ , երբ հա-

լի , եռացուր մինչեւ կէսը մնայ .
վրան աւելցուր 30 կաթիլ գարան -
ֆիլի իւղ . այս բազադրութիւն քսէ
վրձինով 2-3 անգամ մետաքսին վրայ
ու կըլլայ դիպակ :

**Յարդէ գլխարկի ինչպէս կը ճեր-
մըկնայ :**

— Օճառէ՛ գլխարկը եւ բաւական
կարծր վրձինով մը շփէ , սենեակը
լաւ մը գոցէ , եւ զլիսարկը կախէ
հոն , կրակարանին մէջ ծծումբ դիր
եւ սենեակին դուռը գոցէ . 24 ժամ
թող մնայ այսպէս : Գլխարկը կա-
կուզցնելու համար 3-4 ժամ թաց
հաստ կտաւի մէջ փաթթէ , ի վերջոց
հակառակ կօզմէն արդուկէ , քոլայի
տեղ խէժ զործածելով :

**Զեռք ճերմկցնելու համար ի՞նչ
կընենք :**

— Գետնախննձորներէն էն ճերմակ-
ները զատէ , կեղեւէ եւ քիչ մը կա-
թով եփէ որ հալի . ասով լուա՛ ճեռ-
քերդ , որ բազմածախ օճառէ աւելի

Կսպիտակացնէ ձեռքերդ :

Նիհարութեան դարման մը գիտէ՞ք
— Զէթ ներարկելով նիհարն ոչ թէ
կը գիրնայ այլ նաեւ ընդհանուր ա-
ռողջական վիճակ կը բարւոքի . այս
է նիհարութեան նորագոյն դարման ,
Սակայն որովհետեւ մենք ներարկում
ընելու դիւրութիւն չունինք ի ճեռին ,
ուստի ձէթով կերակուր ուտենք .
Ճէթին հումը աւելի օգտակար է :

Շաքարն սնո՞ւնդ է թէ համեմ :
— Ի՞նչ կ'ըսես . շաքար մարմնոյ
աճման համար անհրաժեշտ է , մկա-
նունքներն կը զօրացնէ . Ուստի մե-
ծի եւ փոքրի , աղքատի եւ հարուս-
տի առողջի եւ մանաւանդ հիւանդի
համար ամենակարեւոր սնունդ է .
Ուստի :

1. Սուրճ եւ թէյ բնաւ առանց
շաքարի մի խմէք :

2. Կաթով եւ ջրով շինուած կե-
րակուր շաքարով համեմեցէք :

3. Դժուարամարս կերակուրէ

ետեւ շաքարեղէն կերէք :

4. Փոխան հաց ու պանիրի , հաց ու ձիթապառղի , հաց ու կարագի , հաց ու անուշեղէն — բէշէլ — պորլամա — բէքմէզ — կերէք , աժան ալէ , անուշեղէն ուսող զեղացիք կարմիր , լեցուն . գեր ու կայտառ են :

5. Հնար եղածին չափ չատ պրտուղ կերէք . շաքարով եփելով :

6. Կաթնառ կանայք շաքարոտ ըմպելիներ գործածելու են , որով կաթ թէ՛ առատ եւ թէ անուցիչ կ'ըլլայ :

7. Զաւկներէդ մի զլանար շաքար . բաց ի գունաւորներէ , որ թունաւոր են :

Բնութիւն մանկանց շաքար ուտել սորվեցուցած է . շաքար , շաքար եւ դարձեալ շաքար է փոքրիկ մանկան խնդրած եւ երազած . իբր թէ անհնար ըլլար առանց շաքարի ապրիլ :

Ի վերջոյ ամէնքս ալ քիչ չատ աշխատելով զօրութիւննիս կոպառնք . զօրութեանց սպառում կը լեցնէ շա-

քար . ուստի շաքար կերէք , բարեկամա :

Ասեղը ջուրին երեսը կրնա՞յ կենալ :

— Դու ալ բան գործ չունիս եւ ջուրին վրայ ասեղ կեցնել կուզես : — Ասեղէն քիչ մը երկայն թղթիշերտ մ'առ եւ գիր հանդարտ . անշարժ ջրոյ երեսը . ասեղը թղթին վրայ զիր մեղմիւ . քիչ յետոյ թուղթ կը ծծէ ջուր եւ կընկղմի իսկ ասեղ կը լողայ :

Ձիւնին օգուտն ի՞նչ է .

— Երկրագործն թող պատասխանէ այս հարցման որ յաջող տարի մը եւ առատ հունձք ունենալու համար ձիւնին գալուստ կողջունէ . սակայն առողջաբանութեան մէջ մեծ գէր կը կատարէ ձիւն . օղը կը մաքրէ , կը զտէ մեր բոլոր աղտեղութիւններէն . զի յայտնի է որ փոշին երկրիս երեսն մինուրտին վերին խաւերն հաւաքուելով մեր չնջած օղը կապականէ , կը թիւնաւորէ : Այդ ձեան

մէն մի հատիկ հետը վար կը բերէ այս
փոշիի հատերէն շատ մը . կաւլէ օդը ,
կը մաքրէ , եւ երբ ձիւն հալներու ըլ-
լայ այս մաքրութեան արդիւնք կը
տեսնենք , զի գետինը սեւ խաւով մը
ծածկուած կ'ըլլայ : Անձրեւ ալ նոյն
մաքրութիւն կը կատարէ , սակայն
ձիւնին կատարածը արժատական մաք-
րութիւն է . ուստի ձմրան մէջ մարդու
աւելի առողջ է քան տարիին այլ ե-
ղանակաց մէջ :

Զերմի նկատմամբ ի՞նչ զգուշու-
թիւններ ընել հարկ է :

Զերմ ունեցողներուն ուշադրու-
թեան կը յանձնենք հետեւեալ կա-
նոններն :

1. Կանոնաւոր անդառութիւն
փոքր քանակութեամբ օրը 5-6 ան-
գամ , եթէ հարկ ըլլայ անգամ մ'ալ
գիշերը : — 2. Կերակուրը դիւրամարս
ըլլայ , քաղջ եւ ոչ տաք , հեղուկ
քան հաստատուն , նաեւ պէտք ե-
ղած փոփոխութիւնը ըլլայ տեսակին
մէջ :

Հաւկիթ պահելու նորագոյն կերպը
գիտէ՞ք :

— Այս՝ , առաջ կրաջրոյ մէջ կը
ձգէին պահելու հաւկիթներն . մօտերս
սակայն թարմ հաւկիթներն կը ձգեն
քառչուի լուծման մէջ — քառչուն
նէֆթի կամ պէնզինի մէջ լուծելով —
որով նոքա ամիսներով թարմ կը
մնան :

Ին արագ գացող կառախումբը
ժամը քանի՞ քիլոմէթր ճամբայ կառնէ :

— Ասկէ 15 տարի առաջ է՞ն սրբն-
թաց թրէնը ժամը 86 քիլոմէթր ճամ-
բայ կը կտրէր . այսօր Բարիզէն Ա-
միէն գացող կառախումբ 130 քիլո-
մէթր հեռաւորութիւնը 1 ժամ 21
րոպէէն կը կտրէ , որ ժամը 95 քիլո-
մէթր ըսել է : Այս է կառախումբին
այսօրուան կտարած ճամբորդու-
թիւն 1 ժամի մէջ : 95 քիլոմէթր :

Ո՞ր զինին օգտակար կը համարիք :

— Զուարճութեան , քէյֆ ընելու
համար , եթէ զիտակալ կուզէք , ոչ մի

զինի կրնամ յանձնարարել , զի մի՞նայիր զինիին գաւաթթին մէջ հրապուրիչ եւ զզլսիչ տեսքին . նա , յետսամոքս լեցունելոյ . իմի պէս կը վնասէ : Եթէ իբր դեղ կուզես օգտակարագոյն զինին յանձնարարեալ տեսնել , առ ալ բժիշկիդ զիանալու բանն է :

Կարագը ի՞նչպէս թարմ կը պահուի :

Է՞ն նոր մէթօտը կարագը դրուագելն — վէճիկով պատելն — է : Կարագը լաւ մը կը լուաս եւ ուզած ձեռվդ կառորներ կը չինես , օճառի նըման . Ասլա ճերմակ շաքարը տաք ջրոյ մէջ կը հալեցունես եւ կակուզ վրձինով մը կառորները լաւ մը կ'օծես , արագութետմբ : Տաքութիւնը կարագին վրայի խաւն կը հալեցունէ , սակայն շուտ մը չորնալով՝ կարագին կտորը ապակիի նման թաղանթով մը պատէ , որով վնասէ զերծ եւ ապահով կըլլայ :

Մարմնոյ արուեստական անդամներուն զիները զիտէ՞ք :

Սյո՛ , ուսկից պիտի տեսնէք թէ ո՛րքան անգին գանձ մ'է առողջ մարմին եւ ո՛րքան հոգատար եւ քահնդիր պարտինք ըլլալ մեր եւ մեր զաւակաց մարմնոյ անդամներուն պահպանութեան համար : Զոյգ մը բազուկ 450 ֆրանք , ձեռք ի միասին 752 ֆրանք . զոյգ մը սրունք՝ ոտքով մէկտեղ 700 ֆրանք . կեղծ քիթ 4-500 ֆրանք . կեղծ ականջ՝ բոլոր կազմածներով ի միասին 650 ֆրանք . երկու կարգ ակռայ 200-450 ֆրանք . զոյգ մը աչք 140 ֆրանք . գումար 3000 ֆրանք , իբր 150 լիրա լոկ արևելական մարմնոյ անդամոց մի քանին համար . ա՛լ հաշուէ թէ աստուածակերու մարմինդ , այն հրաշալիքն . բնութեան գլուխ գործոցն , քանի՛ միլեառներ կարժէ :

Միլեառն չեմ կրնար ըմբռնել :
Բացատրեմ . արծաթ զրամով միլեառն 5 միլիոն քիլօ կրամ կը կռէ :

սոկիզրամով 322580 քիլոկրամ . թըզ-
թաղրամով (100 ֆրանքնոց ըլլալով)-
11500 քիլոկրամ , եւ 1000 ֆրանք-
նոց թղթաղրամ ըլլալով 1780 քի-
լոկրամ , Հասկցա՞ր հիմակ :

Միլեառն տեղափոխելու համար ,
համալին կրնակը 100 քիլո բեռցնե-
լով , 1000 ֆրանքնոց թղթաղրամի
համալ պէտք է . 100 ֆրանքնոց
թղթաղրամի համար 115 համալ , ոս-
կեղրամի 3225 համալ , եւ արծաթ
դրամի համար 50000 համալ պէտք է
տեղափոխութեան համար :

Եթէ 1000 ֆրանքնոց եւ մէկ միլ-
եառ արժէք ունեցող թղթաղրամ կազ-
մենք , կունենանք 100 ական թուղ-
թէ բաղկացեալ 2000 հստոր գիրք :

Հազարն վեսասկա՞ր է .

— Անշուշտ ուստի որքան հնար
է , ջանա չհազար եւ եթէ անհնար է
ջանք ըրէ խիստ թեթեւ կերպով հա-
զալ : Թողքերն բարակ թաղանդով պա-
տած են ներսէն եւ դուրսէն , եւ
բուռն հազը , մանաւանդ երբ , ան-

ընդհատ , կրկնուի կը խղեն , կը զատ-
ուին , կը վիրաւորին այս թաղանդ-
ներն , կը նմանի ճիշդ վէրքին երեսի
մաշկը քերելով արիւնելու — , զի
եռքը անտանելի կըլլայ . այդպիսի
վէրք բնաւ բժշկուելիք չունի , թող
որ մաշկը վրան մնայ եւ հաստնայ ,
կարծրանայ :

Նա որ հազարն կը զսպէ կենաց
տարիներն կերկարէ :

Ժանդոտած պառւատակ (վիտա)
ի՞նչպէս կը քակուի .

— Զէթով օծել օգուտ չունի միշտ :
Երկաթ գաւազան մը կրակարանին
մէջ խիստ տաքցունելէ յետոյ պտու-
տակին անցած երկաթին վրայ բռնէ
մինչեւ որ լաւ մը տաքնայ . յետոյ
գիւրաւ կը քակուի . Գիտես ինչո՞ւ .
— Քանզի ջերմութիւն կընդարձակէ
երկաթը , ծակը կը մեծնայ :

Կուգեմ ամառ ատեն անձամբ սառ
շինել ինձ համար . ի՞նչ կը խրատէք :
Սառոյցի գործիք ամէն մարդ կըր-

նայ ունենալ . առ հողէ մի անօթ եւ լից 50 կրամ ջրով եւ վրան աւելցուր 30 կրամ սիւլֆաթ տը սուա ծեծուած : Այս անօթին լուծման մէջ նոսեցուր աւելի փոքր գոցուած անօթ մը , որոյ մէջ սառեցնել ուղած ջրովդ լեցուած է . մեղմ կերպով շրջան ընել տուր այս անօթին . քիչ ատենէն անօթին մէջի ջուրը կը ստոի : Սառեցնող հեղուկը մի քանի անդամ կը գործածուի : Կարծր միս կրնանք կակուզ ընել եթէ եփած ատեն վրայի մրուր առնելէ ետեւ դգալ մը ալքոլ լեցունենք մէջը ու այնպէս եփենք :

Ոսկեզօծ շրջանակները ի՞նչպէս կը մաքրուին .

Քացախով լցուած սպունգով շփէ, յետոյ պարզ ջրով լուա եւ դիր տաք տեղ մը որ չորնայ :

Քարիւղը վառելէ զատ ի՞նչ օգուտ ունի :

— Շատ եւ շատ, դեղ իսկ է . գինիի եւ օղիի տեղ ալ քարիւղ պի-

տի գործածուի . արդէն Քարիւղիք սկսեր են: Օծէ կարծրացած կոշիկներդ քարիւղով եւ ճիշդ նորի պէս կըլլան . պղինձէ սաներ եւ անօթներ քարիւղի մէջ թաթխուած լաթով մը շփէ եւ արծաթի նման կը փայլին : Քարիւղով յղկուած կահկարասիներուն բիծերը կանհետանան :



ԶՈՒԱՐՃԱԼԻՔ

Մուրացիկը . — Պարո՞ն , ընկերս , որ մէկ սոտք ունի ձեզմէ 5 փարա է ստացեր , կը հաճիք ինձ 10 փարա տալ , զի երկու սոտք ունիմ :

Հնդիկը լսելով թէ փետուրէ անկողին կակուզ կըլլայ , առաւ մի քանի փետուր զրաւ տախտակամածին վրայ եւ անոնց վրայ պառկեցաւ . Առաւօտուն ելաւ եւ սկսաւ անդամներն շփելով մենախօսել . — Ոչ , սպի-

տակ մարդիկ յիմար են, ստախօս են, փետուրէ անկողին կակուղ է կըսեն. սպիտակ մարդիկ ստախօս են, յիմար են :

Բժիշկին սպասման սրահը լեցուն է հիւանդներով. դուռը կը բացուի, բժիշկը կը գոչէ :

— Ո՞վ է է՞ն երկար ժամանակ սպասողը, թող գայ :

— Ես, կը գոչէ, գերձակը, տարի մ'է որ կը սպասեմ ձեզի համար շնած յօպիւմիս դրամին վճարման :

Հայրը. — Ո՞ւր կերթաս, տղաս, ասանկ կանուխ :

Տղան. — Վաճառատուն կերթամ, մայրիկիս համար բան պիտի գնեմ :

— Ապրիս, տղաս, բայց ստակը չկորսնցունես :

— Անհոգ եղիր, հայրիկ, մայրիկը ստակ չի տար, միշտ գրել կուտայ :

Կինս իր առողջութիւնն Տոք Զաքէի կը պարտի :

— Ի՞նչ կ'ըսես, ա'յնքան վարպետ բժիշկ է :

— Ոչ, բայց ա'յն աստիճանն կոչտ, որ կինս կը վախնայ հիւանդանալէ :

Մայր. — Մօրաքոյրին ձեռքը չե՞ս պազներ, Պօղսիկ, ի՞նչ կ'ըսեն երբ մօրաքոյրը կերթայ :

Տղան. — Ամա՞ն, հէլէ գնաց :

Պաշտօնէ հրաժարած սպասուհին լալ կսկսի երբ դռնէն դուրս կելլէ :

— Եթէ քովէս ելլելդ քեզ ա'յդ աստիճանն ցաւ կը պատճառէ, ինչո՞ւ հրաժարեցար կ'ըսէ տիկինը :

— Իմ յաջորդիս համար է որ կուլամ, տիկին, եւ ոչ ինձ համար, կ'ըսէ սպասուհին :

Կէս զիշեր է, յանկարծ բրօֆէսօր Պետրոս կարթնայ եւ կը տեսնէ որ աւազակ մը պատուհանէն ներս մտնելու վրայ է :

— Ի՞նչ կուզէք ծօ՛, զիշերուան այս պահուն, չկարդացի՞ք վարը,

դրան քով, թէ ես օրուան ո՞ր ժամուն այցելութիւն կ'ընդունիմ:

Եւրոպայի կառախումբերուն մէջ զանգակներ կան զորս ճանապարհորդք կրնան հնջեցնել եւ կառախումբ կեցնել երբ անհրաժեշտ պէտք մը կայ:

Անգամ մը ճանապարհորդներէն մին կը կեցնէ կառախումբը, կառախմբապետ կը հարցնէ մարդուն թէ ինչո՞ւ կեցուց կառախումբը:

— Կնոջս զլխարկը հովը տարաւ, կը պատասխանէ մարդը:

— Ատանկ ոչինչ բանի մը համար կառախումբը կը կեցունե՞ն, կը պօռայ պաշտօնեան բարկութեամբ:

— Ոչինչ մի՛, կ'ըսէ մարդը, եկէք եւ ձեզի ցոյց տամ կնոջս գրլխարկներուն հաշիւը:

Ամբաստանեալն դատարանէն ազատ արձակուած ատեն վիաստարանին կը մօտենայ եւ կամացուկ մը կըսէ:

— Հաւատա՛ որ ա՛յն աստիճան անմեղ ըլլալս ես իսկ չէի զիտեր:

Կոռուարար մարդ մը Տողթին կ'ըսէ:
Տանս մէջ բոլորն ալ հիւանդ են, կինս,
զաւակներս, ծառաներս. եկէք դեղ
տուէք: — Դեղ պէտք չէ, դուք պէտք
է 6 ամիս օգափոխութիւն ընէք: —
Ե՞ս, տանս էն առողջ անձը: — Դուք
պէտք է 6 ամիս բացակայ ըլլաք ձեր
ընտանեաց անդամոց առողջութեան
ի նպաստ, կը պնդէ բժիշկը:

Զեմ հասկնար թէ մեր հիւընկալը
ինչո՞ւ տեղէն չշարժիր եւ բազմոցին
վրայ միշտ միեւնոյն տեղն նստեր է,
արդեօք հիւանդ է:

— Զէ ծօ՛, սէտիրը պատռած է
տէ, վրան նստեր է քի յերեւնայ:

Եթէ իրօք անկեղծ փափաք ու-
նիք ինձ նետ ամուսնալու, ըստ
տարեց օրիորդ մը երիտասարդին,
պարտիք շատ մը բաներէ հրաժարիլ,
զոր օրինակ ծխելէ:

— Շատ լաւ, ըստ երիտասարդը:

— Եւ խմելէ, թղթախաղէ, նար-
աէ . . .

— Աւրի՞ց, հարցուց երիտասարդը :
— Անշուշտ, դուք ալ զիտէք ա-
նանկ բաներ . սրոցմէ հրաժարելու
էք, յարեց օրիորդը :

— Անշուշտ, ըսաւ երիտասարդը :
— Եւ ի՞նչ է այն, հարցուց օրի-
որդը :
— Պարտիմ իսպառ հրաժարելու
ձեզ հետ ամուսնանալու նպատակէս,
ըսաւ երիտասարդը :

Անգութ, ինչպէս կրնաք ձեր որ-
դին այդ աստիճան ծեծել, կը պոռայ
անցորդ մը մարդուն որ տղան սաս-
տիկ կը գանագոծէր :

— Իմ տղաս չէ, կը պատասխանէ
մարդը, եղբօրս որդին է, որ օդա-
փոխութեան համար մեզի հիւր է ե-
կած :

Կօշկակարին աշկերար յաճախոր-
դին առնը երթալով կ'ըսէ, եթէ եր-
կու մէծիտը վարպետիս չտանիմ, զիս
այլ եւս խանութը չի պիտի ընդունի :
— Խեղճ տղա, կ'ըսէ յաճախոր-

դը, կերեւի թէ վարպետդ քեզ ճամ-
բել կուզէ :

Գիւղացին . — Տէր պապա, հոգի
տեսայ :

Քահանան . — Ուր, օրհնած :
— Գերեզմաննոցին պատին վրայ :
— Էյ, ի՞նչ կերպարանք ունէր :
— Մեծ իշու մը կը նմանէր, տէր
հայր :

— Հանդարտեցէք, օրհնած, եւ
մէկու մը բան մի ըսէք, դուք ձեր
շուքէն էք վախցեր :

Ոստիկանը երկու գատարկաշրջիկ-
ներ ձերբակալելով մէկուն կը հար-
ցնէ . ո՞ւր կը բնակիս դուն :

— Տուն չունիմ, կը պատասխանէ
կասկածելին :

— Էյ, գուն, կը հարցնէ, սա-
տիկանը երկրորդին :

— Անոր զիմացը կը բնակիմ, կը
պատասխանէ երկրորդ գատարկա-
շրջիկը :

Խումբ մը մարդիկ ճաշարան նըստած կը ճաշեն : Մէջերնուն մին ինքզինք գովիկով եւ զիտցածներն համրելով այն աստիճան գլուխ կուռեցնէ , որ ներկայներէն մէկուն համբերութիւնը հատնելով կը գոջէ . ըսէքթէ ինչ չէք զիտեր եւ վստահ եղէք որ ես ձեր այդ չզիտցածն զիտեմ :

— Զեմ զիտեր թէ հիմա ճաշիս ստակը ինչպէս վճարեմ , եւ ուրախ եմ որ դուք պիտի վճարէք :

Տոքթո՛ր , գոչեց ատամնաբոյժին աթոռին վրայ նստող մարդը . ողջ ակռաս ալ հանեցիք փտտածին հետ մէկտեղ :

— Անհոգ եղէք . բարեկամս . ըսաւ ատամնաբոյժը պաղութեամբ . ես միայն փտտածին համար դրամ պիտի պահանջեմ :

Կառախումբին մէջ .

— Այ , սիկառիս տուփին առեր եմ առանց լուցկի առած ըլլալու . — Հոգ մի ընէք , պարոն , կ'ըսէ

դիմացը նստողը , ես ալ լուցկիի տուփին եմ առեր եւ սիկառիս տուփն մուցեր եմ : Մինչեւ Էտիրնէ կը ծըխենք միմեանց պակաս լեցնելով :

Փաստաբան ծառային .

— Ծօ սեղանին վրայի թուղթերը ինչո՞ւ կայրես կոր :

— Մինակ գրուածներն կայրեմ կոր , ճերմակներուն ձեռք չեմ զըպցներ :

Երկու որսորդներ .

— Ա . — Խեղճ նապաստակ , բանդ բուսաւ , կտակդ պատրաստէ , (հրացանը կարձակէ , գնդակ կը վրիպի . նապաստակ կը փախչի) :

Բ . — Տես , նապաստակը ինչպէս կը վազէ , կտակը գրել տալ կերթայ կոր :

Կ'ըսուի թէ կանայք առանց «յետ գրութեան» նամակ չեն գրեր : Օրիորդ մը որ հեռու երկիր կը գտնուէր իր ծնողաց երկայն նամակ մը գրեց հե-

տեւեալ յետ գրութեամբ .

— Յ. Կը ծանուցանեմ նաեւ որ
ամուսնացայ :

Ցմրան ցուրտ գիշեր մ'էր . Միր-
քէնիի կայարանէն երրորդ կարգի կառ-
քը մտաւ Օննիկ աղբար , վաթսուն-
նոց գիւղացի մը , ուր արդէն ուրիշ
ճանապարհորդ մը նստած էր եւ ոտ-
քեր կրակարանին քով կը տաքցնէր .
Մեր Օննիկ աղբար խնդրեց որ ինք
ալ տաքցնէ իր սառելու մօտ եղող
ոտքերը . Ճանապարհորդը հաճութիւն
ցոյց տուաւ , եւ սկսաւ վերէն վարէն
խօսիլ :

Օննիկ գովեց իր ճանապարհոր-
դակցին կանխամտածութիւն , որ չմսե-
լու համար հետը վառարան էր բե-
րած : Միւսը գիւղացիին պարզմու-
թենէն օգտուիլ ուզելով , չըսաւ թէ
երկաթուղիին ընկերութիւնն է այդ
կարգադրութիւն ընող , յօգուտ ու-
զեւորաց վակօնին մէջ վառարան մը
դնելով , այլ գովեց իր վառարան եւ
թէ մտադիր էր զայն 100 զուրուցի

վաճառել : Գիւղացին զինը չափա-
զանց զտաւ , սակայն սակարկութիւն
ընկելով 50 զրշ . վճարելով գնեց վա-
ռարանը : Կառախուսմբ կեցաւ , ուղե-
ւորն զուրս ելաւ եւ անցայտ եղաւ .
մեր Օննիկ աղբարն ալ վառարանը
թեւին տակ առած զուրս ելաւ :

Ո՞ւր բարով , բարեկամ , սկսան
պօռալ կայարանին պաշտօնեաներ Օն-
նիկին ետեւէն , եւ անոնց մին վազե-
լով կեցուց գիւրահաւան գեղջուկը ,
եւ իբր գող սատիկանին յանձնուեցաւ :
Պահականոց տարուելով Օննիկ պատ-
մեց եղելութիւնը . բոլոր ներկայից
անհուն զուարձութիւն պատճառեց այս
նորօրինակ խարէութիւնն : Օննիկ 50
զուրուշով ոտքերն տակցուցած եղաւ
քանզի հանճարեղ խարերան չգտնուե-
ցաւ :



ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ

Աշխարհի բոլոր տէրութեանց տառեկան պետական ծախուց համագումարն է 30 միլեառ մարդ (մէկ մարդ 6 զրշ.) . ուստի իւրաքանչիւր բնակիչ աշխարհի իրբ մէկ Անգլ. ոսկի տառեկան առուրք կը վճարէ , սոյն ծախք գոցելու համար :

Եւրոպա այս ծախքին՝ 2/3ը կամ 20 միլեառ կը վճարէ ; որով Եւրոպայի իւրաքանչիւր բնակիչ $2\frac{1}{2}$ Անգլ. ոսկի տուրք կը վճարէ :

Բոլոր աշխարհի տէրութեանց մէջ գերմանիա ամենէն շատ պետական ծախուց ենթակայ է , այսինքն տառեկան 5 միլեառ ահազին մի գումար , որ ըսել է 1/6 աշխարհի պետական ծախուց համագումարին :

Են արագ շատցող երկիրն է Միացեալ Նահանգ , ծննդոց առաւելութեամբ եւ գաղթականութեամբ , հոն հարիւրին 200 համեմատութեամբ կամ բազմամարդութիւն կամ 2,300,000 հոգի ամէն տարի :

Գաղղիան է աշխարհի միակ տէրութիւն ուր հարիւրին 20 աճում կայ , եւ մահ աւելի է քան զննունդ , Տարին 76,000 հոգի միայն կաւելնայ ի ֆրանսա :

Առ հասարակ Եւրոպացւոց կենաց միջին տեւողութիւն 31 տարի է :

Եւրոպայի էն շատ տղայք . 1-15 տարեկան , ունեցող տէրութիւն է Մեծն Բրիտանիա . 1000 բնակիչի 361 տղայ կիյնայ , քանի որ Փրանսայի մէջ 1000 բնակիչի 270 տղայ կիյնայ , որ էն քիչն է :

Ընդհակառակն Փրանսա է միակ երկիր , Եւրոպայի մէջ , ուր 16-70

տարեկան բազմաթիւ են , 686 առ
1000 , մինչ Անգլիա 612 առ 1000
ունի , որ էն քիչն է :

Նոյնպէս Փրանսա ունի բոլոր Եւ-
րոպայի մէջ էն շատ ծերունին , ուր
1000ին 44ը 70էն վեր է , մինչ ի
Հունգարիա 1000ին 18ը 70 տարե-
կանէ վեր է :

Եւրոպայի Ազգաց մէջ էն շատ
մահ Ռուսաց մէջ կը պատահի , ուր
տարին 1000ին 36ը կը մնանի . մինչ
Շուէտ-Նորվէկիոյ մէջ 1000ին 17
միայն կը մնանի :

Ռուսաստան է նաեւ այն երկիր
ուր էն շատ երախայ կը մնանի . 1000ին
300 ամէն տարի , մինչ Շուէտ-Նոր-
վէկիոյ մէջ տարին 1000 երախային
միայն 103ը կը մնանի :

Ֆրանսայի պետական պարտքն է
25 միլիառ 200 միլիոն մարդ — էն
մեծ պարտատէրն է Փրանսա , որ

տարին 1 միլիառ 10 միլիոն վճարե-
լով սոյն պարտք ջնջել կը ճգնի :

Բոլոր աշխարհի պետական պար-
տուց համագումարն է 135 միլիառ
մարդ :

Բոլոր աշխարհի ներածութեան
արժողութիւնն է 43 միլիառ 850
միլիոն մարդ . միայն Եւրոպա տարին
31 միլիառ 350 միլիոնի արժողու-
թեամբ ապրանք կընդունի :

Իսկ աշխարհի արտածութեան ար-
ժողութիւնն է 32 միլիառ 570 մի-
լիոն մարդ . միայն Եւրոպայի արտա-
ծութեան արժէքն է 4 միլիառ 370
միլիոն մարդ :

Առաջնակարգ ներածողն է Մեծն
Բրիտանիա տարեկան 9 միլիառ 570
միլիոն մարդ արժէքով ապրանք
ներս կընդունի . որ բոլոր Եւրոպայի
ներածութեան 1/3 ն է :

Հոլանտայի իւրաքանչիւր անհատ տարին 584 մարգի ապրանք կը գնէ
— էն չարն է այս — իսկ իւրաքանչիւր շինացի 1 $\frac{7}{10}$ մարգի արժողութեամբ ապրանք կընդունի . ամէն տարի :

Մեծն Բրիտանիա առաջին արտածող տէրութիւնն է , եւ տարին 5 միլիառ 835 միլիոն արժողութեամբ ապրանք դուրս կը հանէ . Ուստի Եւրոպայի ամբողջ արտածութեանց մէկ քառորդը Անգղիայէ դուրս կելէ :

Դարձեալ բազմամարդութեան համեմատութեամբ Հօլանտա է առաջին ազգ արտածութեան մէջ . հոն մէն մի անձ 493 մարգի արժողութեամբ ապրանք դուրս կը խրկէ : Էն քիչ արտածող բնակչաց համեմատութեամբ . Զինաստան է , ուր մէն մի անձ 1 $\frac{3}{10}$ մարգի վաճառք դուրս կը խրկէ :

Էն հին երկաթուղին Մեծն Բրիտանիայ ունի , ուր 1825ին առաջին

երկաթուղին մեծ հանգէսով բացուեցաւ :

Հեռագրաթէլ . ամենէն երկայն գերմանիա ունի 170,000 Հ. Մ. երկայնութեամբ թէեւ Միացեալ Նահանգներ այս մասին եւս մէկ հատիկ են աշխարհի մէջ :

ԱՆՏՕՆՅԹԵՐՁԵԱՆ

1. Արեգակնային դրութեան մէջ երկիրս Յրդ (գուցէ Կրդ) մոլորակն է :
2. Երկիրը 509,950,000 քառակուսի հազարամէթր պարունակութիւն ունի :
3. Այս պարունակութեան 26.8%
(հարիւրին $26\frac{8}{10}$ ը.) ցամաք եւ 73.2% ջուր է :
4. Եւրոպա 9,928,734 □ Հ. Մ.
380,545,000 բնկ. — Ասիա 44,275,
130 □ Հ. Մ. 850 610,000 բնկ.
— Աֆրիկէ 29,886,960 □ Հ. Մ.
157,734,000 բնկ. — Ամերիզա
39,222,910 □ Հ. Մ. 137,285,000
բնկ. — Աւսթրալիա , Բոլինէզիա

- 8,962,584 □ Հ. Մ. 6,082,000
 բնկ. — Բեւեռային ցամաք 4,228,682
 □ Հ. Մ. անծանօթ բնկ. — գու-
 մար բնակչաց 1,531,756,000.
 5. Մեծ Ովկիանոս 175,000,000 □
 Հ. Մ. 8960 մէթր խոր. — Ատ-
 լանտեան Ովկիանոս 89,860,000 □
 Հ. Մ. 8340 մէթր խոր. — Հնդիկ
 Ովկիանոս 74,890,000 □ Հ. Մ.
 6300 մէթր խոր. — Մառուցեալ
 Ովկիանոս 33,700,000 □ Հ. Մ.
 4840 մէթր խոր.
 6. Բեւեռէն հասարակածին վրայ
 քաշուած ուղիղ գիծի մը 10,000րդ
 մասը մէկ մէթրօ կը սեպեն քաղա-
 քականացեալ ազգեր .
 7. Երկրիս խորանարդ — երկայնու-
 թիւն, լայնութիւն, բարձրութիւն .
 պարունակութիւննէ 1,082,850,000
 Հ. Մ.
 9. Էն բարձր լեռն է Կառւտիսան-
 քար 8870 մէթրօ Հիմալայայի մէջ :
 10. Էն խոր ծովը Ճարոնի մօտ 8960
 մէթրօ :
 11. Եւրոպայի ամբողջ բազմամար-

Դութիւնը վերջին մարդահամարին	106,200,000
ժամանակ հաշուուած է 380 միլիոն,	52,300,000
որ 37 միլիոնի առաւելութիւն մը	43,500,000
կը ցուցնէ 1888ի հաշուին վրայ :	39,800,000
Եւրոպական Ռուսիա եւ	38,500,000
Ֆինլանդիա	31,300,000
Գերմանիա	18,000,000
Սւարիա Հունգարիա	6,500,000
Միացեալ Թագաւորու- թիւն (Անգլիա և ն.ն.)	5,800,000
Գաղղիա	5,600,000
Իտալիա	5,000,000
Շուէտ	4,000,000
Հոլանդա	3,000,000
Պուլկարիա	3,000,000
Յունաստան	2,400,000
Տանիմարքա	2,300,000
Սերպիա	2,300,000
Նորվեգիա	2,000,000

ԹՈՒԱԲԱՆԱԿԱՆՔ

ՀԱՄԱՊՈՅ ԲՈՒԱԳԻՒՏՈՒԹԵԱՆՍ ՎԵՐՁԵՐՆ «ՄԻ ՐԱՆԻ ԹԻՒԵՐՈՎ ԲԱՂՄԱՎԱՏԿՈՒԹԵԱՆ» Եւ ԲԱԺԱՆ- ՄԱՆ ԴԻՒՐԻՆ ԿԵՐԱՎԵՐԸ ցուցնելնուց առԹիւ ը- սած ենք նէ, Շատ պարագաներ կը ներկայա- նան ուրի ճարտար հնարք ի զործ դրուելով՝ զոր- ծողութիւնները կը դիւրանան եւ մեծապէս կը համառօտուին. տես Թուազ համառօտ թ. տպագր. երես 229. ասոնցմէ մին հետեւեալն ըլլալ կը կարծենք ապահովաբար, եւ կ'ուզենք Օրացուցիս ընթերցողաց ներկայել.

Ա. Երբ բաղմավատկողն ըլլայ այնպիսի
հարիւրաւոր Թիւ մը որոյ ձախակողմեան երկու
Թուանշաններէն (հարիւրաւորէն եւ տաննաւո-
րէն) կազմուած Թիւը միաւորին այսինչ բաղմա-
վատիկը ըլլայ, ինչպէս. 123, 147, 284, 369,
546 եւայն, եւայն.

123ին մէջ ձախակողմեան 12ը 3ին բառա-
պատիկն է.

147ին մէջ ձախակողմեան 14ը 7ին կըր-
կին է.

284ին մէջ ձախակողմեան 28ը 4ին եօթնա-
պատիկն է.

Ուստի Թիւ մը (հարկաւ հարիւրաւորէն մեծ,
որովհետեւ եթէ ուելի փոքր ըլլայ դիւրութեան
համար փորբը բազմապատկող ընտրել նախա-
պատիւ կը համարուի) ատոնցմէ մէկովը բազմա-
պատկելու համար պէտք է.

Նախ միաւորովը բազմապատկել,

Ձախակողմեան երկու Թուանշաններէն ձե-
ւացած Թիւը միաւորին բանիպատիկն որ են այն
բազմապատիկովն այդ զանուած արտադրեալը
բազմապատկել, այս վերջնոյն արտադրեալին
միաւորը ըստ սովորականի մէկ կարգ դէպի
ձախ զրել, ապա գումարել:

Բազմապատկել 7318ը 364ով,

» 3695ը 549ով,

» 8457ը 568ով:

7318	Նախ 4ով բազմապատկեցի, գտած
364	29272 արտադրեալս ալ՝ 9ով, ո-
29272	րովհետեւ ձախակողմեան 36ը 4ին
263448	իննապատիկն է, արտադրեալին
2663752	միաւորը մէկ կարգ դէպի ձախ շարժեցի:

3695	
549	նախ 9ով բազմապատկեցի, ելած
33255	արտադրեալն ալ՝ նով, որովհետեւ
199530	54ը 9ին վեցպատիկն է,
2028555	
8457	67656ը որ 8ով բազմապատկու-
568	թեան արտադրեալն է, բազմա-
67656	պատկեցի 7ով, վասն զի 56ը 8ին
473592	եօթնպատիկն է,
4803576	

Բ. Դարձեալ կը պատահին թիւեր (հարիւրաւոր) որոց աջակողմեան երկու թուանշանէն՝ միաւորէն եւ տասնաւորէն ձեւացած թիւն հարիւրաւորին այսինչ բազմապատիկն ըլլայ, ինչպէս. 742, 654, 832, 318 եւայլն, եւայլն.

742ին մէջ աջակողմեան 42ը 7ին վեցպատիկն է.

654ին մէջ աջակողմեան 54ը 6ին իննպատիկն է, եւայլն,

Այս պարագայիս պէտք է.

Նախ հարիւրաւորը բազմապատկել,

Աջակողմեան երկու թուանշանէն ձեւացած թիւն հարիւրաւորին բանի պատիկն որ են՝ ա-

նով այդ գտնուած արտադրեալը բազմապատ-	կել, բայց այս վերջնոյն արտադրեալին միաւորը
երկու կարգ գէպի ազ կողմէն սկսեալ շարել,	ապա գումարել:
Բազմապատկել 5238ը 742ով,	
» 3746ը 624ով,	
» 1935ը 218ով:	
5238	նախ 7ով բազմապատկեցի, գտած
742	արտադրեալս ալ՝ նով, որովհետեւ
36666	աջակողմեան 42ը 7ին վեցպատիկն
219996	է, այս վերջնոյն արտադրեալին
3886596	միաւորը երկու գէպի ազ կողմէն սկսեալ զրեցի:
3746	Բազմապատկելին նախ հարիւրա-
624	ւոր 6ով բազմապատկեցի, գտած
22476	արտադրեալս ալ՝ 4ով, որովհետեւ
89904	24ը 6ին չորսպատիկն է, այս վեր-
2337504	շին արտադրեալը երկու կարգ ազ
	կողմէն սկսեալ շարեցի:
1935	
218	2 հարիւրաւորվ արտադրեալ
3870	3870ը բազմապատկեցի 9ով, վասն
34830	զի 18ը 2ին իննպատիկն է:
421830	

Մահօքութիւն. — Կը պատահին այնպիսի միւեր որ Թէ ճախակողմեան երկու թուանշան-ներէն ձեւացածը միաւորին այսինչ պատիկը ըլ-լայ. և Թէ միանգամայն աջակողմեան երկուքն հարիւրաւորին ուրիշ մէկ պատիկն ըլլայ. ինչ-պէս 728ին մէջ՝ 72ը 8ին բազմապատիկն է. միւս կողմէն 28ն ալ 7ին բազմապատիկն է. այսպիսի պարագայից մէջ կրնանք վերեւ աւանդ-եալ Ա. կամ Բ կանոնին համեմատ կատարել.

Բազմապատիկ 1345ը 728ով,

» 2516ը 648ով.

1345	կամ	1345
728		728
10760		9415
96840		37660
979160		979160
2516	կամ	2516
648		648
20128		15096
161024		120768
1630369		1630368

ՄՈԴԱԿԱՆ ՔԱՌԱԿՈՒՄԻ

8×8=64 քիւերով

1	2	62	61	60	59	7	8
9	10	54	53	52	51	15	16
48	47	19	20	21	22	42	41
40	39	27	28	29	30	34	33
32	31	35	36	37	38	26	25
24	23	43	44	45	46	48	17
49	50	14	13	12	11	55	56
57	58	6	5	4	3	63	64

Այս աղիւսակին մէջ ինչպէս պիտի տեսնուի ամեն կողմէն թէ տողերը թէ սիւնակները և թէ տրամամիկիւնապէս գումարելով 260 գումար կ'ունենանք. ով որ շարելու կերպին գաղտնեաց բափանցէ նուեր կ'ընդունի մէկ Ուկեղէն բանալի. Պատասխանը կ'ընդունուի մինչև 1902 Ապրիլի վերջ. Մի քանի ուղիղ պատասխաններէ քուեռվ մէկ հատ կընտրուի.

Խ Ն Դ Ի Բ

Րէս Խաչէն մեռաւ, ունէր հինգ որդի և իր ժառանգութիւն 30 կով. յայտնի է որ իւրաքանչիւրին Կ'իյնայ 6 կով. բայց կովերու տուած կաթին որբանութիւնը տարբեր է. Ա կովը կուտայ 1 օխա կաթ, թ կովը 1 օխա 100 տրամ, Գ ը 1 օխա 200 տրամ եւ այսպէս հետզհետէ իրարժէ 100 տրամ աւելի. Բնչպէս բաժնելու է որ թէ իւրաքանչիւրն առնէ 6 կով եւ թէ հաւասար չափով կաթ ստանան.

Այս խնդիրն ալ գոհացուցիչ կերպով լուծողը Կ'ընդունի իրը նուեր մեկ Ռուկեզօծ Օրացոյց. Պատասխանը Կ'ընդունուի մինչեւ 1902 Ապրիլի վերջ. Մի քանի ուղիղ պատասխաններէ մեկը Կ'ընդունուի քուելով.

Տ. ՊՈԶԱՑՆԱՆ

ԱՐԵՒԵԼԵԱՆ ՎԱՐԺԱՐԱՆ

Պրուսա

27րդ. ՏԱՐԵՇՐՋԱՆ

Կ'աւանդուին սովորական ուսումներ և զիտուրիւններ, մայրենի և օտար լիգուններ, երգեհոն և դաշնակ, ձեռարուեստ և առտինին տնտեսութիւն :

Կ'ընդունուին 7-8 տարեկան մանց և աղջիկ ուսանողներ, տարույն ո և է ամսուան մէջ :

Տարեկան միայն 15 լիրա տարեթրոշակով ամէն ծախոք վարժարանս կը հոգայ, բացի ճանապարհի ծախքերէ :

Խնչպէս հիմն է կառուցանելի շինքերու պահանջ ու զիսաւոր պայման, նոյնպէս մեր զաւակաց ապագան կրթութեան և դաստիա-

բակուրեան սկզբնաւորութենքն է կախեալ,

Կան այսօր բժիշկներ, դեղագործներ, փաստարաններ, վաճառականներ, պաշտօնեայներ, ուսուցիչներ և իրենց կոչում լաւ ըմբռնող ու գործադրող կիներ և մայրեր, որք՝ յանցելում վարժարանիս մեջ առած իրենց առաջին կրօնութեան և դաստիարակութեան կը վերագրեն իրենց յաջողութիւն.

Վասն լիուլի տեղեկութեանց հաճին դիմել առ.

Գ. ՊԱՇՏԱՍԱՐԵԱՆ
Հիմադիր-Տէր-Տնօրիչն



ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Տոմարական գիտելիք	3
Խաւարմունք	7
Համառատագրութիւնք	9
Աղիւսակ շարժական մասնաց աւուրց	10
Լոյս թեթէհէմի (Թանաստեղծ.)	13
Օրացոյց	15
Ժամանակագրութիւնք	89
Ցիշատակարան	91
Օսմանեան Կայսրութիւն	97
Աւագանի Կայսերական Պալատան	100
Նախարարք Բ. Դրան	101
Մեծ պաշտօնատարք մայրաքաղաքին	103
Հպատակ հասարակութեանց պէտք	104
Օսմանեան Թղթատարութիւն	105
Հեռագրական կանոնագիր	115
Հայրապետութիւն Հայոց	122
Պատրիարքութիւն Ա. Երուսաղէմի	122
Պատրիարքութիւն Կ. Պոլսոյ	123
Հռովմէական Հայ հասարակութիւն	125
Բողոքական ժողովուրդ Թուրքիոյ	127

ՅԱԼԵԼՈՒԱԾ	
Թարոյավէպ	131
Հնասանելան	
Ծնողաց բաժին	150
Մայրերու բաժին	161
Հազիգի ախլէ	171
Առողջապահական	
Առողջապահական քերական	174
Զափաւոր կերակուր կերակրէ կեանը	181
Առատ կարագ կերէք	183
Հանգստեան օգուտները	185
Քուն	188
Չօճուզլար իշիւն մէյվէ վէ Թաթթւլար	191
Երկրագործական	
Արեգական ճառագայթից ազդեցութիւը երկրագործութեան վրայ	197
Կլիմայ	198
Հաւնոցի շուրջը. — Պաղլեղի հիւանդ.	200
— Քօյէրա	201
— Կոկորդի հիւանդութիւն	201
— Հաւերու հաւկիթ ածելը	202
Պանրաշինութիւն. — Քաշար պանիր	204

— Կրավիէր պանիր	205
— Հոլանտական պանիր	205
Կարը. — Արիւնու կաթ	207
— Կապտագոյն կաթ	208
— Թթու եւ աղի կաթ	209
— Թանձրացեալ կաթ	209
Ոչխարներու քոսը	210
— Այծերու քոսը	211
Ցորենները հիւանդութենէ զերծ պահե- լու միջոցներ. — Միջրուպի ոչնչացում	212
— Թշնամի միջատները	213
— Ուտին (Մայիս պէօնէյի)	214
— Կանթար (Գունտուզ պէօնէյի)	215
Թօրքագ. — Ա. Քիլլի Թօրքագլար	216
— Բ. Գումսալ Թօրքագլար	218
— Գ. Քիրէճի Թօրքագլար	219
— Դ. Վօլքանի Թօրքագլար	219
— Ե. Միլլի Թօրքագլար	220
Թծօկական	
Թժկական նոր զիւտ մը	222
Օձացաւ	225
Մատնաշուրթն	228
Այրեցուկներ	231
Կաթուած	234

Պատմական

Հացէ գեղահատք	240
Յիսուն տարի քուն	244
Կատուն եւ շնիկը	247
Գրկախառնում արջու մը հետ	249
Վարօրուն փէրվանէսի ալթընտա	253

Դիտական

Երկրաբանական պատահմունք	259
Զանազանք	260
Հարցարան	273
Զուարեալիք	289
Վիճակագրուկան	300
Թուարանական	308
Արեւելիան Վարժարան	315



Դ. ՊԱՇՏԱՍԱՐԵԱՆԻ

ՀՐԱՏԱՐԱԿՈՒՑԸ ԳՈՒՇԵԲԸ

ԿԵԱՆՅՑ ՏԵՐ ՅԻՍՈՒԽԻՍԻ; Ըստ Հորից Աւետարանց. — Պատկերազարդ:

3 դր.

ԿԵԱՆՅՑ ՄՐԹՈՑ ԱՌԱՔԵԼՈՑ. — Պատկերազարդ:

5

ՄԱՅՐԻԿԻՆ ԱՌԱՋՆՈՐԴԸ. — Տոբք. Ա. Է.
Մէլ. (Թարգմ.)

2

ԱՇՆԱՆ ՏԵՐԵՒՆԵՐ. — Բ. Տպագրութիւն:

4

ԿԸ գտնուի բոլոր հայ գրավաճառաց քով :

Կեդրոնատեղի

Պ. ՊԱԼԵՆՑ Գրատուն

Զաքմաքճլար, թիւ 20

Համազգային Օրացույցի ՀԱՄԱՌՈՑ
ալ հրատականութեած, կը գտնուի բոլոր Հայ,
զրավաճառականութեած:

Գրք 40 Փարա

Կեղրոնատեղի Յ. ՄԱՏԹԵՈՍԵԱՆ վաճառատու
թիւ 27, Ֆրենքաննըլար Եօդուշու կ. Պոլի.

ԳԻՆ Յ ՂՐԵ.

۲۱۹ صفر ۲۶۹

۱۴۰ نومرسوی

Լմշեր

059

7 - 34

6785

2013

«Ազգային գրադարան



NL0031982

